ՄԻՏՎԱԾ ՀՈՒՇԱԳՐԵՐԸ**

Գավառի պետական համալսարանը, բացի նշված Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող Էրազմոս-Մունդոս, Տեմպոս և Էրազմոս+ ծրագրերի շրջանակներում համագործակցության պայմանագրերից, երկկողմանի պայմանագրեր և փոխըմբռնման հուշագրեր է կնքել հետևյալ արտասահմանյան բուհերի հետ՝

- Հռոմի Սապիենզա համալսարան, Իտալիայի Հանրապետություն
- Կոռունայի համալսարան, Իսպանիայի Թագավորություն
- Սերբիայի Նիշի համալսարանի իրավաբանական ֆակուլտետ, Սերբիայի Հանրապետություն
- Մոլդովայի տեխնիկական համալսարան, Մոլդովայի Հանրապետություն
- Մոսկվայի պետական տարածաշրջանային հումանիտար ինստիտուտ, Ռուսաստանի Դաշնություն
- Սանկտ-Պետերբուրգի տնտեսագիտական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն
- Վիտեբսկի պետական տեխնոլոգիական համալսարան, Բելառուսի Հանրապետություն
- Ռուսեի Անգել Կանչևի անվան համալսարան, Բուլղարիայի Հանրապետություն
- Վրաստանի Թելավիի պետական համալսարան, Վրաստանի Հանրապետություն
- Կուրսկի հարավ-արևմտյան պետական համալսարան, Ռուսաստանի Դաշնություն

Gavar State University International Cooperation Memoranda

In addition to the European Union-funded Erasmus Mundus, Tempus and Erasmus+ Cooperation programmes Gavar State University has signed bilateral agreements and Memoranda of understanding with the following foreign universities:

- Sapienza University of Rome, Italy
- University of Coruna, Spain
- Law Faculty of the Nish University of Serbia, Republic of Serbia
- Technical University of Moldova, Moldova
- Moscow State Regional Institute of Humanities, Russia
- St. Petersburg State University of Economics, Russia
- *Vitebsk state technological College, Belarus*
- *"Angel Kanchev" University of Ruse, Bulgaria*
- Telavi State University, Georgia
- South-West state university of Kursk, Russia

**2016-2017 ուսումնական տարում ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմը
և ուսանողները ՀՀ-ում ու արտերկրում մասնակցել են հետևյալ
գիտաժողովների և աշխատաժողովների**

Հակոբյան Հրանուշ

- 2016թ. հուլիսի 11-14-ՀՀ, Երևան, «Հայաստան. ստեղծենք միասին» երիտասարդական հավաք,
- 2016թ. հուլիսի 22-28-ՀՀ, Երևան, «Իմ Հայաստան» համահայկական 3-րդ փառատուն,
- 2016թ. օգոստոսի 25-26-ՀՀ, Երևան, «Հայկական աշխարհը համացանցում» խորագրով գիտաժողով,
- 2016թ. սեպտեմբերի 23-ՀՀ, Երևան, Ճարտարապետների և ճարտարագետների համահայկական ընկերակցության 3-րդ աշխատաժողով,
- 2016թ. հոկտեմբերի 11-ՀՀ, Երևան, «Գալուստ Կյուլպեկյան հիմնարկություն» հիմնադրման 60-ամյակին նվիրված գիտաժողով,
- 2016թ. հոկտեմբերի 20-24- ՀՀ, Երևան, ԼՂՀ, Ստեփանակերտ, Լրագրողների 8-րդ համահայկական համաժողով՝ «Հայոց պետականությունը՝ միասնության առանցք» խորագրով,
- 2016թ. դեկտեմբերի 15-ՀՀ, Երևան, ազգային-պետական գործիչ, գրող Ավետիս Ահարոնյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով,
- 2017թ. մայիսի 8-Լեհաստան, Վարշավա, Լեհաստանի հայերի երկրորդ համաժողով,
- 2017թ. հունիսի 1- Արգենտինա, Բուենոս Այրես, Հայ բժիշկների միջազգային 12-րդ համագումար,
- 2017թ. հունիսի 9- ՀՀ, Երևան, «Լեհաստանի հայ համայնք. անցյալ և ներկա» խորագրով գիտաժողով՝ նվիրված Լեհաստանի հայ համայնքի 650-ամյակին,
- 2017թ. հուլիսի 13-Լիբանան, Բեյրութ, «Սփյուռքը նոր հորիզոնների դիմաց. Սփյուռքահայի ինքնահասկացողությունը» խորագրով աշխատաժողով,
- 2017թ. սեպտեմբերի 11-Իտալիա, Վենետիկ, Սուրբ Ղազար կղզում Մխիթարյան միաբանության հաստատման 300-ամյակին նվիրված գիտաժողով:

Հակոբյան Հրանուշ, Կատվայան Վիկտոր

- 2016թ. հոկտեմբերի 12-ՀՀ, Երևան, Հրաչյա Աճառյանի ծննդյան 140-ամյակին նվիրված միջազգային գիտաժողով,
- 2017թ. փետրվարի 20-ՀՀ, Երևան, Մայրենի լեզվի օրվան նվիրված աշխատաժողով:

Հակոբյան Հրանուշ, Հակոբյան Ռուզաննա, Կատվայան Վիկտոր

- 2017թ. սեպտեմբերի 18-21-ՀՀ, Երևան, Հայաստան-Սփյուռք 6-րդ համաժողով:

Հակոբյան Հրանուշ, Մուրադյան Պապին

- 2016թ. հոկտեմբերի 20-24-ՀՀ, Երևան, ԼՂՀ, Ստեփանակերտ, Լրագրողների 8-րդ համահայկական համաժողով՝ «Հայոց պետականությունը՝ միասնության առանցք» խորագրով:

Հակոբյան Ռուզաննա

- 2017թ. ապրիլի 18-22 - Բելգիա, Գենտ, ԵՄ «TEMPUS.ARMENQA» ծրագրի աշխատաժողով:

Հակոբյան Ռուզաննա, Ապրոյան Արսեն, Թոռչյան Լիլիթ, Խաչատրյան Սիրանուշ

- 2016թ. հոկտեմբերի 11-12- ՀՀ, Երևան, ԵՄ «TEMPUS.LeAGUe» ծրագրի աշխատաժողով:

Կուտուզյան Նելլի

- 2016թ. սեպտեմբերի 9 – Հայաստան, Երևան, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի և «ՏԵՄՊՈՒՍ ՄԱՀԱԹՄԱ- «Բարձրագույն կրթության կառավարում մագիստրոսական կրթական ծրագրի մշակում, կրթական բարեփոխումներ իրականացնող առաջնորդների պատրաստում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում վերապատրաստում:
- 2017թ. փետրվարի 23 - Որակի ապահովման շահակիցների 4-րդ համաժողով՝ «Որակը լսարանում՝ գնահատման համակարգի բարելավում» թեմայով վերապատրաստում Հայաստանի ամերիկյան համալսարանում:

Կուտուզյան Նելլի, Ավետիսյան Վարազդատ, Բաղդոյան Շուշան

- 2017թ. հուլիսի 9-21 – Իտալիա, Թուրին, վերապատրաստում ԵՄ «Էրազմոս+ DOCMEN» ծրագրի շրջանակում Իտալիայի Հանրապետության Թուրինի պոլիտեխնիկական համալսարանում՝ «Ապագայի հասարակության կառուցումը» խորագրով ամառային դպրոցում:

Կուտուզյան Նելլի, Ավետիսյան Կարինե

- 2016թ. հոկտեմբերի 13 – Հայաստան, Երևան, Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի «Բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխումները ներառականության համատեքստում» միջազգային գիտաժողով:

Ապրոյան Արսեն

- 2016 թվականի օգոստոսի 7-13, Մոլդովա, Քահուլ, «Tourism Paths» ծրագրի աշխատաժողով,
- 2016 թվականի օգոստոսի 22-23, Հայաստան, Երևան, «Էրասմոս Պյուս DOCMEN» եվրոպական ծրագրի աշխատանքային հանդիպում,
- 2016 թվականի սեպտեմբերի 27-հոկտեմբերի 2, Դանիայի Թագավորություն, Օրհուս, «TEMPUS.Armenqa» ծրագրի աշխատաժողով,
- 2016 թվականի հոկտեմբերի 29- նոյեմբերի 1, Հայաստան, Դիլիջան, ՄԱԿ-ի ՓԳՀ-ի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված աշնանային դպրոց,

- 2016 թվականի նոյեմբերի 20-24, Վրաստան, Թբիլիսիի պետական համալսարան, ԵՄ «TEMPUS.PICASA» ծրագրի աշխատաժողով,
- 2016 թվականի նոյեմբերի 28-29, Ուկրաինա, Կիև, «Էրասմուս +» ծրագրի սեմինար-աշխատաժողով,
- 2017 թվականի մարտի 6-12, Ուկրաինա, Կիև, ԵՄ «TEMPUS.PICASA» ծրագրի աշխատաժողով,
- 2017 թվականի ապրիլի 1-7, Իսպանիա, Կոռունա, «Էրասմուս +» ծրագրի, վերապատրաստում,
- 2017 թվականի մայիսի 2-8, Մոլդովա, Մոլդովայի տեխնիկական և Ալեկո Բալթի Ռուստ պետական համալսարաններ, մշտադիտարկման անցկացում,
- 2017 թվականի հունիսի 11-15, Վրաստան, Թբիլիսի, ԵՄ «TEMPUS.LeAGUe» ծրագրի ամփոփիչ աշխատաժողով,
- 2017 թվականի հունիսի 18-25, Պորտուգալիա, Լիսաբոնի տեխնիկական և Լեիրայի համալսարաններ, ԵՄ «TEMPUS.RETHINK» ծրագրի ամփոփիչ աշխատաժողով:

Հակոբյան Արսեն

- 2016 թվականի հուլիսի 12-15, Թուրքիա, Ստամբուլ, «Գործելով միասին» խորագրով սեմինար,
- 2016 թվականի հոկտեմբերի 13-14, Հայաստան, Երևան, Ռուսաստանի Դաշնության հայկական սիյուռքը խորագրով միջազգային գիտաժողով,
- 2016 թվականի դեկտեմբերի 13-14, Ուկրաինա, Լվով, «Ukraine – Europe – East: Problems and perspectives of modern humanities (to the 90-anniversary of Yaroslav Dashkevych's birthday)» թեմայով միջազգային գիտաժողով,
- 2017 թվականի մայիսի 20-21, Հայաստան, Ծաղկաձոր, «Հովսեփ Օրբելին ու հայ մշակութային ժառանգությունը» խորագրով գիտաժողով,
- 2017 թվականի հունիսի 26-30, Բելառուս, Մինսկ, «Ընտանիքի մարդաբանություն. հետազոտությունների պատմական, սոցիալ-տնտեսական, կենսաբանական ասպեկտները» խորագրով միջազգային գիտաժողով:

Խաչատրյան Սիրանուշ

- 2016թ. նոյեմբերի 21-22 - Վրաստանի Իվանե Զավախիշվիլի անվան Թբիլիսիի համալսարան, ԵՄ «TEMPUS PICASA» ծրագրի շրջանակում բուհերի միջազգայնացմանը նվիրված աշխատաժողով,
- 2017թ. մարտի 12-18 - Բուլղարիայի Հանրապետության Անգել Կանչևի անվան Ռուսեի համալսարան, դասախոսական աշխատանք՝ «Էրազմուս+» ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում,
- 2017թ. ապրիլի 19-21- Բելգիայի թագավորության Գենտի համալսարան, ԵՄ «TEMPUS ARMENQA» ծրագրի շրջանակում Հայաստանում ազգային և սեկտորիալ որակավորումների շրջանակների իրականացմանը նվիրված աշխատաժողով,
- 2017թ. ապրիլի 1-7 - Իսպանիայի թագավորության Լա Կորունյայի համալսարան, դասախոսական աշխատանք՝ «Էրազմուս+» ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում:

Մելիքյան Հենրիկ, Հակոբյան Մամիկոն, Ավետիսյան Վարազդատ

- 2017թ. հունիսի 18-30 – Բուլղարիա, Սոֆյա, Սոֆիայի տեխնիկական համալսարանում միկրո և նանոտեխնոլոգիաների վերաբերյալ վերապատրաստում:

Ավետիսյան Վարազդատ

- 2017թ. մարտի 12-18 - Բուլղարիա, Ռուսե, Ռուսեի համալսարանում դասախոսական աշխատանք:

Մարգարյան Անահիտ, Հովհաննիսյան Մարինե

- 2016թ. սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 10 – Իսպանիա, Կոռունա, ԵՄ կրկնակի աստիճանաշնորհման «RETHINKe» ծրագրի շրջանակներում վերապատրաստում Կոռունայի համալսարանում:

Մխիթարյան Ազնիվ

- 2017թ հուլիսի 3-19 - Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Ուոումչի, Շանհայ, Հանչժոու, ՉԺՀ առևտրի նախարարություն՝ Սինգյան-ույգուրական ինքնավար մարզի առևտրի դեպարտամենտի կոմերցիոն համագործակցության և գիտատեխնիկական փոխանակման կենտրոնում վերապատրաստում:

Մուրադյան Վահագն

- 2017թ. - Հայաստան, Երևան, «Արդյունավետ երիտասարդ գիտաշխատող (մինչև 35 տարեկան)- 2017» մրցույթի հաղթող:
- 2017թ ապրիլի 20-21 – Ղազախստան, Ալմաթի, «Water management in Central Asia and the Caucasus for agricultural, industrial and urban applications» ծրագրի շրջանակում Գիտության և տեխնոլոգիայի միջազգային կենտրոնի սեմինար:
- 2017թ սեպտեմբերի 11-13 – Վրաստան, Թբիլիսի, Վրաստանի գյուղատնտեսական համալսարան, «GOFC-GOLD START Caucasus Network» ծրագրի մեկնարկային հանդիպում:
- 2017թ հունիսի 25 – հուլիսի 6 – Գերմանիա, Բեռլինի Համբուրտի համալսարան, Աշխարհագրության ինստիտուտ, DAAD ծրագրի շրջանակներում դաշտային պրակտիկա և սեմինար «Հողային գիտություն, լանդշաֆտ» թեմայով:
- 2017թ հունիսի 16 – 20 – Հունգարիա, «Trans-Atlantic training-2017» ծրագրի շրջանակներում «Multi-sensor Approaches in Studying Land Use/Land Cover Change» թեմայով վերապատրաստում:

**ԳՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2016-2017 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանում գրանցվեցին նշանակալից հաջողություններ և ձեռքբերումներ ինչպես նոր գործընկերային հարաբերությունների հաստատման տեսակետից, այնպես էլ բուհում ընթացող կրթական և գիտական գործունեության որակի արտաքին գնահատման տեսակետից: Համալսարանը անցնելով ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց՝ միջազգային և ազգային փորձագետների եզրակացությունների հաշվառմամբ, Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ հավատարմագրվեց 4 տարի ժամկետով, և այդ որոշումը արձանագրվեց ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման պետական գրանցամատյանում:

Հաշվետու ուստարում շարունակաբար իրականացվել են բուհի առաքելությունից բխող և համալսարանի զարգացման ռազմավարական և հակակոռուպցիոն ծրագրերով նախատեսված բազմաբնույթ աշխատանքներ:

**Հաշվետու ուսումնական տարում ուսանողական համակազմը համալրվել է՝
ներքոհիշյալ ցուցանիշներին համապատասխան.**

➤ Բակալավրիատի ընդունելություն՝

1. 2016թ.-ին համալսարանի առկա ուսուցման բակալավրիատի կրթական ծրագրերի գծով ընդունվեց 57 դիմորդ:
2. Հեռակա ուսուցման համակարգում ընդունվեց 164-ը:

➤ Մագիստրատուրայի ընդունելություն՝

2016թ. մագիստրատուրա ընդունվեց բակալավրիատի 96 շրջանավարտ:

➤ Ասպիրանտուրայի ընդունելություն՝

Համալսարանը 2016թ. ստացավ բարձրագույն կրթության երրորդ աստիճանում կրթության իրականացման թույլտվություն՝ լիցենզիա «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ, ապա ՀՀ Կառավարության որոշմամբ ԳՊՀ-ին հատկացվեց անվճար ուսուցմամբ 1 տեղ: 2016թ.-ին ԳՊՀ ասպիրանտուրա ընդունվեց մեկ դիմորդ:

➤ Շարունակական կրթության կարգով ընդունելություն՝

Համալսարանում 2016-2017 ուսումնական տարում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունն ավարտելուց հետո շարունակական կրթություն ստացողների քանակը կազմում է 29 ուսանող (նախորդ ուստարում՝ 28-ը):

➤ Երկրորդ մասնագիտության կարգով ընդունելություն՝

Երկրորդ մասնագիտություն ստացողների թիվը՝ 16 ուսանող (նախորդ ուստարում՝ 12):


• Տեղափոխություններ՝

Հանրապետության և արտերկրի պետական բուհերից հաշվետու տարում Գավառի պետական համալսարան է տեղափոխվել 15 ուսանող, ԳՊՀ-ից՝ այլ բուհ ուսանող չի տեղափոխվել:

• Վերականգնումներ՝

Հաշվետու ուստարում ուսանողական իրավունքները վերականգնել են 121 ուսանող:


ԳՊՀ ուսանողական համակազմի համալրման ցուցանիշների համեմատումը հաշվետու և նախորդ ուստարիներին




2016-2017 ուստարում ուսանողների թիվը առկա բակալավրիատում կազմում էր 385 ուսանող, մագիստրատուրայում 127, հեռակա ուսուցման համակարգում 629, ընդամենը 1141 ուսանող:

Առաջին կիսամյակում առկա բակալավրիատում և մագիստրատուրայում հաշվետու ուստարում ուսանողների ակադեմիական առաջադիմությունը կազմել է 77,8% (նախորդ ուստարում՝ 79,6%):

2016-2017 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքներն՝ առկա ուսուցման համակարգում




Ուսանողների առաջադիմության համեմատումը նախորդ և հաշվետու ուստարիների առաջին կիսամյակներում




Երկրորդ կիսամյակում առկա բակալավրիատում և մագիստրատուրայում հաշվետու ուստարում ուսանողների ակադեմիական առաջադիմությունը կազմել է 74,3%:

2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքներն՝ առկա համակարգում




2016-2017 ուստարում համալսարանի առկա բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման արդյունքներով 131, և մագիստրատուրայի ավարտական կուրսերի 29 ուսանողի շնորհիվ համաեվրոպական նմուշի դիպլոմի երկլեզու հավելված՝ հայերեն և անգլերեն, այսպիսով բուհն ավարտեց առկա ուսուցման ֆակուլտետների ավարտական կուրսերի ուսանողների 100%-ը, նախորդ տարվա 98.87%-ի դիմաց: Նախորդ տարիների առկա ուսուցման բակալավրիատի 3 նախկին ուսանողի թույլատրվեց մասնակցել ամփոփիչ ատեստավորմանը, ովքեր հաջողությամբ հանձնելով ամփոփիչ ատեստավորման քննությունները՝ ավարտեցին բուհը: Հաշվետու ուստարում բուհն ավարտեց հեռակա ուսուցման բակալավրիատի թվով 213 շրջանավարտ: Հեռակա ուսուցման ֆակուլտետն ավարտեց նաև վեցամյա կրթության համակարգում ուսանած թվով 2 շրջանավարտ, իսկ նախորդ տարիներին բուհը չավարտած հեռակա ուսուցմամբ 25 նախկին ուսանողի թույլատրվեց մասնակցելու ամփոփիչ ատեստավորմանը, նրանցից դրական գնահատական ստացան 25-ը (ընդհանուր թվով՝ 213 շրջանավարտ), իսկ 10 ուսանող անբավարար գնահատական ստանալու և չներկայանալու պատճառով չավարտեց համալսարանը, այսինքն՝ բուհն ավարտեց ուսանողների ընդհանուր թվի 95%-ը (2015-2016 ուստարում 89.1%-ը):

2016-2017 ուսումնական տարվա շրջանավարտների թվաքանակի վերաբերյալ տվյալներ




Գավառի պետական համալսարանի 2016-2017 ուսումնական տարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ տվյալներ




Ուսանողներին ֆինանսական աջակցման ծրագրերը բազմաթիվ են եղել: Առկա և հեռակա ուսուցման ֆակուլտետներում սովորող ուսանողները ֆինանսական աջակցություն են ստացել պետական բյուջեից, համալսարանի միջոցներից, գործընկեր կազմակերպություններից, ԳՊՀ բարերարներից և տարբեր հիմնադրամներից: Ուսանողների լրիվ փոխհատուցմամբ անվճար և վճարովի տեղերի փոխատեղման կանոնների համաձայն, հաշվետու ուստարվա ակադեմիական առաջադիմության ցուցանիշներով, առկա բակալավրիատի 13 ուսանող և մագիստրատուրայի 3 ուսանող փոխատեղման մրցույթի արդյունքում փոխեցին իրենց կարգավիճակը:


2016-2017 ուստարում ֆինանսական աջակցություն ստացած առկա բակալավրիատի ուսանողների քանակի վերաբերյալ տվյալներ



2016-2017 ուստարում ֆինանսական աջակցություն ստացած մագիստրատուրայի ուսանողների քանակի վերաբերյալ տվյալներ




2016-2017 ուստարում ֆինանսական աջակցություն ստացած հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների վերաբերյալ տվյալներ



Համալսարանում մասնագիտական բարձր որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմով մասնագիտական կրթական ծրագրերի ապահովման խնդիրը մնացել է ուշադրության կենտրոնում և շարունակական աշխատանքներ են իրականացվել առաջատար դասախոսներով համալրման, գործնական ոլորտից ներգրավված դասախոսներին կրթական գործընթացին ինտեգրման, ինչպես նաև երիտասարդ մասնագետների ակադեմիական աջակցման ուղղությամբ՝ նրանց որակավորման բարձրացման, մասնագիտական, մանկավարժական վերապատրաստումների միջոցով:

2016-2017 ուսումնական տարում ԳՊՀ դասախոսական կազմում գիտական աստիճաններ ունեցողների վերաբերյալ տվյալներ



Հաշվետու ուստարում համալսարանում մշակվեցին «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով ասպիրանտական գիտակրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթեր: Այդ գործում էական աջակցություն էր եվրոպական կրթական հաստատությունների հետ համագործակցությունը, նրանց փորձի ուսումնասիրումը, միջբուհական գիտական, հետազոտական ծրագրերի մշակումն ու իրականացումը, ինչպես նաև ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրերի իրականացումը: Ասպիրանտուրայի գիտակրթական ծրագրում ներառվեցին դասընթացներ, որոնք միտված են սովորողներին զինելու խոր մասնագիտական գիտելիքներով ու կարողություններով, տիրապետելու սոցիոլոգիական հետազոտությունների, հետագա կարիերայի կառավարման և աշխատանքի որոնման ձևերին ու կառուցակարգերին, ինչպես նաև հետազոտության թեմային առնչվող իրավական ակտերի ուսումնասիրության մեթոդներին:

ԵՄ «TEMPUS. VERITAS» ծրագրի շրջանակներում բուհում իրականացվեց ասպիրանտական ծրագրի ինքնավերլուծություն՝ ՈԱԱԿ-ի կողմից մշակված չափանիշներին և չափորոշիչներին համապատասխան, ապա միջազգային փորձագետների մասնակցությամբ իրականացվեց ծրագրի արտաքին գնահատման գործընթաց: Ծրագրի իրականացման կանոնակարգային փաստաթղթերը, կրթական գործընթացը գնահատվեցին դրական, և առաջարկություններ արվեցին հետագա ընթացքի վերաբերյալ:

Տարածաշրջանային բուհ լինելու հանգամանքից ելնելով՝ ասպիրանտական ծրագրում հետազոտության ուղղվածություն սահմանվեց, հաշվի առնելով ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման համար կարևոր և հեռանկարային ոլորտները՝ գործնական արդյունքներ ապահովելու համար: Ասպիրանտի գիտական ղեկավարի և հետազոտության թեմայի հաստատման համար համալսարանը դիմեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտխորհրդին, որտեղ հաստատվեց ասպիրանտի գիտական ղեկավարը և հետազոտության թեման: Տարեվերջին իրականացվեց ասպիրանտի ատեստավորման գործընթաց:

ՀՀ բուհերի վարկանիշավորման համակարգում, բուհերի դասակարգման համապատասխան խմբում համալսարանը պահպանեց երկրորդ տեղը՝ զիջելով Հայաստանում ամերիկյան համալսարանին:

Համալսարանում ընթացող ուսումնական, գիտական, հետազոտական, լուսավորչական գործընթացների կանոնակարգային հիմքերի մշակումն ու հաստատումը կամ բարելավումը հաշվետու ժամանակահատվածում ևս կարևորելով՝ համալսարանի գիտխորհրդի հաստատմանն է ներկայացվել «ԳՊՀ որակի ապահովման բաժնի գործունեության կանոնակարգը», որում լրամշակվել են Որակի ապահովման բաժնի գործառույթները, հստակեցվել են նպատակներն ու խնդիրները, բաժնի կառուցվածքն ու կառավարման կառուցակարգերը:

Համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի ընդհանուր մասնագիտական, մանկավարժական իրազեկությունների շարունակական զարգացմանը նպաստելու նպատակով մշակվեց և հաստատվեց «ԳՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագրի իրականացման կանոնակարգը»:

ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բնագրերին ներկայացվող ձևավորման, տեխնիկական և բովանդակային պահանջների, չափանիշների և հրապարակման պայմանների կանոնակարգման նպատակով մշակվեց և հաստատվեց «ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի բնագրերի ձևավորման և ներկայացման կանոնակարգը»:

Մասնագիտական կրթական ծրագրերի վերջնարդյունքների, ծրագրի բովանդակության, դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդների, դասընթացներին հատկացվող լսարանային, ինքնուրույն աշխատանքների ժամաքանակների, կրթական վերջնարդյունքներին հասնելու համար պահանջվող աշխատածավալի և դասընթացներին հատկացվող կրեդիտների փոխկապակցվածության հիմնավորման նպատակով մշակվեց «ԳՊՀ-ում կրթական վերջնարդյունքներով պայմանավորված մասնագիտական կրթական ծրագրերի մշակման և ուսումնական մոդուլներին հատկացվող կրեդիտների հաշվարկի ուղեցույցը»:

Վերոնշյալ կանոնակարգերի և ընթացակարգերի դրույթներն արդեն հաշվետու ժամանակահատվածում գործարկելու նպատակով իրականացվել են դասախոսական, ուսումնաօժանդակ կազմի, կրթական ծրագրերի ղեկավարների և խորհրդատուների վերապատրաստման դասընթացներ, որոնց ընթացքում, մասնավորապես, անդրադարձել են Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների բնութագրիչներից կրթական ծրագրերի, ապա նաև դասընթացների վերջնարդյունքների բխեցման մեթոդաբանությանը, կրթական վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակմանը, կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակը գնահատելու ձևերի և չափանիշների մշակմանը, կրթական վերջնարդյունքներին հասնելու համար պահանջվող աշխատածավալի և դասընթացներին հատկացվող կրեդիտների հատկացմանը: Այս ուղղությամբ աշխատանքները շարունակական բնույթ են կրում, և ընթացիկ ուստարում ևս վերապատրաստումներ են իրականացվելու, որի արդյունքում նորացվելու են առարկայական ծրագրերն ու կրթական ծրագրերի մասնագրերը: Դասախոսների որակավորման բարձրացման տարբեր մոտեցումներ են կիրառվել, մասնավորապես հաշվետու ժամանակահատվածում համալսարանում կայացավ Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի փորձագետների սեմինար հանդիպումը բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի հետ՝ քննարկելու բարձրագույն ուսումնական հաստատությունների ռազմավարական ծրագրերի պլանավորման և կառավարման հիմնախնդիրները:

ԵՄ «TEMPUS . ARMENQA» ծրագրի շրջանակում մշակված «Որակի պահովման ազգային շրջանակը և դրա կիրառումը բուհերում» թեմայով վերապատրաստումների դասընթացը նվիրված էր Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների և կրթական ծրագրերի վերջնարդյունքների համադրությանը, դրանցից բխեցված դասընթացների վերջնարդյունքների սահմանման մեթոդաբանությանը:

Եվրոպական միության «TEMPUS . GOVERN- Ինքնավարության և հաշվետվողականության խթանում. բարձրագույն կրթության ոլորտում Բոլոնիայի սկզբունքներին համահունչ արդյունավետ փոփոխությունների կառավարման արդի համակարգի զարգացում» ծրագրի շրջանակներում աշխատանքներ են ծավալվել բուհում վարչարարության հիմնական գործընթացների վերանայման, նոր գործիքների ու

մեթոդների մշակման և ներդնման ուղղությամբ, որոնք ավելի թափանցիկ և օպերատիվ կդարձնեն համալսարանի կառավարումը:

Միաժամանակ, ծրագրի շրջանակում համալսարանում քննարկվեց Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի կողմից նախագծված «Էլեկտրոնային դեկանատ» ծրագիրը: Քննարկման արդյունքների հաշվառմամբ լրամշակվեց ծրագիրը, և մեկնարկեցին համակարգում բուհի վերաբերյալ տեղեկատվության ներմուծման աշխատանքները, որոնք ավարտին հասցնելով՝ կապահովեն ընթացիկ գործընթացների էլեկտրոնային կառավարումը:

Ինչպես վերը նշվեց, հաշվետու ուստարում իրականացվեցին աշխատանքներ բուհի ենթակառուցվածքային հավատարմագրման ուղղությամբ: Կառուցվածքային բոլոր ստորաբաժանումների, ապա նաև համահամալսարանական մակարդակով Որակի ապահովման ազգային կենտրոն (ՈԱԱԿ), ներկայացվեց ինքնավերլուծության զեկույց, որում կատարված SWOT վերլուծություններին մասնակցել էին ուսանողներ, շրջանավարտներ, դասախոսներ, գործատուներ, ներքին և արտաքին այլ շահառուներ:

Սահմանված ընթացակարգով ՈԱԱԿ-ի կողմից համալսարանում կազմակերպեց միջազգային և ազգային փորձագիտական խմբի քառօրյա այց, որի ընթացքում նախատեսված էր փորձագիտական խմբի հանդիպում-քննարկումներ ԳՊՀ ռեկտորի, պրոռեկտորների, դեկանների, ամբիոնների վարիչների, պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների, շրջանավարտների, գործատուների հետ: Իրականացվեցին փաստաթղթերի ուսումնասիրություն և ռեսուրսների դիտարկում: Այցի ընթացքում ուսումնասիրությունների արդյունքների, կատարված աշխատանքների, ներկայացված զեկույցի և թիրախային խմբերի արձագանքի, արձանագրված թերությունների բարելավման ծրագրի հաշվառմամբ՝ Հավատարմագրման հանձնաժողովի որոշմամբ Գավառի պետական համալսարանին շնորհվեց ինստիտուցիոնալ հավատարմագրում չորս տարի ժամկետով: Սահմանված կարգով համալսարանը ներկայացրեց փորձագիտական խմբի զեկույցում նշված թերությունների բարելավման պլան:

Հաշվետու ուստարում համալսարանում կազմակերպվեց ամենամյա 19-րդ գիտաժողովը՝ նվիրված ԳՊՀ պատվավոր բարերար, ամերիկահայ գործիչ, մեծ մարդասեր Ժիրայր Նիշանյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին: Գիտաժողովի արդյունքում տպագրության երաշխավորվեց թվով 75 հեղինակների 64 հոդված:

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են պրոֆեսորադասախոսական անձնակազմի կողմից գիտահետազոտական և ուսումնամեթոդական նյութերի տպագրման աշխատանքները: Համալսարանի գիտխորհրդի կողմից տպագրության են երաշխավորվել ԳՊՀ դասախոս Սամվել Խաչատրյանի ներքոհիշյալ գրքերը.

- «Հայկական զրադաշտական և վաղբրիստոնեական իրավունքի սկզբունքները»,
- ««Հաճախապատում ճառքի» Ի ճառում առկա Արշակունիների հարստության ապագային վերաբերող կանխագուշակության տրամաբանական, իրավաբանական, արժեքանական, սոցիոլոգիական և պատմական վերլուծությունը».

- ««Հաճախապատում ճառքի» հեղինակի և հայկական այբուբենի ստեղծման հարցերի շուրջ»,
- «Ամբարտավանությունը որպես զրադաշտական և վաղքրիստոնեական իրավունքի նորմ»:

Հաշվետու ժամանակահատվածում գիտխորհուրդը ներքոհիշյալ դասախոսներին շնորհել է դոցենտի կոչում և համապատասխան ընթացակարգով ներկայացրել ՀՀ ԲՈՀ հաստատման նպատակով.

- Մուխսիխաչոյան Արուսյակ,
- Խաչատրյան Գայանե,
- Սարգսյան Գայանե:

Գավառի պետական համալսարանի հետ ակտիվ համագործակցության համար բուհի գիտխորհրդի որոշմամբ ԳՊՀ պատվավոր դոկտորի կոչում է շնորհվել Բուլղարիայի Հանրապետության Անգել Կանչևի անվան Ռուսեի համալսարանի երկարամյա ռեկտոր, բուլղարիայի Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, Ռուսե քաղաքի խորհրդի նախագահ Հրիստո Բելուկին:

Հաշվետու ժամանակահատվածում ևս շարունակվել են համալսարանի դասախոսներին խրախուսման տարբեր կառուցակարգերի կիրառումը, մասնավորապես, համալսարանում երկարատև աշխատանքի և ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի կայացման ու զարգացման, երիտասարդ մասնագետների պատրաստման գործում ունեցած անուրանալի վաստակի համար գիտական խորհրդի որոշմամբ շնորհակալագիր հանձնվեց դասախոս Մաքսիմ Հակոբյանին:

Անցած ուսումնական տարին ևս նշանավորվեց միջազգային նոր ծրագրերին անդամակցությամբ, ինչպես նաև ընթացիկ ծրագրերի հաջող շարունակությամբ: Հաշվետու ուստարում մեկնարկեցին ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության 5, իսկ աշխատակազմի կարողությունների զարգացման 2 նոր ծրագրեր:

Շարունակաբար համալսարանը ապահովել է ակտիվ մասնակցություն ակադեմիական շարժունության գործող ծրագրերին, 2016-2017 ուստարում 19 ուսանողներ և 12 դասախոսներ մասնակցել են այդ ծրագրերին եվրոպական առաջատար տարբեր համալսարաններում: Վերապատրաստման դասընթացների կամ ամառային դպրոցների մասնակցել են 5 աշխատակիցներ: Նրանք իրենց հաշվետվություններում ներկայացրել են տարբեր առաջարկություններ ստացած գիտելիքները կամ ուսումնասիրած փորձը տեղայնացնելու նպատակով:

Ելնելով Հայաստանի Հանրապետության կրթական համակարգին ներկայացվող արդի պահանջներից, դպրոցի սովորողներին՝ նրանց նախասիրություններին և կարողություններին համապատասխան ապագա մասնագիտության ընտրության հարցում աջակցելու, համալսարանում գործող մասնագիտությունների վերաբերյալ սովորողների մոտ կողմնորոշում ձևավորելու նպատակով պայմանագրեր կնքվեցին համալսարանի և Գավառի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական, Գավառի Մ. Բունիաթյանի անվան թիվ 8 միջնակարգ, Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ և Նորատուսի Ա. Սողոմոնյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցների միջև:

Փոխշահավետ, բազմաբնույթ համագործակցային հարաբերությունների հաստատման, երիտասարդ մասնագետների համար նորագույն տեխնոլոգիաների միջոցով

տեսական և գործնական գիտելիքների ամրապնդման և խորացման հնարավորությունների ստեղծման, համալսարանի ուսանողների արտադրական և նախադիպլոմային պրակտիկաների անցկացման, համատեղ գիտահետազոտական աշխատանքների և աշխատանքային ծրագրերի իրականացման, ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման հարցում ընկերության աշխատակիցների ներգրավման, ինչպես նաև գիտամանկավարժական գործունեության արդյունքների համատեղ քննարկման նպատակներից ելնելով՝ փոխգործակցության հուշագիր կնքվեց «Յուքոմ» հեռահաղորդակցման ընկերության հետ:

Շարունակական աշխատանքներ են իրականացվել կրթության որակից շահառուների բավարարվածության մակարդակը բացահայտելու, կրթական կարիքները վեր հանելու և դրանց բավարարման ուղղությամբ: Առցանց, անանուն հարցումներ են իրականացվել շուրջ 221 առկա ուսուցմամբ և 74 հեռակա ուսուցմամբ սովորող ուսանողների, իսկ կրթական միջավայրից բավարարվածության գնահատման հարցախույզ է իրականացվել 96 դասախոսների շրջանում: Աշակերտ-դիմորդների շրջանում նույնպես իրականացվել են հարցումներ նրանց նախասիրությունների, նախընտրած մասնագիտությունների վերաբերյալ: Հարցախույզների արդյունքներն ամփոփվել են Որակի ապահովման բաժնի կողմից: Ընթացիկ ուստարում արդյունքները ներկայացվել են գիտխորհրդում, տարածվել ներքին և արտաքին շահառուների շրջանում՝ իրականացված վերլուծությունները համակողմանի քննարկման առարկա դարձնելով:

Իրականացվել է համալսարանում արդեն ավանդույթ դարձած առկա և հեռակա ուսուցման համակարգերում լավագույն ուսանողի պատվավոր կոչմանն արժանացած ուսանողների պարգևատրման, մեծարման և լավագույն օրինակի տարածմանը նվիրված միջոցառումներ:

Շարունակվել են հանրապետության տարբեր բուհերի ուսանողական կառույցների հետ համատեղ աշխատանքները, ուսանողները մասնակցել են Երևանի, Շիրակի, Վանաձորի պետական համալսարաններում ուսանողական գիտական ընկերությունների կողմից կազմակերպված ուսանողական գիտաժողովներին, հանդես եկել զեկուցումներով, ակտիվ մասնակցություն ունեցել քննարկումներին:

Հաշվետու ուստարվա ընթացքում ուսանողների համար կազմակերպվել են լրացական դասընթացներ՝ «Նկարչական ստուդիա», «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» մոդուլների շրջանակում, իրավաբանական կլինիկայում, Տնտեսագետների, Տուրիզմի և այլ ակումբներում:

Ուսանողների մոտ գործնական հմտությունների զարգացման համար, բացի ուսումնական պլանով նախատեսված պրակտիկաներից, հաճախակի կազմակերպվում են նաև կարճատև ուսուցողական այցելություններ հանրապետության տարբեր գիտական, արտադրական կազմակերպություններ, ինչպես նաև իրականացվում սեմինարներ, քննարկումներ, լրացական դասընթացներ, ակնարկային դասախոսություններ: Մասնավորապես, համալսարանում տեղի ունեցավ «Կրթական Ավտորու» խորագիրը կրող սեմինար-դասընթաց, որն իրականացնում էր Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Ծրագրի նպատակն էր ներկայացնել 2014-2015 թվականներին իրականացված «Բոլոնյան համակարգն ուսանողների աչքերով» հետազոտության

արդյունքները և ուսանողներին տեղեկացնել ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ընձեռած հնարավորությունների մասին:

Հետազոտական աշխատանքների տեխնիկական և բովանդակային պահանջների պահպանման, դրանց հիմնական ձևաչափերի կիրառման հմտությունների զարգացման նպատակով կազմակերպվեց սեմինար-դասընթաց՝ «Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները» թեմայով:

Կարևորելով երիտասարդների հոգևոր-մշակութային դաստիարակությունը՝ համալսարանը սերտորեն համագործակցում է տարբեր կառույցների հետ, ինչի արդյունքում բուհում պարբերաբար կազմակերպվում են հանդիպումներ, տարբեր թեմաներով անցկացվում սեմինար-քննարկումներ՝ ուսանողների բարոյահոգեբանական, հոգևոր-մշակութային դաստիարակության նպատակով:

Ուսանողների ընդհանուր աշխարհայացքային իրազեկությունների ընդլայնման նպատակով համալսարանում կազմակերպվում են նաև հանրային նշանակություն ունեցող թեմաներով տարբեր միջոցառումներ, մասնավորապես, կազմակերպվեց սեմինար-քննարկում՝ նվիրված հոգեվերլուծության հիմնախնդիրներին: Սեմինարը նախաձեռնել էր «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան գրասենյակը:

Լրացուցիչ կրթական ծրագրերի շրջանակներում իրականացվող «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացի մասնակից ուսանողների համար կազմակերպվեց «Միջսահմանային դիտարկումներ. Հայաստանում և Ներքին Սաքսոնիայում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անաչառ լուսաբանում» խորագրով սեմինար-դասընթաց:

Կրթության միջազգայնացման նպատակով իրականացվել են շարունակական աշխատանքներ, մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում համալսարանը հյուրընկալեց Շվեդիայի Կառլ Լինեուսի անվան համալսարանի պրոֆեսոր Ուլֆ Ռուսենի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ընթացքում ներկայացվեցին ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերը, շարունակական կրթության խնդիրները, Հայաստանի կրթության և գիտության ոլորտի վերջին տարիների զարգացումները, քննարկվեց հետագա համագործակցության հնարավորությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմը եղել է մարզի հանրակրթական հիմնական, միջնակարգ և ավագ դպրոցներում, ներկայացրել բուհում ընթացող կրթական, գիտական գործընթացները, մասնագիտական կրթական ծրագրերը, դրանց մուտքային պահանջները, հետագա աշխատանքի հնարավորությունները: Պարբերաբար բուհ են այցելել մարզի տարբեր դպրոցների բարձր դասարանների աշակերտները, և այդ հանդիպումների շրջանակներում բացի բնագիտական լաբորատորիայում դասեր և փորձեր անցկացնելուց, աշակերտների համար բազմազան ձևաչափերով կազմակերպվել են միջոցառումներ՝ գրական-գեղարվեստական ցերեկույթներ, մասնակցություն ուսանողական գիտաժողովին, շրջայց ԳՊՀ Վարշամ Ավետյանի անվան պատմագիտական թանգարանում: Աշակերտները մասնագիտական կողմնորոշման համար մասնակցել են դասատվության գործընթացի, հանդիպումներ ունեցել ռեկտորի, պրոռեկտորների, դեկանների հետ, հանդես եկել իրենց հուզող հարցադրումներով, ստացել մասնագիտական խորհրդատվություններ:

**2017-2018 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի
ուսումնագիտական զարգացման ռազմավարական ուղղությունները**

**2017-2018 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանում
հայտարարել նոր մրաժողության, նոր մուտեցումների և ակտիվ
նախաձեռնությունների տարի**

1. Մշակել գործունեության առաջնահերթություններ ԳՊՀ 2017-2022թթ. ռազմավարական ծրագրում/Այսուհետ՝ ՌԾ/ նախատեսված յուրաքանչյուր ոլորտի համար:
2. Մշակել ՌԾ իրականացմանն ուղղված գործողությունների հնգամյա, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր՝ ըստ պատասխանատուների, առկա և պահանջվող ռեսուրսների, հնարավոր խոչընդոտների, մարտահրավերների և վերջնարդյունքների գնահատման ցուցիչների:
3. Մշակել ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների ռազմավարական հնգամյա, միջնաժամկետ և տարեկան ծրագրերը՝ դրանք բխեցնելով համալսարանի հնգամյա ծրագրից:
4. Մշակել 2017-2022թթ ՌԾ իրականացմանն ուղղված հնգամյա, միջնաժամկետ և կարճաժամկետ գործողությունների մշտադիտարկման պլաններ՝ ըստ պատասխանատուների, վերջնարդյունքների գնահատման ցուցիչների:
5. Ռազմավարական նպատակների պլանավորումը զուգակցել ֆինանսական ռեսուրսների պլանավորման հետ:
6. Մշակել ֆինանսական վերլուծություններ՝ հիմնավորելով համալսարանի ֆինանսական գործունեության արդյունավետությունը, կատարել ֆինանսական երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորում, մշակել ռիսկերի կառավարման գործիքակազմ, հստակ մեխանիզմներ:
7. Ներդնել ֆինանսական ռեսուրսների բաշխման և ծախսերի արդյունավետության գնահատման ու վերլուծության կառուցակարգեր՝ ըստ ռազմավարական ուղղությունների և առաջնահերթությունների:
8. Լրամշակել ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերը, հստակեցնել գործառույթները՝ դրանք համապատասխանեցնելով բուհի ռազմավարական նպատակների իրականացմանը:
9. Տարածաշրջանային առաջնահերթությունների հաշվառմամբ՝ մշակել և հաստատել համալսարանի գիտահետազոտական գործունեության հայեցակարգ:
10. Հստակեցնել ԳՊՀ ամբիոնների գերակա գիտական ուղղությունները՝ ամբիոնների գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման պահանջների հաշվառմամբ:
11. Ամբիոններում ամրագրել գիտական ուղղությունները, հետազոտական աշխատանքների տարեկան հաշվետվությունների, կատարված աշխատանքների գնահատումների հիման վրա հրապարակել վերլուծություններ:
12. Մշակել ամբիոնների հետազոտական գործունեության երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրեր:

13. Համալսարանի նոր ՌԾ-ում սահմանել գիտահետազոտության համար պատասխանատուի կամ կառույցի գործառույթները:
14. ԳՊՀ բյուջեում ավելացնել գիտահետազոտությանը հատկացվող միջոցները:
15. Մշակել և իրականացնել պետական բյուջեից, միջազգային աղբյուրներից ֆինանսավորվող գիտակրթական ծրագրեր: Իրականացնել գիտության ոլորտի ենթակառուցվածքների արդիականացման, այդ թվում՝ գիտական սարքավորումների, լաբորատորիաների ձեռքբերման կամ ստեղծման դրամաշնորհային ծրագրեր:
16. Ուսումնասիրել ներքին և արտաքին շահակիցների կարծիքները և առաջարկությունները համալսարանում որակի ապահովման և վերահսկման գործընթացների բարելավման վերաբերյալ:
17. Իրականացնել աշխատանքներ ԳՊՀ ստորաբաժանումների ենթակայությունները արդյունավետ դարձնելու, համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների միջև լիազորությունների, գործառույթների ու պատասխանատվության ճիշտ բաշխման, գործունեության ուղղությունների հստակեցման նպատակներով:
18. Մշակել համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների անձնակազմի պաշտոնների անձնագրերը և աշխատանքային նկարագրերը:
19. Պարբերաբար ուսումնասիրել շահառուների բավարարվածության աստիճանը ԳՊՀ-ում առկա ուսումնական, տեխնիկական, մարդկային և ֆինանսական ռեսուրսներից:
20. Ստեղծել ԳՊՀ գիտխորհրդին և ֆակուլտետների խորհուրդներին կից որակի ապահովման մշտական հանձնաժողովներ / 3-5 անդամ՝ ներառյալ ուսանողները/:
21. Կատարել հետազոտություններ հանրակրթության ոլորտի կարիքների և մասնագետներին ներկայացվող պահանջների վերհանման նպատակով:
22. Որակի ապահովման բաժնի կողմից վերահսկել կառուցվածքային ստորաբաժանումների կողմից պլանավորված և փաստացի արդյունավետության ցուցիչների շեղումները, դրանք ներկայացնել գիտխորհրդի քննարկմանը:
23. Կատարելագործել Արտաքին կապերի և լրատվության բաժնի հաշվետվողականության մեխանիզմները՝ շահակիցներից ստացված արձագանքների, կարծիքների և առաջարկությունների հաշվառմամբ:
24. Մշակել և հաստատել համալսարանի արտաքին կապերի ընդլայնմանը և միջազգայնացմանն ուղղված գործընթացները կանոնակարգող փաստաթղթեր:
25. Համակարգված աշխատանքներ կատարել համալսարանի արտաքին կապերի ընդլայնման ուղղությամբ և մշտադիտարկել միջազգայնացմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը:
26. Համալսարանի կրթական ծառայությունները պատշաճ ներկայացնել և գովազդել զանգվածային լրատվամիջոցների և համացանցի միջոցով, հանրությանը հավաստի տեղեկատվություն մատուցել, վերանայել համապատասխան կառուցակարգերը:
27. Կատարել շարունակական աշխատանքներ համալսարանի հասարակական պատասխանատվությունն ապահովող գործընթացների արդյունավետության գնահատման ուղղությամբ, ներկայացնել տարեկան վերլուծություններ և հաշվի առնել դրանց արդյունքները:

28. Կատարելագործել հասարակության լայն շրջանակների հետ հետադարձ կապի ապահովման մեխանիզմները, նախագծել էլեկտրոնային հարթակ արտաքին շահակիցների լրացուցիչ կրթական կարիքների ուսումնասիրման նպատակով:
29. Կազմակերպել դասախոսական կազմի վերապատրաստման ծրագրեր մասնագիտական, մանկավարժական, մեթոդաբանական ուղղություններով, մասնավորապես, ուսուցման և ուսումնառության, սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման մեթոդների և վերջնարդյունքների փոխկապակցման, ինչպես նաև դասընթացներին կրեդիտների հատկացման մեթոդաբանության վերաբերյալ:
30. Բարելավել մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը՝ իրականացնելով գործընթացների գնահատում, խորքային վերլուծություններ:
31. Վերանայել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության և մասնագիտական որակների գնահատման կարգերը:
32. Մշակել յուրաքանչյուր ՄԿԾ-ի ՊԴ կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ՝ հաշվի առնելով կոնկրետ ծրագրի վերջնարդյունքները:
33. Իրականացնել պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության և մասնագիտական որակների գնահատման համակարգված, թափանցիկ գործընթացներ:
34. Ներդնել ՊԴ և ուսումնաօժանդակ կազմի գնահատման, ինչպես նաև խրախուսման և առաջխաղացման հստակ կառուցակարգեր:
35. Լրամշակել ՄԿԾ-ների վերջնարդյունքները՝ որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին համապատասխան:
36. ՄԿԾ-ների տեղեկագրքերում նկարագրել ծրագրերի նպատակներին հասնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսները:
37. Լրամշակել համալսարանում ընդունված մագիստրոսական թեզերի, ավարտական և կուրսային աշխատանքների կատարման կանոնակարգը՝ գնահատման հստակ չափանիշներ սահմանելով նորարարական հետազոտական, վերլուծական և տեխնիկական բաղադրիչների համար:
38. Զարգացնել խորհրդատուների ինստիտուտը՝ ակտիվացնելով աշխատանքները ուսանողական թիրախային խմբերի հետ:
39. Համակարգված աշխատանքներ ծավալել ՄԿԾ-ների նկարագրերում կամընտրական կրթամասի դասընթացների նպատակների, վերջնարդյունքների նկարագրության և վերջիններս ՄԿԾ-ի վերջնարդյունքների հետ քարտեզագրման ուղղությամբ:
40. Մշակել մեխանիզմներ կամընտրական դասընթացների ընտրության առումով ուսանողների մասնագիտական կոշմնորոշմանն ուղղված աշխատանքների արդյունավետության գնահատման համար:
41. Համալսարանի մասնաշենքերում անհրաժեշտ պայմաններ ստեղծել հատուկ կարիքներ ունեցող անձանց համար, մասնավորապես, կառուցել թեքահարթակներ:
42. Կանոնակարգել տվյալների հավաքագրման և դրանց կառավարման գործընթացները, առանձնացնել այնպիսի տվյալներ, որոնք հիմք կհանդիսանան որակի թե՛ ներքին, թե՛ արտաքին գնահատումների համար և որոնց հիմնավորմամբ հավաստի կդառնա այս կամ այն ոլորտի առաջընթացը:

43. Մագիստրատուրայում Դեղագործական քիմիա, Սերվիս, Քարտեզագրություն և կադաստրային գործ մասնագիտությունների գծով կրթության կազմակերպման լիցենզիայի համար անհրաժեշտ կանոնակարգային հենքի և անհրաժեշտ այլ փաստաթղթերի պատրաստում և ներկայացում, կրթության կազմակերպման արտոնման հետագա պահանջների բավարարում:

**Ն. Ա. Կուրուզյան՝
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր**

**ԳՎԱՆՈՒ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ և ԵԼՔԵՐԻ
և 2017 ԹՎԱԿԱՆԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ
ՆԱԽԱՀԱՇՎԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

Գավառի պետական համալսարանի տարեկան բյուջեի նախագիծը կազմվում է՝ հիմք ընդունելով ԳՊՀ հնգամյա ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման՝ տվյալ տարվա գործողությունների ծրագիրը: Մասնավորապես, 2016թ. բյուջեն և 2017թ.բյուջեի նախահաշիվը պլանավորելիս՝ հաշվի են առնվել 2016-2021թթ ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանը միտված համապատասխան ուսումնական տարիների գործողությունների ծրագրերը: Բյուջեում համապատասխան հոդվածների համամասնությունը պլանավորելիս՝ հիմք են ընդունվում համապատասխան ուղղություններով նախատեսված գործողությունների արդյունավետության գնահատման ակնկալվող ցուցիչները:

Այսպիսով, ըստ ԳՊՀ 2016-2021թթ Ռազմավարական ծրագրի ուղղությունների՝ ԳՊՀ բյուջեի տոկոսային բաշխումը կատարվել է հետևյալ կերպ.

**ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտահետազոտական գործունեության ոլորտներում.

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների տպագրման ծախսեր, վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, բյուջեում հատկացված տոկոսը՝ 78.5%:

2. Կրթական միջավայրի արդիականացման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի /տողի/ անվանումը՝ կապիտալ ակտիվների ձեռք բերում, ելքեր կապիտալ նորոգումների գծով, բյուջեում հատկացված տոկոսը՝ 1.6%:

3. Ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ տպագրական ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսեր, ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, գիտաժողովների և այլ միջոցառումների ծախսեր, գրադարանային ծախսեր, վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.5%:

4. Վարչարարության, ֆինանսական գործունեության և ներքուիական տնտեսության կազմակերպման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ կոմունալ վճարներ, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր,

տրանսպորտային միջոցների ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 7.5%:

5. Արտաքին կապերի և համագործակցային ծրագրերի ընդլայնման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ փոստային և կապի վճարներ, այլ ծառայությունների և ներկայացուցչական և գործուղման ծախսեր, մարքեթինգի և գովազդի ծախսեր, դրամաշնորհների ընթացիկ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.3%:

6. Համալսարանի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող լրացուցիչ ծախսեր՝ պարգևատրումներ, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 5 %:

7. Համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրերի իրականացման ոլորտում.

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ նշված գործունեության հետ կապված տպագրման ծախսեր, հակակոռուպցիոն իրազեկմանը և ակադեմիական ազնիվ միջավայրի ձևավորմանն ուղղված այլ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.6 %:

**Ստորև ներկայացվում է 2016թ-ի բյուջեի մուտքերի և ելքերի
և 2017թ-ի բյուջեի նախահաշվի վերլուծությունը.**

Գավառի պետական համալսարանի 2016թ-ի և 2017թ-ի բյուջեները կազմվել են՝ մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով, որպեսզի ելքերը չգերազանցեն մուտքերին: Այս սկզբունքը պահպանվել է 2016թ-ի ծախսերը կատարելիս՝ պակասուրդ չառաջացնելու նպատակով:

Այսպիսով, 2016թ-ին պլանավորված մուտքերի 84 և ավելի տոկոսը բաժին է ընկնում վճարովի ուսուցման ծառայությունից եկամուտներին, սակայն այս հոդվածի կատարողականը ընդհանուր մուտքերի մեջ կազմել է 75 տոկոս, քանի որ հոդվածով 2016թ-ի համար պլանավորված գումարը ամբողջովին չի կատարվել՝ պայմանավորված ընդունելության արդյունքներով ուսանողների քանակի նվազումով, և ըստ մեր գնահատականների այդ միտումը պահպանվելու է նաև 2017թ-ի ընթացքում, ուստի 2017թ-ի համար այս ցուցանիշի պլանավորված մեծությունը նվազեցվել է 2016թ-ի կատարողականին համապատասխան: Քանի որ այս հոդվածով արձանագրվել և նախատեսվում է եկամուտների նվազում, հետևաբար դա իր ազդեցությունն է թողել ելքերը պլանավորելիս:

Մուտքերի հաջորդ, համեմատաբար մեծ տեսակարար մասը, բաժին է ընկնում ՀՀ պետական բյուջեից ստացվող ֆինանսավորմանը, որը, ըստ 2016թ-ի պլանավորման, կազմել է 14 տոկոս, սակայն ՀՀ պետական բյուջեից ստացվող միջոցները գերազանցել են պլանավորված մեծությունը, քանի որ պետության կողմից սոցիալապես անապահով ընտանիքների երեխա ուսանողներին հատկացվող ֆինանսավորման գումարը աճել է, բայց և այնպես 2017թ-ի համար պլանավորված գումարը նվազել է՝ հաշվի չառնելով 2017/18 ուստարվա ընդունելության արդյունքները, քանի որ հնարավոր չէ գնահատել այդ մեծությունը:

Պլանավորված մուտքերի հաջորդ խումբը՝ 2 տոկոսից մի փոքր ավելի, կազմում են ոչ գործառնական մուտքերը, որոնք իրենց մեջ ներառում են դրամաշնորհներից և

բարեգործական նվիրաբերություններից մուտքերը, բանկերում ներդրված գումարներից եկամուտները և վարձակալական եկամուտները: Ոչ գործառնական եկամուտների մուտքերը կազմել են 8.5 տոկոս, քանի որ դրամաշնորհային որոշ պայմանագրերից գծով ֆինանսավորումը 2015թ-ի ընթացքում չի ստացվել, և ստացվել է 2016թ-ի ընթացքում, սակայն քանի որ պլանավորման ժամանակ կային անորոշություններ՝ դրա գծով պլանավորում չէր իրականացվել:

Պլանավորված մուտքերում հաջորդ ոչ էական խումբը՝ գրեթե 1.1 տոկոսով, կազմում են գործառնական այլ եկամուտները, որոնք ներառում են ընդունելության քննություններից և գործերի ընդունումից մուտքերը, այլ ծառայություններից և վաճառակետից մուտքերը: Այս հոդվածի կատարողականը գրեթե չի շեղվել պլանավորումից և կազմել է 1.3 տոկոս:

Գավառի պետական համալսարանի ելքերի ամենամեծ բաժինը՝ գրեթե 82 տոկոսը, աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսերն են, որոնք իրենց մեջ ներառում են նաև ինչպես կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտի ծախսերը, այնպես էլ հետազոտական ոլորտի աշխատակիցներին վճարումները:

Վճարումներ պետական բյուջե /Հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/ հոդվածը ներառված է ընդհանուր ծախսերի մեջ և ընդգրկում է համալսարանի կողմից վճարվող շահութահարկը, ավելացված արժեքի հարկը և այլ հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ: Այս հոդված գծով 2016թ-ի համար պլանավորումը կազմել է գրեթե 1 տոկոս, բայց կատարվել է 0.5 տոկոսը, պայմանավորված ավելի փոքր շահութահարկի գումարի ձևավորումով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և վարած հարկային քաղաքականությանը համապատասխան: Հոդվածով նախատեսվել է աճ, քանի որ 2017թ-ի համար նախատեսվել է շահույթի ավելացում և դրա հետևանքով շահութահարկի վճարում:

Կոմունալ վճարները կազմում են պլանավորված բյուջեի գրեթե 5.3 տոկոսը, որն իր մեջ ներառում է նաև հետազոտական գործունեության համար անհրաժեշտ կոմունալ ծախսերը: Հոդվածը գրեթե կատարվել է՝ առանց տնտեսումների, այն թերակատարվել է ընդամենը 0.5 տոկոսով: 2017թ-ի համար նախատեսվել է բյուջեի 5.2 տոկոսը ծախսել կոմունալ ծախսերի համար:

Փոստային և կապի վճարներ պլանավորվել են 0.4 տոկոսի չափով: Հոդվածում նախատեսվածն ըստ էության կատարվել է և հաջորդ տարվա համար պլանավորվել է նույն չափաբաժնով: Թվային տեսանկյունից հոդվածում չունենք տնտեսում, բայց որակական տեսանկյունից ունենք առավելություն, քանի որ ելնելով համալսարանում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման առաջընթացից և դրանով պայմանավորված ավելի բարձր արագությամբ ինտերնետ ծառայության անհրաժեշտությունից՝ բանակցությունների արդյունքում կրկնապատկվել է ինտերնետ ծառայության արագությունը, սակայն սակագինը կրկնակի նվազեցվել է, որպեսզի ինտերնետ ծառայության արագության կրկնապատկումը բյուջեի վրա որևէ ազդեցություն չունենա:

Ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսերը կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1.3 տոկոսը, այս բաժնում ներառված են նաև հետազոտական աշխատանքների համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերման ծախսերը: Այս հոդվածի գծով ունեցել ենք տնտեսում, քանի որ պլանավորումը կատարվել է առավելագույն չափերով, նկատի ունենալով ՀՀ տնտեսությունում հնարավոր արժեզրկումները, ինչպես նաև չկանխատեսված իրավիճակները: 2017թ-ի բյուջեում այս հոդվածը պլանավորվել է 1.4

տոկոս: Կատարողականի նկատմամբ այս հոդվածի պլանավորումն ավելացվել է, որպեսզի կարողանանք հետազոտական աշխատանքների համար ավելի շատ անհրաժեշտ նյութեր ձեռք բերել:

Ծախսերի հաջորդ բաժինը Տրանսպորտային միջոցների ծախսերն են, որոնք կազմում են բյուջեի ծախսերի գրեթե 1 տոկոսը, որը նախատեսված է համալսարանի 2 մեքենաների համար, որոնք սպասարկում են ռեկտորին և համալսարանի այլ աշխատակիցներին, և 1 ավտոբուսի համար, որը սպասարկում է համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին: Այսինքն՝ այս հոդվածն իր մեջ ներառում է համալսարանի գործունեության բազմաթիվ ոլորտների ծախսեր. և՛ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտը, և՛ ուսումնա-գիտահետազոտական գործունեության ոլորտը, և՛ արտաքին կապերի ու համագործակցության ընդլայնման ոլորտը:

Ծախսերի հաջորդ բաժինը Ծառայությունների ձեռքբերման ծախսերն են, որն իր մեջ ներառում է բազմաթիվ ծառայությունների ձեռքբերում, և այստեղ բավականին մեծ ծավալ են կազմում հետազոտական աշխատանքների համար պահանջվող ծախսերը: Նշված հոդվածը կազմում է ծախսերի գրեթե 2 տոկոսը: Հոդվածը ներառում է նաև չնախատեսված իրավիճակների համար միջոցների պլանավորում:

Ծախսերի հաջորդ բաժինը Թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար անհրաժեշտ էլքերն են, որոնք կազմել են բյուջեի շատ փոքր մասը, քանի որ օգտագործվում են էլեկտրոնային լրատվամիջոցներ: Հոդվածում տեղի են ունեցել ավելացումներ, քանի որ շուկայում արձանագրվել են գների բարձրացումներ, և առաջարկվել է հատկացումներն ավելացնել:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են Կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսերը: Ելնելով անհրաժեշտությունից՝ հոդվածում տեղի են ունեցել ավելացումներ:

Ծախսերի հաջորդ բաժինը Մարքեթինգի և գովազդի ծախսերն են, որոնք բյուջեի ընդամենը 0.2 տոկոսն են կազմել: Հոդվածն ավելի շատ է պլանավորվել, քան կատարողականն է, քանի որ նախատեսվում է արտաքին կապերի և համագործակցության ծրագրերի ընդլայնում:

Ծախսերի հաջորդ բաժինը կազմել են Ներկայացուցչական և գործուղման ծախսերը: Այս հոդվածը նույնպես կազմել է ծախսերի ընդամենը 0.2 տոկոսը: Նշված հոդվածը նախատեսված է ԳՊՀ-ում հյուրերի և պատվիրակությունների ընդունելությունների կազմակերպման համար, որի նպատակը արտաքին կապերի, համագործակցությունների և բարերարների շրջանակների մեծացումն է, հոդվածով չնայած արձանագրվել է տնտեսում, բայց և այնպես հաջորդ տարվա համար նախատեսվել է նույն չափաբաժնով:

Ծախսերի հաջորդ բաժինը Ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսերն են: Հոդվածը նախատեսված է ուսանողական ինքնակառավարման մարմինների կողմից կազմակերպվող միջոցառումների ֆինանսավորման և վերջիններիս ընթացիկ գործունեության ապահովման ծախսերը հոգալու համար: Հոդվածը թերակատարվել է, քանի որ ծախսերի որոշ մասը ֆինանսավորվել է արտաքին միջոցներով:

Ծախսերի հաջորդ բաժինը «Այլ ծախսեր» հոդվածն է, որն իր մեջ ներառում է բազմաբնույթ ծախսեր, ինչպիսիք են հիմնադրամների հետ համագործակցության և բարեգործության համար անհրաժեշտ ծախսերը, գիտաժողովների և այլ միջոցառումների

կազմակերպման համար պահանջվող ծախսերը, դրամաշնորհների գծով կատարվող ծախսերը, ինչպես նաև գրադարանների համար գրքերի ձեռքբերման ծախսերը: Հոդվածը կազմում է ծախսերի ավելի քան 3 տոկոսը: Հիմնադրամների, Հասարակական կազմակերպությունների, Գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման համար անհրաժեշտ ծախսերի գծով արձանագրվել են որոշակի խնայողություններ, քանի որ ծախսերի որոշ մասը ֆինանսավորվել է արտաքին աղբյուրների միջոցով և այլընտրանքային հնարավորությունների հաշվին: Դրամաշնորհների ընթացիկ ծախսերը ավելի շատ են կատարվել, քանի որ 2016թ-ի ընթացքում դրամաշնորհների նախապես չպլանավորված մուտքեր են տեղի ունեցել, որոնց համապատասխան էլ առաջացել են լրացուցիչ ծախսեր:

Ծախսերի հաջորդ բաժինը վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ծախսերն են, որոնք կազմել են ծախսերի 0.2 տոկոսը, քանի որ ԳՊՀ-ն իրականացնում է ուսանողների համար ավելի մատչելի ծառայությունների մատուցման քաղաքականություն, այդ պատճառով էլ վաճառակետի ծախսերը նվազեցվել են՝ ավելի մատչելի /էժան/, այսինքն ԳՊՀ-ի համար ավելի շահավետ մատակարարներ գտնելու շնորհիվ, բայց պլանավորումը թողնվել է նույնը, որպեսզի 2017-ի ընթացքում գների հնարավոր աճը չհանգեցնի շեղումների:

Ծախսերի հաջորդ բաժինը ուսանողներին վճարվող կրթաթոշակի գումարներն են, այս հոդվածը կազմում է ծախսերի ավելի քան 2 տոկոսը: Նշված հոդվածով իրականացվում է անվճար սովորող ուսանողների և ԳՊՀ բարերարների կողմից ուսանողներին տրամադրվող կրթաթոշակների պլանավորում և վճարում: 2016թ-ին հոդվածը գերակատարվել է, քանի որ ՀՀ ԿԳՆ-ի կողմից պլանավորումն իրականացվել է մինչև սեպտեմբեր ամիսը և հետո վերահաշվարկվել, նույն սկզբունքով նաև պլանավորվել է 2017թ-ը: Ինչպես նաև ԳՊՀ բարերար Ժիրայր Նիշանյանի կողմից ուսանողներին Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ տրամադրվել է ևս մեկ ամսվա լրացուցիչ կրթաթոշակ՝ դեկտեմբեր ամսվա ընթացքում:

Ծախսերի հաջորդ բաժինը «Կապիտալ ակտիվների ձեռք բերում» հոդվածն է, այս հոդվածով պլանավորված ծախսերը կազմել են 2016թ-ի ծախսերի 1.4 տոկոսը: Այս հոդվածը գերակատարվել է՝ պայմանավորված դրամաշնորհային միջոցների գծով չպլանավորված, բայց ստացված միջոցներով կատարված գնումներով:

Ծախսերի հաջորդ բաժինը «Ելքեր կապիտալ նորոգումների գծով» բաժինն է, այս հոդվածով 2016-թ-ի ընթացքում պլանավորվել 0.5 տոկոս, սակայն վերանորոգումներ չեն իրականացվել, 2017թ-ի համար պլանավորվել են որոշակի վերանորոգումներ:

Հիմք ընդունելով վերոնշյալ վերլուծությունը, ինչպես նաև ԳՊՀ 2017-2021թթ Ռազմավարական ծրագրի նպատակների իրականացման գործողությունների պլանը՝ **2017թ. բյուջեն ըստ հոդվածների /տողերի/ վերաբաշխվել է ներքոհիշյալ համամասնությամբ.**

1. Համալսարանի ռազմավարական ծրագիրը ուսումնական գործընթացի կազմակերպման և գիտահետազոտական գործունեության ոլորտներում

Բյուջեում համապատասխան հոդվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, գիտահետազոտական աշխատանքների, գրքերի և հաշվետվությունների

տպագրման ծախսեր, վճարումներ պետական բյուջե /հարկեր, տուրքեր, պարտադիր վճարներ/, բյուջեում հատկացված տոկոսը՝ 71.5 %:

2. Համալսարանի ռազմավարական ծրագիրը կրթական միջավայրի արդիականացման ոլորտում

Բյուջեում համապատասխան հողվածի անվանումը՝ կապիտալ ակտիվների ձեռք բերում, ելքեր կապիտալ նորոգումների գծով բյուջեում հատկացված տոկոսը՝ 2%:

3. Համալսարանի ռազմավարական ծրագիրը ուսանողների հետ աշխատանքների կազմակերպման ոլորտում

Բյուջեում համապատասխան հողվածի անվանումը՝ տպագրական ծախսեր, թերթերի և ամսագրերի բաժանորդագրություն, կրթական բարեփոխումների և կարիերայի կենտրոնի ծախսեր, ուսանողական ինքնակառավարման մարմինների ծախսեր, հիմնադրամների և ՀԿ-ների հետ համագործակցության ծախսեր, գիտաժողովների և այլ միջոցառումների ծախսեր, գրադարանային ծախսեր, վաճառակետի սպասարկման և վաճառվող ապրանքների ձեռքբերման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.8%:

4. Համալսարանի ռազմավարական ծրագիրը վարչարարության և մարդկային ռեսուրսների կառավարման ոլորտներում

Բյուջեում համապատասխան հողվածի անվանումը՝ նշված ոլորտներում կատարվող աշխատանքի վարձատրությանն ուղղվող ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 0.8 %:

5. Համալսարանի ռազմավարական ծրագիրը ֆինանսական գործունեության և ներքուհական փնտրության կազմակերպման ոլորտներում

Բյուջեում համապատասխան հողվածի անվանումը՝ կոմունալ վճարներ, փոստային և կապի վճարներ, ապրանքանյութական պաշարների ձեռքբերման ծախսեր, տրանսպորտային միջոցների ծախսեր, այլ ծառայությունների և աշխատանքների ձեռքբերման ծախսեր, ներկայացուցչական և գործուղման ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 9.8%:

6. Համալսարանի ռազմավարական ծրագիրը արտաքին կապերի և համագործակցության ընդլայնման ոլորտում

Բյուջեում համապատասխան հողվածի անվանումը՝ մարքեթինգի և գովազդի ծախսեր, ներկայացուցչական և գործուղման ծախսեր, դրամաշնորհների ընթացիկ ծախսեր, բյուջեում հատկացված տոկոսը՝ 3.2%:

7. Համալսարանի ռազմավարական ծրագիրը կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ոլորտում

Բյուջեում համապատասխան հողվածի անվանումը՝ աշխատանքի վարձատրությանն ուղղվող լրացուցիչ ծախսեր՝ պարգևատրումներ, բյուջեում հատկացված տոկոսը՝ 6 %:

Առկա և կանխատեսվող ֆինանսական ռեսուրսների համադրմամբ, ֆինանսական ռիսկերի կանխատեսման և դրանց նվազեցման, ֆինանսավորման այլընտրանքային միջոցների որոնման, ինչպես նաև հետագայում անհրաժեշտ ռեսուրսների կարիքների բացահայտման նպատակով ԳՊՀ բյուջեում նախատեսվել է նաև պահուստային միջոցներ՝ բյուջեի մոտ 3% չափով, ինչպես նաև մշակվեց հետագա ֆինանսական կանխատեսումների ծրագիրը՝ ըստ համալսարանի 2016-2021 թթ . Ռազմավարական ծրագրի նպատակների իրականացմանն ուղղվող գործողությունների.

h/h	Նպատակը	Ռեսուրսները				
		Կանխա տես վող 2017թ	Կանխա տես վող 2018թ	Կանխա տես վող 2019թ	Կանխա տես վող 2020թ	Կանխա տես վող 2021թ
I.	Համալսարանի ուսումնական գործընթացի և գիտահետազոտական գործունեության իրականացում	71.5 %	68.6 %	65.3 %	62.5 %	60 %
II.	Համալսարանի կրթական միջավայրի արդիականացում	1.9 %	2.5 %	3.5 %	5.5 %	6.5 %
III.	Համալսարանի ուսանողների հետ աշխատանքների կազմակերպում	3.8 %	4.1 %	4.4 %	4.5 %	5 %
IV.	Համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարում և վարչարարություն	0.8 %	1.3 %	2.1 %	2.5 %	3.0 %
V.	Համալսարանի ֆինանսական գործունեության և ներբուհական տնտեսության կազմակերպում	9.8 %	9.8 %	9.9 %	9.9 %	10 %
VI.	Համալսարանի արտաքին կապերի և համագործակցության ընդլայնում	3.2 %	3.4 %	3.6 %	3.8 %	4 %
VII.	Համալսարանի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերի իրականացում	6 %	6.3 %	7.2 %	7.3 %	7.5 %
	Պահուստային միջոցների ձևավորում	3.0 %	4.0 %	4.0 %	4.0 %	4.0%

**Գ. Գ. Մուրադյան՝
ԳՊՀ գլխավոր հաշվապահ**

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան Ասոյան Թաթուլ Արփիկի,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Դեկանի տեղակալ Սարգսյան Ռուզաննա Մարտիր

**ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն	
011401.19.6	<i>Հայոց լեզու և գրականություն</i>	Մանկավարժության բակալավր
011401.20.6	<i>Ռուսաց լեզու և գրականություն</i>	Մանկավարժության բակալավր
011401.21.6	<i>Անգլերեն լեզու և գրականություն</i>	Մանկավարժության բակալավր
	011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն	
011401.19.7	<i>Հայոց լեզու և գրականություն</i>	Մանկավարժության մագիստրոս
011401.20.7	<i>Ռուսաց լեզու և գրականություն</i>	Մանկավարժության մագիստրոս
011401.21.7	<i>Անգլերեն լեզու և գրականություն</i>	Մանկավարժության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 106

Շրջանավարտների թիվը՝ 30

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2016-2017 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանն ստացավ ենթակառուցվածքային հավատարմագրում, որին նախորդել էր ինքնավերլուծության աշխատատար և երկարատև գործընթաց: Այդ ընթացքում ի հայտ եկան խնդիրներ, որոնք ներառվեցին ԳՊՀ գործունեության բարելավման ծրագրում և ըստ ոլորտների պետք է արտացոլվեն ֆակուլտետների զարգացման հայեցակարգերում և ստանան իրենց լուծումները: Այս առումով բանասիրական ֆակուլտետը՝ որպես ԳՊՀ ստորաբաժանումներից մեկը, ունի պատասխանատվության ու անելիքների իր բաժինը, ուստի իր գործունեությունը 2017-2018 ուստարում ծավալելու է թերությունները և բացթողումները շտկելու, ձեռքբերումներն ամրապնդելու և առաջ ընթանալու ճանապարհով: Միաժամանակ պետք է շարունակել նոր որակավորման հետ կապված աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու ուղղությամբ:

1. Ընդունելությունը և ուսանողական համակազմը

2016-2017 ուստարում ընդունելություն կազմակերպվել է երեք մասնագիտությունների գծով. հայոց լեզու և գրականություն, անգլերեն լեզու և գրականություն, ռուսաց լեզու և գրականություն: Հայոց լեզվի և գրականության, անգլերեն լեզվի և գրականության բաժիններում ընդունվել են 5-ական ուսանողներ, իսկ ռուսաց լեզվի և գրականության բաժնում 1-ին կուրս չի ձևավորվել: Մագիստրատուրայում ևս ընդունելության քննություններ կազմակերպվել են նշված մասնագիտությունների գծով: «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտությամբ մագիստրատուրա են ընդունվել 12, իսկ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությամբ՝ 15 ուսանողներ: Այսպիսով, բակալավրիատի 1-ին կուրս են ընդունվել 10, իսկ մագիստրատուրայի 1-ին կուրս՝ 27 ուսանողներ: Ընդհանուր առմամբ բանասիրական ֆակուլտետ են ընդունվել 37 ուսանողներ: Համեմատության համար ասենք, որ 2015-2016 ուստարում ԲՖ ընդունվածների քանակը 21 է, որից բակալավրիատ՝ 20, մագիստրատուրա՝ 1: Չնայած ընդունելության առումով թեկուզև փոքր, բայց դրական միտում կա, այնուամենայնիվ ուսանողական համակազմի առումով նկատելի է նվազման դինամիկա: Այսպես, 2015-2016 ուստարում ֆակուլտետում սովորում էր 137 ուսանող /բակալավրիատ՝ 115, մագիստրատուրա՝ 22/, իսկ 2016-2017 ուստարում՝ 106 /բակալավրիատ՝ 78, մագիստրատուրա՝ 28 /:

Ուսանողների շարժը հետևյալ պատկերն է ներկայացնում. այլ բուհերից բանասիրական ֆակուլտետ են տեղափոխվել 2 ուսանող /1՝ ՀԼԳՅ, 1՝ ՌԼԳՅ/, ԲՖ-ից այլ ֆակուլտետներ են տեղափոխվել 2 ուսանող /1՝ ՀՄՖ ՏՐ2, 1՝ ՀՈՒՖ/, ազատվել են 5, հեռացվել՝ 3 ուսանողներ: Բուլղարիայում՝ Ռուսեի Ա.Կանչևի անվան համալսարանում, սովորել են անգլերեն լեզվի և գրականության բաժնի 4 ուսանողներ:

2. Առաջադիմությունը

2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակում՝ ձմեռային քննաշրջանի ավարտին, «Հայոց լեզու և գրականություն» բաժնի առաջին կուրսի սովորողների ընդհանուր թիվը եղել է 5,

որից քննաշրջանին մասնակցելու թույլտվություն են ստացել բոլորը, սակայն հարգելի պատճառով չի ներկայացել 1-ը: Միայն «գերազանց» և «լավ» գնահատականներ են ստացել 3 ուսանող, խառը գնահատականներ՝ 1 ուսանող: Սովորողների բացարձակ առաջադիմությունը այդպիսով կազմել է 80 տոկոս: Գարնանային քննաշրջանում 6 ուսանողներից քննություններին մասնակցել են 5-ը, առաջադիմությունը կազմել է 83,33%:

«Հայոց լեզու և գրականություն» բաժնի 2-րդ կուրսում սովորողների ընդհանուր թիվը եղել է 10-ը, քննաշրջանին մասնակցելու թույլտվություն են ստացել բոլորը, սակայն հարգելի պատճառով չի ներկայացել 1-ը: 9 ուսանողներն էլ ստացել են միայն «գերազանց» գնահատականներ: Սովորողների բացարձակ առաջադիմությունը կազմել է 90 %: Գարնանային քննաշրջանում 10 ուսանողներն էլ մասնակցել են բոլոր քննություններին, առաջադիմությունը՝ 100%:

Անցած ուստարվա 1-ին կիսամյակի դրությամբ նույն խմբի սովորողների ընդհանուր թիվը եղել է 11-ը: Սովորողների բացարձակ առաջադիմությունը կազմել է 90,91 %:

«Հայոց լեզու և գրականություն» բաժնի 3-րդ կուրսում բոլոր 7 ուսանողներին թույլատրվել է քննություններին մասնակցել, սակայն հարգելի պատճառով բացակայել են 2 ուսանողներ, «գերազանց» գնահատականներ են ստացել 4, «գերազանց» և «լավ» գնահատականներ՝ 1 ուսանող: Սովորողների բացարձակ առաջադիմությունը կազմել է 71.43%: Գարնանային քննաշրջանում 7 ուսանողներն էլ մասնակցել են բոլոր քննություններին, առաջադիմությունը՝ 100%:

Անցած ուստարվա 1-ին կիսամյակում նույն խմբի ուսանողների թիվը եղել է 8-ը, բացարձակ առաջադիմությունը կազմել է 75%:

Ձմեռային քննաշրջանում «Հայոց լեզու և գրականություն» բաժնի չորրորդ կուրսում բոլոր 9 ուսանողներին թույլատրվել է քննություններին մասնակցել, սակայն հարգելի պատճառով բացակայել է 1 ուսանող, միայն «գերազանց» գնահատական է ստացել 7, «գերազանց» և «լավ» գնահատականներ՝ 1, խառը գնահատականներ՝ 1 ուսանող: Սովորողների բացարձակ առաջադիմությունը այդպիսով կազմել է 100%:

Անցյալ տարվա 1-ին կիսամյակի դրությամբ նույն խմբի ուսանողների թիվը նույնն է եղել, բացարձակ առաջադիմությունը՝ 100%:

2016-2017 ուստարում հայոց լեզվի և գրականության ամբիոնն ունեցել է 2 մագիստրոսական ծրագրեր՝ «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» /2-րդ կուրս/, «Հայոց լեզու և գրականություն» /1-ին կուրս/: 1-ին կիսամյակում «Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ» մագիստրոսական ծրագրով երկրորդ կուրսում սովորել է մեկ ուսանող, ով մասնակցել է բոլոր քննություններին՝ ստանալով միայն «գերազանց» գնահատականներ և ցուցաբերելով 100% առաջադիմություն, նախորդ տարվա նույն կիսամյակում ևս նրա ուսման առաջադիմությունը եղել է 100%:

«Հայոց լեզու և գրականություն» մագիստրոսական ծրագրով սովորող առաջին կուրսի 12 ուսանողներից քննություններին մասնակցելու իրավունք են ստացել 8-ը: Միայն «գերազանց» գնահատականներ է ստացել 3, «գերազանց» և «լավ» գնահատականներ՝ 1 ուսանող: Խմբի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 66.67%: Գարնանային քննաշրջանում 11 ուսանողներից քննություններին մասնակցել են 7-ը, առաջադիմությունը կազմել է 63,64%:

2016-2017 ուստարվա ծմեռային քննաշրջանի ավարտին «Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի առաջին կուրսում սովորողների ընդհանուր թիվը եղել է 5, որից քննաշրջանին մասնակցելու թույլտվություն են ստացել բոլորը, սակայն հարգելի պատճառով չի ներկայացել 1 ուսանող: Միայն «գերազանց» գնահատական ստացել է 1, «գերազանց» և «լավ» գնահատականներ՝ 3 ուսանող: Սովորողների բացարձակ առաջադիմությունը կազմել է 80%: Գարնանային քննաշրջանում 5 ուսանողներից քննություններին մասնակցել են 4-ը, առաջադիմությունը՝ 80,00%: ՏԱնգլերեն լեզու և գրականություն» բաժնի երկրորդ կուրսի 8 ուսանողներից ծմեռային քննարջանին մասնակցել են բոլորը: Միայն «գերազանց» գնահատական է ստացել 2, «գերազանց» և «լավ» գնահատականներ՝ 5, խառը գնահատականներ՝ 1 ուսանող: Խմբի առաջադիմությունը կազմել է 94.4%: Գարնանային քննաշրջանում 8 ուսանողներից քննություններին մասնակցել են 6-ը, առաջադիմությունը կազմել է 75,00%:

Անցած տարվա 1-ին կիսամյակում նույն խմբի սովորողների ընդհանուր թիվը եղել է 9, կուրսի առաջադիմությունը կազմել է 100%:

«Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի երրորդ կուրսում սովորողների ընդհանուր թիվը եղել է 10, որից ծմեռային քննաշրջանին մասնակցելու թույլտվություն են ստացել 10-ը: Միայն «գերազանց» գնահատական է ստացել 3, «գերազանց» և «լավ» գնահատականներ՝ 7 ուսանող: Սովորողների բացարձակ առաջադիմությունը կազմել է 100%: Գարնանային քննաշրջանում 10 ուսանողներից քննություններին մասնակցել են 9-ը, առաջադիմությունը կազմել է 90,00%:

Անցած տարվա 1-ին կիսամյակում նույն խմբի սովորողների ընդհանուր թիվը եղել է 10, իսկ ուսանողների առաջադիմությունը կազմել է 70%:

«Անգլերեն լեզու և գրականություն» բաժնի չորրորդ կուրսում սովորողների ընդհանուր թիվը եղել է 16, որից ծմեռային քննաշրջանին մասնակցելու թույլտվություն են ստացել բոլորը, սակայն հարգելի պատճառով նրանցից չի ներկայացել 6-ը: Միայն «գերազանց» գնահատական է ստացել 6, «գերազանց» և «լավ» գնահատականներ՝ 2, խառը գնահատականներ՝ 2 ուսանող: Սովորողների առաջադիմությունը այդպիսով կազմել է 62.50%:

Անցած տարվա 1-ին կիսամյակի դրությամբ նույն խմբի սովորողների ընդհանուր թիվը եղել է 16, իսկ ուսանողների առաջադիմությունը կազմել է 87.50%:

«Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի երրորդ կուրսում սովորողների ընդհանուր թիվը եղել է 4, որից ծմեռային քննաշրջանին մասնակցելու թույլտվություն են ստացել 4-ը, հարգելի պատճառով չի ներկայացել միայն մեկ ուսանող, 3-ն էլ ստացել են «գերազանց» և «լավ» գնահատականներ: Սովորողների առաջադիմությունը այդպիսով կազմել է 75%: Գարնանային քննաշրջանում ևս 4 ուսանողներից քննություններին մասնակցել են 3-ը, առաջադիմությունը եղել է 75,00%:

Անցած տարվա 1-ին կիսամյակի դրությամբ նույն խմբի սովորողների ընդհանուր թիվը եղել է 5, իսկ ուսանողների առաջադիմությունը կազմել է 40%:

«Ռուսաց լեզու և գրականություն» բաժնի չորրորդ կուրսում սովորողների ընդհանուր թիվը եղել է 4, որից ծմեռային քննաշրջանին մասնակցելու թույլտվություն են ստացել 4-ը, սակայն հարգելի պատճառով չի ներկայացել միայն մեկ ուսանող, 3 ուսանող ստացել են

«գերազանց» գնահատական: Սովորողների բացարձակ առաջադիմությունը այդպիսով կազմել է 75%:

Անցած տարվա 1-ին կիսամյակի դրությամբ նույն խմբի սովորողների ընդհանուր թիվը եղել է 4, իսկ ուսանողների առաջադիմությունը կազմել է 100%:

2016-17 ուստարում «Օտար լեզվի և գրականության» ամբիոնն ունեցել է 1 մագիստրոսական ծրագիր՝ «Անգլերեն լեզու և գրականություն» / 1-ին կուրս/:

«Անգլերեն լեզու և գրականություն» մագիստրոսական ծրագրով սովորող 1-ին կուրսի 15 ուսանողներից ձմեռային քննաշրջանին մասնակցելու թույլտվություն են ստացել 15-ը, սակայն հարգելի պատճառով չի ներկայացել 8 ուսանող, 6 ուսանող ստացել են «գերազանց» գնահատական, 3-ն էլ՝ «գերազանց» և «լավ» գնահատականներ: Խմբի բացարձակ առաջադիմությունը կազմել է 46,67%: Գարնանային քննաշրջանում 12 ուսանողներից քննություններին մասնակցել են 6-ը, առաջադիմությունը՝ 50,00%:

Այսպիսով, առաջադիմության ընդհանուր պատկերը ֆակուլտետում հետևյալն է.

	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի
բակալավրիատ՝	86,96%	88,00%
մագիստրատուրա՝	100%	56,52%
ֆակուլտետ՝	87,14%	78,08%

Վերլուծությունը ցույց է տալիս, որ դասընթացների, մասնավորապես կատարած աշխատանքների արդյունավետության, առաջադիմության ընդհանուր գնահատականի վրա բացասական առումով ազդում է ուսանողների՝ տարբեր պատճառներով (հարգելի կամ անհարգելի) քննություններին չներկայանալը, հետագայում լուծարային շրջան անցած ուսանողների ստացած գնահատականներն այլևս վճռորոշ չեն կարող լինել առաջադիմության որոշման հարցում: Փաստորեն ցածր առաջադիմությունը պայմանավորված չէ անբավարար գնահատականներով:

3. Ամփոփիչ ատեստավորման քննություններ

Մշակված ժամանակացույցի համաձայն՝ քննություններն ընթացել են 2 փուլով՝ նախապատրաստական շրջան և բուն քննություններ: Նախապատրաստական շրջանում վերանայվել են քննական հարցաշարերը, իրականացվել են խորհրդատվություններ, անցկացվել են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախապաշտպանություններ, փաստաթղթերի ստուգումներ, ձևավորվել են առարկայական հանձնաժողովներ, նախապատրաստվել են քննասենյակները և քննությունների անցկացման համար անհրաժեշտ պարագաները: Քննություններն անցել են աշխատանքային հանգիստ պայմաններում, միջադեպեր և բողոքարկումներ չեն գրանցվել: Քննություններ կազմակերպվել են «Հայոց լեզու», «Հայ գրականության պատմություն», «Ռուսաց լեզու», «Ռուս գրականության պատմություն», «Անգլերեն լեզու», «Գերմաներեն լեզու» առարկաներից: Հիմնականում գրանցվել են «գերազանց» և «լավ» գնահատականներ, 3 «բավարար» գնահատական գրանցվել է անգլերենից (2) և գերմաներենից (1):

Առարկայական հանձնաժողովների նախագահներն ու անդամներն իրենց գոհունակությունն են արտահայտել քննությունների ընթացքի, կազմակերպվածության, ուսանողների ցուցաբերած գիտելիքների, դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման որակի առնչությամբ: Ռուսաց լեզվի և ռուս

գրականության առարկայական հանձնաժողովի նախագահ Ի.Սարգսյանը, նկատի ունենալով ուսանողների աշխատանքների բարձր մակարդակը, առաջարկեց դրանք տպագրել ՀՊՄՀ «Արդի ռուսագիտության հիմնախնդիրները» հանդեսում: Արվել են նաև առաջարկներ քննական տոմսերում ներառված նյութերի ծավալի և բարդության, տեսականի և գործնականի հարաբերակցության, թեմաների արդիականության վերաբերյալ:

4. Ուսալաններ, առարկայական ծրագրեր

Ուսումնական պլաններն ու առարկայական ծրագրերը մշտապես թարմացման և փոփոխման կարիք ունեն՝ պայմանավորված թե՛ ուսուցանվող առարկաների հասարակական բնույթով, թե՛ աշխատաշուկայի պահանջներով, թե՛ առաջարկվող կրթական չափորոշիչներով: Այս ուստարվա համար կարևոր նշանակություն ունեցավ մասնագիտական որակավորման փոփոխությունը: Ուսումնական պլաններում ավելացան հոգեբանամանկավարժական բնույթի մի շարք առարկաներ: Փոփոխություններ կատարվեցին նաև մագիստրոսական ծրագրերի առարկայացանկերում: Հանվեցին այն դասընթացները, որոնք մեծ մասամբ կրկնում էին բակալավրիատում անցածը, ներառվեցին այնպիսի առարկաներ, որոնք ապահովում էին բակալավրիատի դասընթացների շարունակականությունը կամ լեզվական ու գրական-գեղարվեստական երևույթները քննում նորովի /օրինակ՝ «Հայ բառարանագիտություն և բառարանագրություն», «Հայ շարահյուսագիտության պատմության հարցեր», «11-12-րդ դասարանների հայոց լեզվի դասագրքերի մեթոդական քննություն», «Հայ երգիծաբանություն», «Ֆրանսիական գրականություն», «Լեզուների տիպաբանական վերլուծության հարցեր», «Անգլիական վեպի պատմություն» և այլն/:

Փոփոխություններ են կատարվել նաև ժամաքանակներում: Նշենք, նաև որ «Ժամանակակից հայոց լեզու.թարգմանչական գործ» և «Հայ գրականության պատմություն» մասնագիտացումների փոխարեն ձևավորվել է «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտացումը, որն իր մեջ ներառում է և՛ լեզվաբանական, և՛ գրականագիտական բնույթի դասընթացներ:

Մշտապես վերլուծվում և հաշվի են առնվում ուսանողների և այլ շահառուների ցանկություններն ու պահանջները դասավանդվող առարկաների, ծրագրերի ու դասընթացների, դասավանդողների վերաբերյալ: Այդպես ավելացվել են գործնական պարապմունքներին տրվող ժամերը, ուսալան է մտել «Խոսակցական անգլերեն» ու «Թարգմանչության տեսություն և պրակտիկա» դասընթացները, լուծվել է «Ոճագիտություն» առարկայի դասավանդման հարցը:

5. Ուսումնական ռեսուրսներ և օժանդակ ժառայություններ

Կրթական ծրագրերի որակյալ իրացումը մեծ մասամբ պայմանավորված է համապատասխան նյութատեխնիկական բազայի, էլեկտրոնային տեղեկատվական տեխնոլոգիաների, համացանցի առկայությամբ: ԳՊՀ-ն ունի կայքէջ, համակարգչային լսարաններ, էլեկտրոնային ուսուցման համակարգ, էլեկտրոնային գրադարան, գրադարան, որոնք շատ մատչելի են և հեշտացնում են ուսումնառությունը: Բանասիրական ֆակուլտետի ուսանողները մշտապես ուղղորդվում են դեպի նշված համակարգերը և օգտվում դրանցից:

6. Պրոֆեսորադասախոսական անձնակազմ

Գաղտնիք չէ, որ կրթության կազմակերպման և իրականացման արդյունավետությունը հիմնականում որոշվում է որակյալ պրոֆեսորադասախոսական անձնակազմի առկայությամբ: Ֆակուլտետում աշխատում են 36 դասախոսներ՝ 2 պրոֆեսոր,

3 դոկտոր, 8 դոցենտ, 9 գիտ. թեկնածու, 14 դասախոս, 12 ասիստենտ և 1 լաբորանտ: Դասախոսական կազմը համապատասխանում է իրականացվող մասնագիտական ծրագրի պահանջներին: Բոլոր դասավանդողներն էլ փորձառու են, հետևողական իրենց գործում: Մշտապես խորհրդատվական աջակցություն է լինում ամբիոնի աշխատակիցներին, հատկապես դեռևս մասնագիտական որակավորում չունեցող մասնագետներին՝ հորդորելով աշխատել գիտական թեզի ուղղությամբ, մասնակցել հանրապետությունում կազմակերպվող գիտաժողովներին: Նշենք, որ ֆակուլտետի երկու դասախոսներ՝ Ա.Առաքելյանը և Վ.Կատվայանը, ստացել են դոկտորի գիտական աստիճան, իսկ օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներ Ա.Մուսսիխաչոյանը և Գ.Սարգսյանը՝ դոցենտի գիտական կոչում: Վերջիններս ԳՊՀ գիտխորհրդի երաշխավորությամբ հրատարակել են ուսումնամեթոդական ձեռնարկներ: ԲՖ երկու ամբիոնների դասախոսները մասնակցել են ԳՊՀ, միջազգային և հանրապետական գիտաժողովների՝ հրատարակելով բազմաթիվ հոդվածներ: Ավելացնենք նաև, որ օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներ Ռ.Սարգսյանը, Գ.Սարգսյանը, Լ. Թոռչյանը, Ա.Բալագոյանը, Ս.Տիգրանյանը, Ս.Հայթյանը, Ս.Խաչատրյանը միջազգային ծրագրերի շրջանակներում գործնական նպատակներով եղել են եվրոպական համալսարաններում:

7. Ծրագրի ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացները

Դասավանդման ընթացքում կիրառվում են նոր, ինտերակտիվ /փոխներգործուն/ մեթոդներ, որոնք նպաստում են կրթության որակի, ուսանողների ակտիվության բարձրացմանը, միջանձնային հարաբերությունների մշակույթի ձևավորմանը, համագործակցային խմբերով աշխատելուն, ուսուցման գործընթացը հետաքրքիր ու ստեղծագործ դարձնելուն: Ըստ անհրաժեշտության՝ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ: Գնահատման տարբեր մոտեցումներ են կիրառվում. հարցում, քննարկում, բանավեճ, ռեֆերատ, փոքրածավալ շարադրանք և այլն: Կատարվում են դասալսումներ, անցկացվում են բաց դասեր, կազմակերպվում են քննարկումներ:

8. Ուսանողական ինքնակառավարման մարմիններ

Գավառի պետական համալսարանում կատարվող շարունակական բարեփոխումները նպատակ ունեն առավելագույնս բարելավել կրթական միջավայրը, բարձրացնել կրթության որակը, ուսանողների մեջ դաստիարակել ինքնուրույն մտածելու և գործելու, պատասխանատվության հատկանիշներ: Դրանց իրականացմանը նպաստում են ԳՊՀ համապատասխան կանոնակարգերը, ֆակուլտետի դեկանատի, ամբիոնների, կուրսղեկ-խորհրդատուների, դասախոսների ամենօրյա աշխատանքը ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ: ԳՊՀ ռազմավարական ծրագրին համապատասխան՝ իրականացվել են դաստիարակչական նշանակություն ունեցող սոցիալ-մշակութային ծրագրեր, կազմակերպվել և անցկացվել են միջոցառումներ, գրքերի քննարկումներ, ուսանողները մասնակցել են ներհամալսարանական և հանրապետական ուսանողական գիտաժողովների, «Լավագույն ուսանող» մրցույթին, հարցումների, բարձրացրել իրենց հուզող հարցեր, որոնք ստացել են համապատասխան լուծումներ: Բազմաթիվ ուսանողներ օգտվում են տարբեր հիմնադրամներից, ուսման վարձի զեղչերից: Կարևոր էր նաև միջազգային ծրագրերին անգլերեն լեզվի և գրականության բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի 4 ուսանողների մասնակցությունը:

9. Ամփոփում

Բանասիրական ֆակուլտետում աշխատանքներն իրականացվել են ընդունված ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրին համապատասխան: Ամփոփելով կատարված աշխատանքները՝ կարելի է անել հետևյալ ինքնավերլուծական դիտարկումները.

Ա. Ուժեղ կողմեր

1.Վերանայված, թարմացված, հոգեբանամանկավարժական նոր դասընթացներ ներառող ուսպլանների, առարկայական ծրագրերի, դասախոսությունների առկայություն:

2.Դասատվության արդյունավետության բարձրացում, ուսուցման գործընթացի հստակ կազմակերպում:

3.Միջանկյալ, կիսամյակային և ամփոփիչ քննությունների, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի՝ մշակված ժամանակացույցին համապատասխան պաշտպանության հստակ կազմակերպում և անցկացում:

4.Ուսանողների կրթական կարիքների, կրթության որակի, դասատվության և այլ խնդիրների բացահայտման նպատակով որակի ապահովման բաժնի համագործակցությամբ հարցումների անցկացում, արդյունքների վերլուծություն և բարելավումների իրականացում:

5. Ուսանողական ինքնակառավարման մարմինների համագործակցությամբ և նախաձեռնությամբ դաստիարակչական և գիտահետազոտական նպատակներ հետապնդող միջոցառումների, քննարկումների, գիտաժողովների կազմակերպում:

Բ. Թույլ կողմեր

1.Դասալսույնների կատարման պարբերականության խախտում:

2.Ներֆակուլտետային ուսանողական հարցումների ոչ միշտ օբյեկտիվ արդյունքներ:

3.Արդյունքների վերլուծությունների նկատմամբ ուշադրության պակաս:

4.Զարգացման հայեցակարգի որոշ կետերի (6, 11,12, 16) թերի կամ լիովին չկատարում:

ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգը

Զարգացման հայեցակարգը մշակելիս հաշվի ենք առել ինչպես ժամանակի և աշխատաշուկայի առաջադրած պահանջները, ֆակուլտետի զարգացման հեռանկարները, անցած ուստարում նախատեսված, բայց չկատարված հայեցակարգային դրույթները, այնպես էլ համալսարանի աշխատանքների բարելավման ծրագիրը: Այսպիսով, ԲՖ 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգային ուղղություններն են.

1. Վերանայել և թարմացնել ուսպլանները, առարկայական ծրագրերը, ներառել նոր առարկաներ ու դասընթացներ:
2. Վերանայել ՄԿԾ-ների նկարագրերը, որոշարկել կրթական վերջնարդյունքները, դրանց հասնելու համար դասավանդման և ուսումնառության մեթոդները:
3. Կատարել հենանիշային ուսումնասիրությունների վերլուծություններ կրթական ծրագրերի, առարկայացանկի, ուսպլանների, ժամաքանակների բաշխման գործընթացների կատարելագործման նպատակով:
4. Ֆակուլտետում հարցախույզի, անմիջական շփումների, ուսանողական ինքնակառավարման մարմինների միջոցով համակարգված կերպով վերհանել ուսանողների կրթական կարիքները, կատարել արդյունքների վերլուծություն:
5. Անցկացնել դասախոսական կազմի գործունեությունը գնահատող ուսանողական հարցումներ և դասալսույններ, կատարել արդյունքների վերլուծություն:

6. Ֆակուլտետի գործունեության ամենամյա ինքնավերլուծության շարունակական իրականացում:
7. Կատարելագործել մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների գնահատման համակարգը՝ գնահատման սանդղակում ներառելով նորարական, հետազոտական և ստեղծագործական բաղադրիչները:
8. Ապահովել ֆակուլտետի գործունեության հաշվետվողականությունն թափանցիկությունը՝ համագործակցելով ուսանողական համակազմի, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:
9. Ակտիվացնել ֆակուլտետի ՈւԽ-ի աշխատանքները «Նոր մոտեցումներ, նոր մտահղացումներ» կարգախոսով, մշակել ֆակուլտետային միջոցառումների անցկացման ծրագիր-ժամանակացույց:
10. Համակարգել և ակտիվացնել ֆակուլտետի ՈւԳԸ-ի աշխատանքները՝ խրախուսելով ուսանողների մասնակցությունը ներհամալսարանական և հանրապետական ուսանողական գիտաժողովներին:
11. Հետևողականորեն վերահսկել առարկայական ծրագրերի կատարման ընթացքը, անցկացնել դասալսումներ, քննարկումներ և կատարել համապատասխան վերլուծություններ:
12. Կազմակերպել արդի համաշխարհային գեղարվեստական գրականության, մասնավորապես հայամետ թուրք գրողների լավագույն երկերի ընթերցում և քննարկում:
13. Ֆակուլտետի աշխատակազմին և ուսանողական համակազմին պարբերաբար ծանոթացնել համալսարանի գործունեությունը կանոնակարգող նոր ընդունված իրավական փաստաթղթերին, հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրին և ակադեմիական ազնվության հայեցակարգին, ԳՊՀ էթիկայի կանոններին:
14. Այցելություններ կազմակերպել գիտական, մշակութային կենտրոններ, կազմակերպել հանդիպումներ, կինոդիտումներ, ակնարկային դասախոսություններ:
15. Համալսարան-դպրոց համագործակցության շրջանակներում այցելել դպրոցներ, հանդիպումներ կազմակերպել ուսուցիչների և աշակերտության հետ, կատարել վերլուծություններ:
16. Դասախոսների վարկանիշավորման շրջանակում նպաստել դասախոսական անձնակազմի մասնակցությանը համապատասխան վերապատրաստման դասընթացների:
17. Ուշադրության կենտրոնում պահել բակալավրիատի և մագիստրատուրայի ավարտական կուրսերում ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը, նախապատրաստական աշխատանքներ տանել ամփոփիչ ատեստավորման քննությունների կազմակերպման և պատշաճ անցկացման ուղղությամբ:
18. Անցկացնել միջոցառումներ՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության, մայիսյան հաղթանակների 100-ամյա, Երևանի 2800-ամյա հոբելյաններին, Ֆրանկոֆոնիային և այլ կարևոր իրադարձությունների:

Թ. Ա. Ասոյան՝
Բանասիրական ֆակուլտետի դեկան

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	5	-	-	80.00
2-րդ	10	-	9	90.00
3-րդ	7	-	4	71.43
4-րդ	9	-	7	100.00
Ռուսաց լեզու և գրականություն				
2-րդ	-	-	-	40.00
3-րդ	4	-	-	75.00
4-րդ	4	-	3	75.00
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	5	-	1	80.00
2-րդ	8	-	2	100.00
3-րդ	10	-	3	100.00
4-րդ	16	-	6	62.50
Ընդամենը	78	-	35	83,33
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն, 1-ին կուրս	12	-	4	66.67
Հայոց լեզու և գրականություն /Ժամանակակից հայոց լեզու և թարգմանչական գործ/, 2-րդ կուրս	1	-	1	100.00
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին կուրս	15	-	6	46,67
Ընդամենը	28	-	11	57.14

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Հայոց լեզու և գրականություն				
1-ին	6	-	-	83.33
2-րդ	10	-	3	100.00
3-րդ	7	-	4	100.00
Ռուսաց լեզու և գրականություն				
2-րդ	-	-	-	-
3-րդ	4	-	1	75.00
Անգլերեն լեզու և գրականություն				
1-ին	5	-	-	80.00
2-րդ	9	-	2	75.00
3-րդ	11	-	2	90.00
Ընդամենը	52	-	12	88.00
Մագիստրատուրա				
Հայոց լեզու և գրականություն, 1-ին կուրս	11	-	5	63.64
Անգլերեն լեզու և գրականություն 1-ին կուրս	14	-	6	50.00
Ընդամենը	25	-	11	56.52

2016/2017 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	4	-	-	33	1

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ՀԱՅՈՑ ԼԵՂՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

*Ամբիոնի վարիչ՝ Գրիգորյան Վաչագան Ռաֆիկի
բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ասոյան Թաթուլ Արտիկի - ԲՖ դեկան, բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
2. Ղարիբյան Ալինա Ամբիկի - ասիստենտ
3. Խանդանյան Սիրանուշ Կառլենի - ասիստենտ
4. Կարապետյան Գայանե Լևիկի - ասիստենտ
5. Սարգսյան Ռուզաննա Մարատի - ասիստենտ
6. Բազոյան Ալլա Սահակի - դասախոս
7. Իսկանդարյան Լիլիթ Հրաչիկի - դասախոս
8. Ղազարյան Օլգա Ալբերտի - դասախոս
9. Գյուլազյան Սվետլանա Զալիկոյի - դասախոս

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Կատվալյան Վիկտոր Լիպարիտի - բանասիրական գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
2. Առաքելյան Արա Հրաչիկի - բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. Իսկանդարյան Նաիրա Մանվելի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
4. Ներսիսյան Վարսիկ Արմենի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ
5. Ղռեջյան Լուսինե Խաչատուրի - բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հայոց լեզվի պատմության, արդի հայերենի հիմնախնդիրների ուսումնասիրություն:
2. Բարբառների ուսումնասիրության հարցեր:
3. Բանահյուսական-բանահավաքչական աշխատանքների ուսումնասիրություն:
4. Արդի հայ և արտասահմանյան գրականության զարգացման միտումների ուսումնասիրություն:

5. Հայ գրականության պատմության հարացուցային հարցերի քննություն:
6. Հայ ժողովրդական դյուցազնավեպի ուսումնասիրություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	4	-	-	15	1

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Գրիգորյան Վ. Ռ.** Ерванд Отян, Проклятые годы. 1914-1919 (личные воспоминания). Эчмиадзин, 2016, Отзвуки непроходящей боли (Առաջաբանը), էջ 7-12:
2. **Գրիգորյան Վ. Ռ. Լ.** Շանթի Հին աստվածները և եվրոպական թատերագրությունը // Հայկազյան հայագիտական հանդես, հ.37, Բեյրութ, 2017, էջ 325-344:
3. **Գրիգորյան Վ. Ռ.** Ցավի չընդմիջվող արձագանքը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 296-302:
4. **Ասոյան Թ. Ա.** Հովհաննես Զոհրապյանը և արևմտահայերենի կանոնարկման մի քանի հարցեր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 303-310:
5. **Առաքելյան Ա. Հ.** Ֆր. Կաֆկայի «Օրագրերը», մենագրություն // ԵՊՀ հրատարակչություն, 2016, 233 էջ:
6. **Առաքելյան Ա. Հ.** 20-րդ դարի գերմանական փիլիսոփայական վեպը. «Թոմաս Ման». մենագրություն // Երևան, 2017, 428 էջ:
7. **Առաքելյան Ա. Հ.** Հերման Հեսսեի «Հուլունքախաղը» իբրև ոգու պատմություն, «Հուլունքախաղ» վեպի վերջաբան, Երևան, 2016թ., էջ 615-640:
8. **Առաքելյան Ա. Հ.** Օրագրողի կերպարը Ֆրանց Կաֆկայի «Օրագրերում» // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 328-339:
9. **Կատվայան Վ. Լ.**, Բայազետի բարբառը և նրա լեզվական առնչությունները շրջակա բարբառների հետ, Երևան, 2016, 534 էջ:
10. **Կատվայան Վ. Լ.**, Աբրահամյան Ա. Ա., Մխիթարյան Գ. Մ., Քրդերեն-հայերեն, հայերեն – քրդերեն գործնական բառարան // Երևան, 2016, 590 էջ:
11. **Կատվայան Վ. Լ.**, Բայազետի և պատմաաշխարհագրորեն մերձավոր բարբառների բառային հիմնական տարբերությունները և ընդհանրությունները // Լեզու և լեզվաբանություն, Երևան, 2016, 1, էջ 18-30:
12. **Կատվայան Վ. Լ.**, Հարակատար դերբայը Բայազետի և մերձավոր բարբառներում // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 2016, 2, 132-138:
13. **Կատվայան Վ. Լ.**, Արևմտահայերենի խնդիրների մասին // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 340-344:
14. **Կատվայան Վ. Լ.**, Միջինհայերենյան շրջանի փոխառություններ Բայազետի բարբառում // «Ջահուկյանական ընթերցումներ» գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016, էջ 95-103:

15. **Կատվայան Վ. Լ.**, Վանի բարբառի դրսևորումները ՀՀ Կոտայքի մարզում // Հայ լեզվաբանության 11-րդ միջազգային գիտաժողովի հիմնադրույթների ժողովածու, Երևան, 2017, էջ 70-71:
16. **Ներսիսյան Վ. Ա.** *Մերոնք* և *ձերոնք* բառերի խոսքիմասային արժեքի հարցը գրական արևելահայերենում // հանձնված է տպագրության «Լեզու և լեզվաբանություն» հանդեսում:
17. **Ղոնջյան Լ. Խ.** Նոր Բայազետի ազգագրական և բանահյուսական մշակույթը բանագետ-բանահավաքների գրառումներում // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 345-356:
18. **Ղոնջյան Լ. Խ.** Հայկական ժողովրդական երգումները և դրանց կիրառությունը բանավոր ու գրավոր ավանդության մեջ // «Կանթեղ», N 4, Երևան, 2017, էջ 25-36:
19. **Ղարիբյան Ա. Ա.** Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը // Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի միջազգային գիտաժողովի նյութեր, Երևան, 2017. տպագրությունն ընթացքի մեջ է:
20. **Իսկանդարյան Ն. Մ.** Հայերենի ուղղագրության և բանավոր խոսքի ուսուցման մի քանի հարցեր ոչ հայախոս ուսանողների խմբերում // Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի տարեկան հաշվետու գիտաժողովի նյութեր, Երևան, 2017. տպագրությունն ընթացքի մեջ է:

ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Գայանե Աշոտի Միրիբյան
բանասիրական գիտությունների թեկնածու

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Հովհաննիսյան Ալլա Բորիսի** - բանասիրական գիտությունների թեկնածու, ԳՊՀ դոցենտ
2. **Մարգարյան Արամ Հայկի** - ԳՊՀ պրոֆեսոր
3. **Միքայելյան Ռուզաննա Քրիստաֆորի** - ասիստենտ
4. **Ասրյան Մաղենա Սերգեյի** - ասիստենտ
5. **Հայթյան Սաթենիկ Հայրապետի** - ասիստենտ
6. **Մուրադյան Սիրանուշ Հովհաննեսի** – ասիստենտ
7. **Բալագոզյան Կարինե Արամայիսի** - ասիստենտ
8. **Բալագոզյան Անիկ Կարապետի** - ասիստենտ
9. **Տիգրանյան Սաթենիկ Սաշայի** - ասիստենտ
10. **Մելքոնյան Աննա Վրեժի** – դասախոս
11. **Խաչատրյան Սիրանուշ Արտիկի** - դասախոս
12. **Թոռչյան Լիլիթ Գրիգորի** – դասախոս
13. **Մովսեսյան Աննա Աշոտի** - դասախոս
14. **Նալբանդյան Նարինե Նորայրի** – ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Մուխսիխաչյան Արուսյակ Մուշեղի**- մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. **Սարգսյան Ռուզաննա Ռուբենի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
3. **Սարգսյան Գայանե Ռուբենի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
4. **Եղիազարյան Անդրանիկ Ռաֆիկի** - ասիստենտ
5. **Պատվականյան Մարինե Արմանի** – դասախոս
6. **Ավագյան Սաթիկ Մարտինի** - դասախոս
7. **Սիմոնյան Սոնա Կոստանտի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Մանկավարժության արդի հիմնախնդիրներ:
2. Ռուս և հայ ազգագրության, ազգային մշակույթի և բանահյուսության համեմատական ուսումնասիրություն:
3. Համեմատական-համադրական քերականություն:
4. Օտար լեզվի դասավանդման մեթոդիկայի արդի հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	18	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Միրիբյան Գ. Ա.** Փախստական երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 407- 410:
2. **Մուխսիխաչյան Ա. Մ.** Հնարանությունների գեղարվեստական թարգմանության եղանակները // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 411-417:
3. **Մուխսիխաչյան Ա. Մ.** Безличные конструкции в русском и армянском языках. Проблемы современной русистики // Сборник научных статей кафедры русского языка АГПУ, N 1, 2016, с. 120-128.
4. **Մուխսիխաչյան Ա. Մ.** Особенности перевода безличных конструкций (на материале прозы А.С. Пушкина), Проблемы современной русистики. Сборник научных статей кафедры русского языка АГПУ, N 2, 2017, с. 133-142.
5. **Սարգսյան Ռ. Ռ.** «Արական / իգական» հակադրությունը կենդանունների անվանակարգման մեջ ռուսերենում՝ հայերենի, անգլերենի և իտալերենի համադրությամբ

- (բառակազմական հայեցակետ) // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 418- 428:
6. **Սարգսյան Ռ. Ռ.** Ռուսերենի և հայերենի ցեղանունների զուգադրական-տիպաբանական քննությունը՝ որպես ռեցեպտիվ և պրոդուկտիվ առաջադրանքների մշակման լեզվամեթոդական հիմք) // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 429- 435:
 7. **Սարգսյան Ռ. Ռ.** Разрушаем стереотипы: использование проблемных заданий при анализе трудных случаев строения некоторых русских слов (на примере интерфиксации и наложения морфем) // Научно-практический журнал “Высшая школа” № 13, 2016, г.Уфа, РФ, «Инфинити», с. 29-31.
 8. **Սարգսյան Ռ. Ռ.** Сравнительно-сопоставительный анализ морфемно-словообразовательных особенностей этнонимов в русском, армянском, английском и итальянском языках // Բանբեր ԵՊՀ Հանասիրություն/ Լեզվաբանություն 1 (38), Երևան, Հինգվա, 2016, էջ 619-625:
 9. **Սարգսյան Ռ. Ռ.** Тип словосложения как критерий сопоставительного анализа (на материале русского, армянского, английского и итальянского языков) // Բանբեր ԵՊՀ Հանասիրություն/ Լեզվաբանություն 1 (38), Երևան, Հինգվա, 2016, էջ 610-618:
 10. **Սարգսյան Ռ. Ռ.** К вопросу о стимуляции познавательного интереса к русскому языку на специальных факультетах вузов РА // Русский язык – гарант диалога культур, научного сотрудничества, межнационального и межличностного общения в XXI веке: Материалы Международной научно-практической конференции преподавателей и учителей русского языка и литературы, студентов, магистрантов и аспирантов. –Ер.: Изд-во “Ван Арьян”, 2016, ISBN 978-9939-1-0555-0, с. 227-233.
 11. **Սարգսյան Ռ. Ռ.** Номинация фаунонимов по признаку взрослости / невзрослости (детскости) в русском языке (в сопоставлении с армянским и английским) // Studia Slavica XV, Научные труды молодых филологов, Таллинский университет, Институт гуманитарных наук, Таллин, 2017, ISSN 1406-8990, с. 130-142.
 12. **Սարգսյան Ռ. Ռ.** Информативно-регуляторские надписи как отражение национального характера и менталитета (на материале русского, армянского, английско-го и итальянского языков) // Բանբեր ԵՊՀ Հանասիրություն / Լեզվաբանություն 1 (40), Երևան, Հինգվա, 2017, ISSN 1829-3107, էջ 555-566:
 13. **Սարգսյան Ռ. Ռ.** Академическая мобильность преподавателей как одно из приоритетных направлений реализации Болонского процесса в РА: опыт Гаварского государственного университета // Международная научная конференция “Современные проблемы развития науки и образования”: Ереван, Изд-во РАУ, 2017, ISBN 1829-0450-180-2, с. 130-137.
 14. **Սարգսյան Ռ. Ռ.** Реализация текстоцентрического подхода при формировании словообразовательной субкомпетенции студентов // Բանբեր ԵՊՀ Մանկավարժություն և հասարակական գիտություններ 2 (39), Երևան, Հինգվա, 2017, ISSN 1829-3107, էջ 343 – 349:

15. **Սարգսյան Գ. Ռ.** О способах перевода военных терминов (на материале русского и армянского языков) // Բանբեր ԵՊՀՀ Լեզվաբանություն և Բանասիրություն 1 (38), Երևան, Լինգվա, 2016, էջ 591-601:
16. **Սարգսյան Գ. Ռ.** О классификации военных аббревиатур в русском и армянском языках // Բանբեր ԵՊՀՀ Լեզվաբանություն և Բանասիրություն 1 (38), Երևան, Լինգվա, 2016, էջ 601-610:
17. **Բալազոզյան Ա. Կ.** Անգլերենի ռիթմը հայալեզու ուսանողների համար // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 436-440:
18. **Խաչատրյան Ս. Ա.** Բարձրագույն կրթության միջազգայնացման հիմնահարցեր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու 19 /4/, Երևան, 2017, էջ 441- 451:

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Դեկան Ավագյան Մարտին Պատվականի,
գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր

Դեկանի տեղակալ՝ Խաչիկյան Թեհմինե Գագիկի

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
	011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն	
011401.01.6	<i>Կենսաբանություն</i>	Մանկավարժության բակալավր
011401.03.6	<i>Աշխարհագրություն</i>	Մանկավարժության բակալավր
	011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն	
011401.01.7	<i>Կենսաբանություն</i>	Մանկավարժության մագիստրոս
011401.03.7	<i>Աշխարհագրություն</i>	Մանկավարժության մագիստրոս
	052201.00.6 Բնապահպանություն և բնօգտագործում	
052201.01.6	<i>Բնապահպանություն և բնօգտագործում</i>	Շրջակա միջավայրի բակալավր
	052201.00.7 Բնապահպանություն և բնօգտագործում	
052201.01.7	<i>Բնապահպանություն և բնօգտագործում</i>	Շրջակա միջավայրի մագիստրոս
	053101.00.6 Քիմիա	
053101.02.6	<i>Դեղագործական քիմիա</i>	Քիմիայի բակալավր
	054201.00.6 Աշխարհագրություն	
054201.02.6	<i>Քարտեզագրություն և կադաստրային գործ</i>	Աշխարհագրության բակալավր
	061103.00.6 Համակարգչային ճարտարագիտություն	
061103.01.6	<i>Համակարգչային ճարտարագիտություն</i>	Ինֆորմատիկայի բակալավր
	061103.00.7 Համակարգչային ճարտարագիտություն	
061103.01.7	<i>Համակարգչային ճարտարագիտություն</i>	Ինֆորմատիկայի մագիստրոս
	101801.00.6 Սերվիս	
101801.01.6	<i>Սերվիս</i>	Սերվիսի բակալավր

Ուսանողների թիվը՝ 105
Շրջանավարտների թիվը՝ 48

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Բնագիտական ֆակուլտետը 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում իր ուսումնական գործունեությունն իրականացրել է՝ հիմք ընդունելով 2016-2017 ուսումնական տարվա ռազմավարական ծրագրի իրականացման գործողությունների պլանը, որտեղ ներառված են ուսումնական, գիտահետազոտական, դաստիարակչական, ինչպես նաև ուսումնական գործընթացի հետ կապված կազմակերպչական բազմաբնույթ միջոցառումներ: Ֆակուլտետի խորհրդի ուշադրության կենտրոնում է եղել կրթական ծրագրերի իրականացման որակի բարձրացումը, կարգապահության ամրապնդումը, համալսարանի հակակոռուպցիոն ռազմավարական ծրագրի իրականացման նպատակով գործնական քայլերի իրականացումը: Ամբիոնների կողմից հետևողական աշխատանքներ են կատարվել կրթության նոր ձևերի և մեթոդների ներդրման, կրթության որակի բարձրացման, առկա թերությունները և բացթողումները ժամանակին ի հայտ բերելու և վերացնելու ուղղությամբ: Ֆակուլտետի խորհրդի կողմից հաստատված ժամանակացույցով մշտապես գումարվել են նիստեր, որտեղ քննարկվել են ուսումնական գործընթացին վերաբերող բազմաթիվ հարցեր, նախանշվել ուղիներ ֆակուլտետի գործառույթները ժամանակին կատարելու համար: Ամբիոնների կողմից շարունակական աշխատանք է կատարվել դասախոսությունների արդիականացման, «E-learning» էլեկտրոնային ուսուցման համակարգի էլեկտրոնային բազայի համալրման և թարմացման, ինչպես նաև դասախոսների կողմից էլեկտրոնային քննությունների թեստային բազայի համալրման ուղղությամբ: 2016-2017 ուստարում «Examination-GSU» ձևաչափով քննություն անցկացնելու համար համակարգ են ներմուծվել «Ֆարմակոգենետիկա» դասընթացի թեստերը և թարմացվել են հետևյալ դասընթացների քննական էլեկտրոնային բազան:

1. Համակարգիչների կիրառում,
2. Արդյունաբերական ճյուղերի տեխնոլոգիական համակարգեր,
3. Ինֆորմացիայի մշակման ավտոմատացված համակարգեր և տեխնոլոգիաներ,
4. Համակարգչային ցանցերի կազմակերպում և շահագործում:

Ամբիոններում կատարվող ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքներին նպաստել են համապատասխան տեխնիկական միջոցների, անհրաժեշտ այլ ռեսուրսների առկայությունը: Հաշվետու ուստարում կազմակերպվել են ուսանողական գիտաժողովներ, քննարկումներ, բանավեճեր, բաց դասեր, ակնարկային դասախոսություններ: Լաբորատոր-գործնական աշխատանքների անցկացմանն էապես նպաստում է Բնագիտության լաբորատորիան: Այն հնարավորություն է տալիս ոչ միայն բարելավել կատարվող աշխատանքների որակը, այլ նաև ներգրավել դպրոցների բարձր դասարանի աշակերտներին՝ մասնագիտական կողմնորոշում ապահովելու համար: Արդյունքում համալսարանը 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում հյուրընկալել է բազմաթիվ դպրոցականների Գավառի ավագ, թիվ 1, թիվ 5 հիմնական և Նորատուաի դպրոցներից, ովքեր մասնակցել են նաև մասնագիտական դասընթացների:

Ընդունելություն-ուսանողական համակազմը

2016-2017 ուսումնական տարում բնագիտական ֆակուլտետի Համակարգչային ճարտարագիտություն բաժին ընդունվել են 10 ուսանող:

Ընդունելության ցածր ցուցանիշի պատճառներից մեկը միասնական քննություններից դիմորդների ստացած անբավարար գնահատականներն են, ինչի հետևանքով էլ Դեղագործական քիմիա բաժնի դիմորդներից ընդունվողներ չեղան:

2016-2017 ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի դրությամբ ֆակուլտետում հաշվառված են 98 ուսանողներ:

Ուսանողների կուրսից կուրս առաջընթացը – ուսումնական առաջադիմությունը

2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակում բակալավրիատում ուսանողների բացարձակ առաջադիմությունը կազմել է 73,5%: Քննաշրջանին մասնակցելու իրավունք ստացել են 100 ուսանող, չեն ներկայացել 25-ը, բոլոր առարկաներից քննությունները հանձնել են 72 ուսանող, գերազանց գնահատականներով կիսամյակը փակել են 37, միայն գերազանց և լավ գնահատականներով՝ 26, խառը գնահատականներով՝ 3, միայն բավարար՝ 6 ուսանող: Մեկ անբավարար գնահատական ստացել է 1 ուսանող:

Մագիստրատուրայում ուսանողների առաջադիմությունը կազմել է 85,7%: Քննաշրջանին թույլատրվել են մասնակցելու 7 մագիստրոսներ, չի ներկայացել 1-ը: Բոլոր առարկաներից դրական գնահատական են ստացել 6 մագիստրոսներ, քննաշրջանը փակել են միայն գերազանց գնահատականով՝ 2, միայն գերազանց և լավ գնահատականներով՝ 2, խառը գնահատականներով՝ 2 մագիստրոսներ: Միայն բավարար կամ անբավարար գնահատական ստացող մագիստրոսներ չեն եղել:

Հաշվետու ուսումնական տարվա առաջին կիսամյակի ընթացքում 100%-անոց բացարձակ առաջադիմություն են ցուցաբերել բակալավրիատի Կենսաբանություն բաժնի 4-րդ, Դեղագործական քիմիա բաժնի 2-րդ, Սերվիս բաժնի 3-րդ, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսերը: Ամենացածր առաջադիմությունը գրանցվել է Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի բակալավրիատի 3-րդ կուրսում՝ 41,7%: քննաշրջանին չմասնակցելու պատճառով: Առաջադիմության նկատելի անկման հիմնական պատճառը ուսման վարձերի ոչ ժամանակին վճարելու հետևանքով քննաշրջանին չմասնակցելն է:

Ֆակուլտետի ընդհանուր բացարձակ առաջադիմությունը 2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի դրությամբ կազմել է 74,3%:

2016-2017 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում բակալավրիատում բացարձակ առաջադիմությունը կազմել է 66,1%: Քննաշրջանին մասնակցելու իրավունք ստացել են 58 ուսանող, չեն ներկայացել 19-ը, բոլոր առարկաներից քննությունները հանձնել են 37-ը, գերազանց գնահատականներով կիսամյակը փակել են 22, միայն գերազանց և լավ գնահատականներով՝ 11, խառը գնահատականներով՝ 3, միայն բավարար գնահատականով՝ 1 ուսանող: Անբավարար գնահատական ստացողներ չեն եղել:

Մագիստրատուրայում 2016-2017 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում առաջադիմությունը կազմել է 40%: Քննաշրջանին թույլատրվել են մասնակցելու 7 մագիստրոսներ, չեն ներկայացել 3-ը: Բոլոր առարկաներից դրական գնահատական են ստացել 2 մագիստրոսներ, քննաշրջանը փակել են միայն գերազանց և խառը գնահատականներով՝ 1-ական մագիստրոսներ: Միայն բավարար կամ անբավարար գնահատական ստացող մագիստրոսներ չեն եղել:

Հաշվետու ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում 100%-անոց բացարձակ առաջադիմություն են ցուցաբերել բակալավրիատի Դեղագործական քիմիա բաժնի 2-րդ և Բնապահպանություն և բնօգտագործում բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսերը: Ամենացածր առաջադիմությունը գրանցվել է Համակարգչային ճարտարագիտություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսում՝ 25%՝ քննաշրջանին չմասնակցելու պատճառով: Առաջադիմության նկատելի անկման հիմնական պատճառը ուսման վարձերի ոչ ժամանակին վճարելու հետևանքով քննաշրջանին չմասնակցելն է:

Ֆակուլտետի ընդհանուր բացարձակ առաջադիմությունը 2016-2017 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի դրությամբ կազմել է 63,9%:

Հաշվետու ժամանակահատվածում բնագիտական ֆակուլտետում իրենց ուսանողական իրավունքներն են վերականգնել 12 ուսանողներ, այլ ֆակուլտետներից բնագիտական ֆակուլտետ են տեղափոխվել 14 ուսանողներ, բնագիտական ֆակուլտետից հեռակա ուսուցման ֆակուլտետ տեղափոխվել են 3 ուսանողներ, հեռացվել են 7 ուսանողներ, որոնցից 1-ը՝ ժամանակավոր կցագրումից, տարկետում տրամադրվել է 4 ուսանողի, որոնցից 2-ը՝ առաջին կուրսին ժամանակավոր կցագրված ուսանողներ, սեփական դիմումների հիման վրա համալսարանից ազատվել են 3 ուսանողներ, որոնցից մեկը՝ ժամանակավոր կցագրումից:

Անհարգելի բացակայած ուսանողներին տրվել են գրավոր նկատողություն և խիստ նկատողություն:

Բնագիտական ֆակուլտետի մի խումբ ուսանողներ, ովքեր ցուցաբերել են ուսման բարձր առաջադիմություն, հաշվետու ժամանակահատվածում օգտվել են բարերարների և կրթական հիմնադրամների ֆինանսական օժանդակությունից.

ՀՕՖ «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամից՝ 20 ուսանող,

Հայ կրթական հիմնարկությունից՝ 3 ուսանող,

«Հրայր և Աննա Հովնանյան» հիմնադրամից՝ 12 ուսանող,

ՀՀ պետբյուջեից «Փարոս» համակարգում ընդգրկված՝ 12 ուսանող,

ՎիվաՍել-USU կրթական ֆոնդից՝ 3 ուսանող,

Հայաստանի երիտասարդական հիմնադրամից՝ 2 ուսանող:

Կրթական ծրագրերի բարեփոխումները և զարգացումները

Ֆակուլտետում գործող մասնագիտական կրթական ծրագրերը և ուսումնական պլանները համապատասխանում են գործող կրթական չափորոշիչներին: Ուսումնական պլանների պարբերաբար թարմացումը ամբիոնների կարևոր գործառույթներից է: Առարկայական ծրագրերը համապատասխանում են գործող ուսումնական պլաններին: Ֆակուլտետի գործավարությունն իրականացվում է սահմանված կարգով: ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով բնագիտական ֆակուլտետից ներկայացված էր Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա կրթական ծրագիրը: ԳՊՀ այցելված փորձագիտական խմբի կողմից ստուգվեցին կրթական ծրագրին առնչվող գրեթե բոլոր փաստաթղթերը և նշվեց, որ դրանք համապատասխանում են չափանիշներին: Փորձագետներն անցկացրին նաև դասալսումներ տարբեր մասնագիտությունների գծով և որպես մասնագետներ հայտնեցին իրենց բարձր կարծիքը:

2016-2017 ուստարում բնագիտական ֆակուլտետում գործող ամբիոններում նոր ուսումնական տարվա համար կատարվել են դասաժամերի փոփոխություններ, կիսամյակից

կիսամյակ տեղափոխություններ՝ համաձայն ուսումնական պլանների: Այդ փոփոխությունները հիմնավորվել են և արձանագրվել ամբիոնների համապատասխան նիստերում:

Ֆակուլտետում անցկացվել են նաև դասախոսներ՝ հիմնականում ամբիոնների վարիչների կողմից: Դասախոսները հանդիսանում են ուսումնական գործընթացի մշտադիտարկման կարևոր բաղադրիչը, որի արդյունքում ի հայտ են գալիս դասընթացի բացթողումները: Ամբիոնների համապատասխան նիստերում քննարկվում են դասախոսների արդյունքները և տրվում են համապատասխան լուծումներ:

Գրեթե յուրաքանչյուր դասաժամի օգտագործվել են համակարգչային լսարանները, որոնք հնարավորություն են տալիս կիրառել նյութի մատուցման նոր եղանակներ՝ օգտվելով համացանցային ծրագրերից:

Պրակտիկաների պատշաճ իրականացման նպատակով վերակնքվել է պայմանագիրը «ՅՈՒԲՈՄ» ընկերության հետ, որտեղ ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի ուսանողներն անցկացրին իրենց արտադրական և նախաավարտական պրակտիկան:

Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ է եղել միջազգային ծրագրերին ֆակուլտետի աշխատակազմի մասնակցությունը:

Եվրամիության կողմից իրականացվող կրկնակի աստիճանաշնորհման «RETHINKe» ծրագրի շրջանակներում 2016թ. սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 10-ը Իսպանիայի Թագավորության Կոռունայի համալսարանում վերապատրաստում անցան Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոսներ Անահիտ Մարգարյանը և Մարինե Հովհաննիսյանը: Վերապատրաստումից հետո համալսարանի գիտական խորհրդին ներկայացվեց մանրամասն հաշվետվություն:

Ֆակուլտետի դասախոսներ Նելլի Կուտուգյանն ու Կարինե Ավետիսյանը 2016թ. հոկտեմբերի 13-ին Երևանում մասնակցել են «Բարձրագույն մանկավարժական կրթության բարեփոխումները ներառականության համատեքստում» խորագրով միջազգային աշխատաժողովին:

Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Վարազատ Ավետիսյանը 2017թ. մարտ ամսին մեկշաբաթյա դասախոսական աշխատանք է կատարել Բուլղարիայի Ռուսեի համալսարանում:

Նույն ամբիոնի դասախոսներ Հենրիկ Մելիքյանը, Մամիկոն Հակոբյանը և վարազրատ Ավետիսյանը 2017թ. հունիսի 17-30-ը ԵՄ «էրազմոս+ DOCMEN» ծրագրի շրջանակներում վերապատրաստվել են Բուլղարիայի Սոֆիայի տեխնիկական համալսարանում:

Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոսներ Նելլի Կուտուգյանը, Վարազրատ Ավետիսյանը և Շուշան Բաղդոյանը 2017թ. հուլիսի 9-21-ը ԵՄ «էրազմոս+ DOCMEN» ծրագրի շրջանակում Իտալիայի Հանրապետության Թուրինի պոլիտեխնիկական համալսարանում մասնակցել են «Ապագայի հասարակության կառուցումը» խորագրով ամառային դպրոցին:

2016-2017 ուսումնական տարվա ընթացքում Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Վահագն Մուրադյանը մասնակցել է բազմաթիվ միջազգային գիտաժողովների, ՀՀ ԿԳՆ Գիտության Պետական Կոմիտեի «Երիտասարդ գիտաշխատողների հետազոտությունների աջակցության ծրագիր»-ի շրջանակներում

ղեկավարում է «Լեոնային տարածքների գյուղատնտեսական մշակաբույսերի ծանր մետաղներով աղտոտման գնահատման և կանխատեսման հեռազննման մեթոդի մշակում» նախագիծը, 2017թ.-ին հաղթող է ճանաչվել «Արդյունավետ երիտասարդ գիտաշխատող (մինչև 35 տարեկան)- 2017» մրցույթում:

Եվրամիության կողմից իրականացվող «Erasmus+ Key Action 1» ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակներում 2016-2017 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում ուսումը Իսպանիայի Ալմերիայի համալսարանում շարունակեցին բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 2-րդ կուրսի ուսանող Գագիկ Ղարաբաղյանը և Սերվիս բաժնի 4-րդ կուրսի ուսանող Շիրազ Սահակյանը:

2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ընթացքում ուսանողների ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակներում Բուլղարիայի Հանրապետության Ռուսեի համալսարանում իրենց ուսումնառությունն են շարունակել Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 2-րդ կուրսի ուսանող Վարդան Մուսոյանը, նույն բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի Գայանե Իսոյանը, Համակարգչային ճարտարագիտություն բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողներ Գառնիկ Թոռչյանը և Լիանա Հարությունյանը:

Ամփոփիչ ատեստավորում

2016-2017 ուսումնական տարում բնագիտական ֆակուլտետն ավարտեցին 48 ուսանողներ՝ 47-ը բակալավրի կրթական աստիճանը և 1-ը՝ մագիստրոսական կրթական աստիճանը:

Ամփոփիչ ատեստավորման քննություններին և ավարտական աշխատանքների պաշտպանությանը ընդհանուր առմամբ թույլատրվել են մասնակցելու բակալավրի 48 ուսանողներ, որոնցից 2-ը՝ նախորդ ուսումնական տարիներից վերականգնված: Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա, Դեղագործական քիմիա, Կենսաբանություն, Քարտեզագրություն և կադաստրային գործ, Սերվիս բաժինների նշված 48 շրջանավարտներից դրական գնահատական են ստացել 47-ը, Սերվիս բաժնում ամփոփիչ ատեստավորման համար վերականգնված 1 ուսանողը չի ներկայացել:

Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 11 շրջանավարտներից միայն գերազանց գնահատականներով ավարտել են 6-ը, միայն գերազանց և լավ՝ 2-ը, խառը գնահատականներով՝ 2-ը, ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողը՝ լավ գնահատականով: Գերազանցության դիպլոմի են արժանացել 4 շրջանավարտներ:

Դեղագործական քիմիա բաժնի 11 շրջանավարտներից միայն գերազանց գնահատականներով ավարտել են 6-ը, միայն գերազանց և լավ գնահատականներով՝ 5-ը: Գերազանցության դիպլոմի են արժանացել 4 շրջանավարտներ:

Կենսաբանություն բաժնի 7 շրջանավարտներն էլ բակալավրի կրթական ծրագիրն ավարտել են միայն գերազանց գնահատականներով: Գերազանցության դիպլոմի են արժանացել 5 շրջանավարտներ:

Քարտեզագրություն և կադաստրային գործ բաժնի 4 շրջանավարտներից միայն գերազանց գնահատականներով ավարտել են 3-ը, խառը գնահատականներով՝ 1-ը: Գերազանցության դիպլոմի են արժանացել 3 շրջանավարտներ:

Սերվիս բաժնի 14 շրջանավարտներից միայն գերազանց գնահատականներով ավարտել են 6-ը, միայն գերազանց և լավ՝ 3-ը, միայն բավարար գնահատականով՝ 4-ը, խառը գնահատականներով՝ 1-ը, ուսանողական իրավունքները վերականգնած ուսանողը չի

ներկայացել ամփոփիչ ատեստավորման գործընթացին: Գերազանցության դիպլոմի են արժանացել 3 շրջանավարտներ:

Բնագիտական ֆակուլտետում 2017-2018 ուսումնական տարում եղել է մեկ մագիստրոս շրջանավարտ, ով գերազանց գնահատականով պաշտպանել է մագիստրոսական թեզը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախահագների կողմից կատարվել են հետևյալ դիտարկումները.

«Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա» մասնագիտության համար.

1. Առաջարկվել է ավելացնել հարցերի քանակը՝ ընդգրկելով հարցեր կրթական ծրագրի բոլոր բաժիններից:
2. Որոշ ավարտական աշխատանքներ ավարտվում էին միայն ավգորիթմի ներկայացմամբ, ուստի առաջարկվել է մշակել համապատասխան ծրագիր:

«Կենսաբանություն» մասնագիտության համար.

1. Որոշ աշխատանքներում գրականության ակնարկում քննարկվել և գրականության ցանկում ներկայացվել են ոչ ժամանակակից գիտական աշխատանքների տվյալներ:
2. Ուշադրություն պետք է դարձնել դասավանդվող որոշ առարկաների հատկապես լաբորատոր պարապմունքների ժամաքանակի ավելացման, ինչպես նաև ինքնուրույն աշխատանքների կազմակերպման վրա:

«Դեղագործական քիմիա» մասնագիտության համար.

1. Ավարտական աշխատանքներում փոքր է ինքնուրույն աշխատանքի կատարման մասնաբաժինը:
2. Որոշ աշխատանքներ ունենին նեղ քիմիական, տեխնոլոգիական, արտադրական ուղղվածություն, շատ չէին առնչվում կենսաբանության կամ դեղաբանության տարբեր բնագավառների հետ:
3. Ուսանողների ներկայացրած որոշ քիմիական միացությունների բարդ կառուցվածքը դժվարությամբ է ընկալվում հենց ուսանողի կողմից, և չի ներկայացվում բժշկության տարբեր բնագավառներում դրանց կիրառումը: Ուստի ավարտական աշխատանքի թեմաները նախօրոք պետք է քննարկվեն և հաստատվեն՝ հաշվի առնելով նշված դիտարկումները:

«Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության համար.

1. Առաջարկվում է մեծ ուշադրություն դարձնել գործնական գիտելիքների ձեռքբերմանը, քանի որ ուսանողների մի մասի մոտ բացակայում են գործնական հմտությունները:
2. Ավարտական աշխատանքներում առկա են տեխնիկական թերություններ՝ կապված առկա գրականությանը հղումների մասով:

«Սերվիս» մասնագիտության համար.

1. Որոշ ուսանողներ լիարժեք չէին տիրապետում գործնական բնույթի հարցերին, որոնք սերվիսի ոլորտում շատ կարևոր են:
2. Ուսման գործընթացում անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել պրակտիկաներին:

Միջոցառումներ

Հաշվետու ժամանակահատվածում բնագիտական ֆակուլտետից 3 ուսանողներ մասնակցեցին «Բազե-2016» համահայկական երիտասարդական հավաքին և համալսարանի մարզադահլիճը ապահովեցին թենիսի նոր սեղանով:

Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի ուսանողները մասնակցեցին ամենամյա «DigiTech Expo» ցուցահանդեսին:

ԳՊՀ ամենամյա գիտաժողովին, որը նվիրված էր ԳՊՀ պատվավոր բարերար Ժիրայր Նիշանյանի ծննդյան 80-ամյակին, մասնակցել են ֆակուլտետի ամբիոնների դասախոսները: Ներկայացվել են 17 գիտական զեկուցումներ ըստ ոլորտների. կենսաբանական գիտություններ՝ 6, էկոլոգիական գիտություններ՝ 2, Աշխարհագրություն, երկրաբանություն և երկրաբնաապահպանություն՝ 1, ֆիզիկամաթեմատիկական գիտություններ՝ 1, տեխնիկական գիտություններ՝ 7 զեկուցում:

Փետրվարի 17-ից Գավառի պետական համալսարանում մեկնարկած «Որակի ապահովման ազգային շրջանակը և դրա կիրառումը բուհերում» թեմայով վերապատրաստման դասընթացին իրենց մասնակցությունն ունեցան նաև բնագիտական ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմից անդամներ:

2017թ. մարտ ամսին կայացած «Լավագույն ուսանող-2016» հանրապետական մրցանակաբաշխությանը Գավառի պետական համալսարանից հաղթող ճանաչված 2 ուսանողներից մեկը բնագիտական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Ասատրյանն էր:

Ընդհանուր առմամբ, հաշվետու ուստարում բավական ակտիվ է եղել ուսանողական կյանքը բնագիտական ֆակուլտետում: Կազմակերպվել են տարաբնույթ ուսանողական գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, ցերեկույթներ, գեղարվեստական միջոցառումներ, որոնց մասնակցել են ուսանողներ ֆակուլտետի բոլոր բաժիններից և կուրսերից:

**ԳՊՀ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ**

2017-2018 ուսումնական տարին մեկնարկեց «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ և ակտիվ նախաձեռնություններ» կարգախոսով, որին համահունչ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները՝ համապատասխան ոլորտներում:

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

1. Բնագիտական ֆակուլտետի ՄԿԾ-ներում ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների հստակ սահմանում և այդ արդյունքներին հասնելու համար տարբերակված դասավանդման և ուսումնառության մեթոդների մշակում, ուսումնառության արդյունավետության բարձրացում:
2. Կրեդիտների բաշխման հստակ քաղաքականության իրականացում, կրեդիտային համակարգի բոլոր բաղադրիչների հետևողական կիրառում ուսումնական գործընթացում:

3. Ֆակուլտետի ամբիոններում կատարվող մագիստրոսական թեզերում, ավարտական և կուրսային աշխատանքներում բովանդակային բաղադրիչները՝ նորարարական, հետազոտական և ստեղծագործական մասերի հստակ ներկայացում:
4. Մասնագիտական ամբիոնների կողմից բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերի պարբերաբար վերանայում ու արդիականացում, դրանց բովանդակային և կառուցվածքային բարեփոխում ու բազմազանեցում:
5. ՄԿԾ-ների իրականացման ընթացքում ամբիոնների կողմից արդյունքների մշտադիտարկում և շարունակական բարելավում:

ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Մասնագիտական կողմնորոշում ապահովելու նպատակով ֆակուլտետի մասնագիտություններին ծանոթացնելու, ինչպես նաև դիմորդների ներգրավելու նպատակով կազմել գործողությունների պլան և պարբերաբար իրականացնել արդյունքների վերլուծություն:
2. Բնագիտական ֆակուլտետում ուսանողների կրթական և սոցիալական կարիքների վերհանման հստակ մեխանիզմների ապահովում: Ուսանողների համար անհրաժեշտ պայմանների ստեղծում գիտական-տեղեկատվական տարբեր շտեմարանների օգտագործման, գիտելիքների ինքնուրույն ձեռքբերման համար:
3. Մասնագիտական ամբիոնների կողմից առաջարկվող կամընտրական դասընթացների ընտրության կառուցակարգի կատարելագործում:
4. Մագիստրոսական կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի կարևորում, գիտա-հետազոտական պրակտիկայի և գիտական սեմինարի արդյունավետության բարձրացում, մագիստրոսների հետազոտական աշխատանքի հմտությունների զարգացում:
5. Բազմաբնույթ միջոցառումների կազմակերպում սովորողների հայրենասիրական, քաղաքացիական, իրավական, բարոյական, հոգևոր-մշակութային, աշխատանքային, բնապահպանական, գեղագիտական, էթիկական, ֆիզիկական պատշաճ դաստիարակության նպատակով:
6. Բնագիտական ֆակուլտետում գործող «Բնագետի ակումբ»-ի և «Տուրիզմի ակումբ»-ի աշխատանքների ակտիվացում:

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՍՆԱՕՓԱՆԴԱԿ ԿԱԶՄԻ ՈՐԱԿԻ

ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

1. Ֆակուլտետի ՊԴ կազմի մասնագիտական որակների շարունակական բարձրացում, դասախոսների աշխատանքի գնահատման նպատակով անցկացված հարցումների արդյունքների խորքային վերլուծությունների իրականացում, հարցումների պարբերաբար անցկացում, ուսուցման և ուսումնառության որակի համալիր ուսումնասիրություն, ներքին ստուգումների անցկացում:

2. Ֆակուլտետի ՊԴ կազմի մասնագիտական վերապատրաստման ապահովում:

ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

1. Գիտահետազոտական գործունեության զարգացման նպատակով ամբիոնների կողմից դրամաշնորհային ծրագրերի իրականացում:
2. Ուսանողների և դասախոսների համատեղ գիտական գործունեության իրականացում:

3. Ֆակուլտետի ամբիոնների գերակա գիտական ուղղությունների հստակեցում ամբիոնի գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների, ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման պահանջների հաշվառմամբ:
4. Ամբիոնների կողմից ուսումնամեթոդական ձեռնարկների տպագրման, դասախոսների հետազոտական գործունեության ակտիվացում:

ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՀԱՄԱԼՐՈՒՄ

1. Գրադարանի գրքաֆոնդի համալրում, նոր դասագրքերի, ուսումնական ձեռնարկների և ուղեցույցերի, մենագրությունների ձեռքբերում, տեղեկատվական պաշարների հարստացում, «E.Library.GSU» էլեկտրոնային գրադարանի համալրում, գրադարանի տեղեկատվական ռեսուրսների էլեկտրոնային քարտարանի գործարկում:
2. Բնագիտական ֆակուլտետի նյութատեխնիկական բազայի պահպանում և համալրում, ուսումնական լաբորատոր բազայի, ուսումնաարտադրական պրակտիկայի բազայի ընդլայնում:
3. Ֆակուլտետի ՄԿԾ-ների և շնորհվող որակավորումների որակի մասին անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության ապահովում, որակի բարձրացում:

**Մ. Պ. Ավագյան՝
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան**

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազանցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Կենսաբանություն 4-րդ	7	-	5	85,7
Քարտեզագրություն և կադաստրային գործ 4-րդ	5	-	2	60
Սերվիս 3-րդ	7	-	6	100
4-րդ	13	-	3	61,5
Համակարգչային ճարտարագիտություն 1-ին	11	1	5	72,7
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա 2-րդ	13	-	5	76,9
3-րդ	12	-	4	70
4-րդ	10	-	3	100
Դեղագործական քիմիա 2-րդ	4	-	2	100
3-րդ	5	-	-	80
4-րդ	11	-	2	90,9
Ընդամենը	98	1	37	73,5
Մագիստրատուրա				
Համակարգչային ճարտարագիտություն 1-ին	6	-	2	83,3
Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա 2-րդ	1	-	1	100
Ընդամենը	7	-	3	85,7

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմության %-ը
Բակալավրիատ				
Համակարգչային ճարտարագիտություն 1-ին Սերվիս 3-րդ Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա 2-րդ 3-րդ Դեղագործական քիմիա 2-րդ 3-րդ	13 7 14 11 4 7	- - - - - -	6 6 4 2 4 -	76,9 85,7 50 45,5 100 71,4
Ընդամենը	56	-	22	66,1
Մագիստրատուրա				
Համակարգչային ճարտարագիտություն 1-ին Բնապահպանություն և բնօգտագործում 1-ին	4 1	- -	1 -	25 100
Ընդամենը	5	-	1	40

2016/2017 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	1	-	48	6

Ֆակուլտետում գործող ամբիոնների թիվը՝ 2

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ, ԷԿՈԼՈԳԻԱՅԻ ԵՎ ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Սիմոնյան Արմեն Արշալույսի,
 ՀՀ գիտության վաստակավոր գործիչ,
 ՌԴ Բնական և էկոլոգիական գիտությունների
 ակադեմիաների ակադեմիկոս, կենսաբանական
 գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
 ԳՊՀ պատվավոր պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ավագյան Մարտին Պատվականի** – գյուղ. գիտ. դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Առաքելյան Լյուդմիլա Նիկոլայի** - կենս. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Գրիգորյան Ստասիկ Մնացականի** - գյուղ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Սարգսյան Վահան Արշավանի** – ԳՊՀ դոցենտ
5. **Հասասյան Գագիկ Գուրգենի** – դասախոս
6. **Մկրտչյան Լալա Արշալույսի** - դասախոս
7. **Հովհաննիսյան Մարինե Հրահատի** - ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Ավագյան Արամայիս Ռուստամի** – աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. **Թադևոսյան Արտաշես Վահանի** – տեխ. գիտ. թեկնածու, պրոֆեսոր
3. **Մարգարյան Անահիտ Սամվելի** – կենս. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Մխիթարյան Ազնիվ Կառլենի** – տեխ. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
5. **Սիմոնյան Ռուզան Մաքսիմի** – կենս. գիտ. թեկնածու, ԳՊՀ դոցենտ
6. **Ավետիսյան Կարինե Սամվելի** – քիմ. գիտ. թեկնածու, դոցենտ
7. **Մուրադյան Էդիկ Կամսարի** – տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
8. **Մուրադյան Վահագն Սոսի** – աշխ. գիտ. թեկնածու
9. **Գալոյան Ռուսլան Պապինի** – դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Մոսկվայի Մ. Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի Ա. Ն. Բելազերսկու անվան ֆիզիկո-քիմիական ինստիտուտում սինթեզված հակաօքսիդանտների ուսումնասիրություն:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումանմեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	-	-	38	6

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Симонян А. А., Симонян Р. А., Маргарян А. С., Симонян А. А., Симонян Л. А.** Изменение активности Ca^{2+} -АТФазы в митохондриях тканей белых крыс под влиянием производного пластохинона (SkQ1) при коразол-индуцированных эпилептиформных припадках // Мед. наука Армении, Т. 56, № 3, 2016, էջ 35-41:
2. **Симонян А. А., Маргарян А. С., Бадалян Р. Б.** Изменения активности АТФаз в митохондриях мозга крыс под влиянием пролин-богатого полипептида при коразол-индуцированных эпилептиформных судорогах. // Сборник научных трудов ГГУ, Т. 3, 2016, էջ 68-76:
3. Danielyan K. E., Simonyan A. A. New inhibitors and activators of xanthine oxidase and their roles in the fate of cells. // Collection of Scientific Articles of Gavar State University, V. 3, 2016, էջ 77-82:
4. **Սիմոնյան Ա. Ա., Մարգարյան Ա. Ս.** Էկոլոգիական ճգնաժամը և մուտացիաների թեղի կուտակումը գենոֆոնդում // «Գիտության աշխարհ» հանդես, № 1, 2016, էջ 46-51:
5. **Симонян А. А., Оганнисян М. Г.** Сдвиги активности НАДФ-зависимой изоцитратдегидрогеназы в тканях куриного эмбриона при гипотермии // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017, էջ 45-48:
6. **Симонян Л. А., Маргарян А. С., Симонян А. А., Оганнисян М. Г.** Применение здоровьесберегающих технологий в преподавании // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017, էջ 50-53:
7. Danielyan K. E., Simonyan A. A. Protective abilities of pyridoxine in experimental oxidative stress settings in vivo and in vitro. // Biomedicine Pharmacotherapy, V. 86, 2017, էջ 537-540:

8. Danielyan K. E., Simonyan A. A., Simonyan L. A. The interaction of the purine and pyrimidine metabolisms. // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017, էջ 54-56:
9. **Սիմոնյան Ա. Ա.** Էկոլոգիական ճգնաժամը և մուտացիաների բեռի կուտակումը գենոֆոնդում // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017, էջ 38-44:
10. **Тер-Татевосян Л. П., Аракелян Л. Н., Маргарян А. С., Бадалян Р. Б., Симонян А. А., Чаилян С. Г.** Роль гипоталамического пептида ПБП-1 в механизме регуляции активности щелочной и кислой фосфатаз у крыс при коразол-индуцированной эпилепсии // Мед. ж. Армении, Т. 57, № 1, 2017, էջ 59-66:
11. **Симонян А. А., Симонян Р. А., Маргарян А. С., Симонян А. А., Симонян Л. А.** Изменение активности Ca^{2+} -АТФазы в митохондриях тканей белых крыс под влиянием производного пластохинона (SkQ1) при коразол-индуцированных эпилептиформных припадках. // Мед. наука Армении, Т. 56, № 3, 2016, էջ 35-41:
12. **Հովհաննիսյան Մ. Հ., Առաքելյան Լ. Ն.** Նանկենսաբժշկությունը նանոտեխնոլոգիայի կարևորագույն բաղադրիչ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017, էջ 64-67:
13. Galstyan L. Kh., Avetisyan K. S. Synthesis of new hydrazones of 3-acetyl-4,5,5-trimethylfuran-2(5H)-ones and their biological activity // Book of abstracts of 5th International conference of young scientist “CHEMISTRY TODAY-2016”, Tbilisi, 2016, էջ 95:
14. **Սիմոնյան Ռ. Մ., Ֆեսյան Ս. Մ., Օքունյան Գ. Ռ., Բաբայան Մ. Ա., Սիմոնյան Գ. Մ., Ենգիբարյան Ա. Ա., Սիմոնյան Մ. Ա.** Կադմիումի իոններով էրիթրոցիտների թալանթներից հեմոգլոբինով հարուցված ՆԱԴՓՆ օքսիդազի արտազատման խթանումը և դրա արգելակումը α -տոկոֆերոլով *ex vivo* // Բժշկություն, գիտություն և կրթություն, 21, 2016, էջ 145-148:
15. **Симонян Р. М, Алекснян А. С., Маргарян А. С., Симонян Г. М., Саргсян М. Г., Алекснян С. С., Симонян М. А.** Идентичность форм оптических спектров поглощения NADPH оксидазы и ферригемоглобина в щелочной среде в восстановленном состоянии // Вопр.Теорет. Клин. Мед., 19(9), 2016, էջ 46-48:
16. **Симонян Р. М., Аветисян Л. Г., Симонян Г. М., Симонян К. В., Аветисян Р. А., Симонян М. А., Чавушян В. А.** Стабилизирующий эффект плодов Goji на клеточные мембраны спинного мозга крыс при оксидативном стрессе, индуцированном фруктозой // Мед. Наука Армении, НАН РА, LVI, 3, 2016, էջ 22-29:
17. **Чавушян В. А., Симонян Р. М., Исоян А. С., Аветисян Л. Г., Симонян К. В., Симонян Г. М., Бабаханян М. А. Симонян М. А.** Оценка параметров синаптической пластичности и уровня NADPH оксидазы гипокампа, миндалялы и спинного мозга при воздействии стевии в условиях диабетогенной фруктозы у крыс // Հանձնված է տպագրության:
18. **Симонян Р. М., Чавушян В. А., Бабаян М. А., Симонян Г. М., Чаилян С. Г., Симонян М. А.** Различия в изменении активности н ассоциации с гемоглобином

- изоформ NADPH – оксидазы из клеток мозга коровы // Нейрохимия, 34(2), 2017, էջ 1-8:
19. **Саакян Л. Ю., Симонян Г. М., Симонян Р. М., Симонян М. А., Секоян Э. С., Сагян А. С.** Антиоксидантная активность и механизмы мембраностаби-лизирующего действия нового β -гетероциклически замещенного аналога α -аминомасляной кислоты. *Вопр. Теорет. Клин. Мед.*, 20(2): 2017, էջ 129-136:
 20. **Симонян Р. М., Бабалян М. А., Оксюзян Г. Р. Симнян Г. М., Фесчян С. М., Енгибарян А. А., Симонян М. А., Матевосян Р. Ш.** Образование супероксидных и гидроксильных радикалов при расщеплении перекиси водорода гидроксидом аммония // *Биол.ж Армении*, LXIX, 2, 2017, էջ 53-58:
 21. Tepanosyan G., Muradyan V., Hovsepyan A., Minasyan L., Asmaryan Sh. A Landsat 8 OLI Satellite Data-Based Assessment of Spatio-Temporal Variations of Lake Sevan Phytoplankton Biomass // *Annals of Valahia University of Targoviste. Geographical Series*, 17 (1), 2017, էջ 83-89:
 22. Tepanosyan G. H., Asmaryan Sh. G., Muradyan V. S., Saghatelyan A. K. Mapping Man-induced Soil Degradation in Armenia's High Mountain Pastures through Remote Sensing Methods: a case study // *Remote Sensing Applications: Society and Environment, Volume 8*, November 2017, էջ 105–113:
 23. Asmaryan Sh. G., Muradyan V. S., Tepanosyan A. G., Hovsepyan A. A GIS and Remote sensing technologies: Modern approaches to solution of environmental problems // *Proceedings of International Scientific Conference of CSTO member states “Issues of Environmental Security”*. Yerevan, (27-29.09.2016), 2016, էջ 20-29:
 24. Tepanosyan A. G, Asmaryan Sh. G., Muradyan V. S, Saghatelyan A. K. Remote Sensing methods for assessing degradation of agricultural lands // *Proceedings of International Scientific Conference of CSTO member states “Issues of Environmental Security”*. Yerevan, (27-29.09.2016), 2016, էջ 206-216:
 25. **Тепаносян Г., Сагатеян А., Асмарян Ш., Мурадян В.** Использование метода Линейного спектрального разделения для получения индикаторов деградации сельскохозяйственных земель // *Материалы III Международной научной конференции “Региональные проблемы дистанционного зондирования земли”*. Сибирский федеральный университет, 2016, էջ 189-192:
 26. Muradyan V., Tepanosyan G., Asmaryan Sh., Sahakyan L., Saghatelyan A., Warner T. A. Predicting heavy metal concentrations in soils and plants using field spectrophotometry // *Proc. SPIE 10444, Fifth International Conference on Remote Sensing and Geoinformation of the Environment (RSCy2017)*, 1044411 (2017/09/06); doi: 10.1117/12.2279184:
 27. Muradyan V., Tepanosyan G., Asmaryan Sh., Saghatelyan A. Studying the dynamics of mountain ecosystems in the context of climate change employing remotely sensed data // *Proc. SPIE 10444, Fifth International Conference on Remote Sensing and Geoinformation of the Environment (RSCy2017)*, 104440A (2017/09/06); doi: 10.1117/12.2279423:
 28. **Асмарян Ш. Г., Мурадян В. С., Тепаносян Г. О., Овсепян А. А., Сагатеян А. К.** Применение спутниковых снимков Landsat 8 OLI/TIRS для оценки экологического

- состояния воды озера Севан в Армении // Региональные проблемы дистанционного зондирования земли: материалы IV Междунар. науч. конф., Красноярск, 12-15 сентября 2017, էջ 183-186:
29. **Тадевосян А. В., Сукисян А. Р., Пирумян Г. П.** Миграция ряда тяжелых металлов в системе почва-растение на фоне процессов водопоглощения в растении // Естественные и технические науки №3, 2016, էջ 32-34:
30. **Тадевосян А. В., Сукисян А. Р., Симонян Г. С., Пирумян Г. П.** Влияние абиотического стресса на рост растений // Успехи современного естествознания № 7, 2016, էջ 168-172:
31. Tadevosyan A., Sukiasyan A., Kirakosyan A., Aslikyan M., Charajyan K. Reculiarties of accumulation of some heavy metals on the chain of water-soft-plant // International Journal of Advenced Engineering and Management Research vol 2, Issue 5, 2017, էջ 1534-1541:
32. **Թադևոսյան Ա., Սուքիասյան Ա., Կիրակոսյան Ա.** Բուսական ծագում ունեցող նյութերի ռադիկալային ակտիվության որոշման քիմյումինեսցենտային եղանակ // Արտոնագիր AM20160072, 2016:
33. **Թադևոսյան Ա., Սուքիասյան Ա., Կիրակոսյան Ա., Փիրումյան Գ.** Բույսի խոնավապահության աստիճանի որոշման եղանակ // Արտոնագիր AM20160073, 2016:
34. **Թադևոսյան Ա., Սուքիասյան Ա., Կիրակոսյան Ա., Մելքոնյան Ս.** Ծանր մետաղներից հողատարածքները մաքրման եղանակ // Արտոնագիր AM 20170093, 20.06.2017թ.:
35. **Մխիթարյան Ա. Կ.,** Խիտոզանի ածանցյալների ստացման եղանակ // ՀՀ արտոնագիր N3103, 2017:
36. **Մխիթարյան Ա. Կ.** Գծային խիտոզանի ածանցյալներ // ՀՀ արտոնագիր N3104, 2017:
37. **Մխիթարյան Ա. Կ.,** N-մեթիլկարբամիդիլխիտոզանի հիման վրա պոլիմերամիներալային սորբենտներ // ՀՀ արտոնագիր N3105, 2017:
38. **Ավագյան Մ. Պ.,** ՀՀ տարածքում հողերի դեգրադացման առանձնահատկությունները թթվային անձրևների ներգործությամբ // Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017, էջ 100-104:
39. **Ավագյան Ա. Ռ.** Սերվիսագիտության մեթոդաբանության հարցերը // Կրթությունը և գիտությունը Արցախում, Գիտամեթոդական և գիտահանրամատչելի պարբերական սովորողների և ուսուցիչների համար, 2016, էջ 140-144:
40. **Ավագյան Ա. Ռ., Մանասյան Մ. Գ., Մանասյան Հ. Մ.** ՀՀ բնակչության միգրացիան և ժողովրդագրական իրավիճակի տարածաշրջանային առանձնահատկությունները // Ֆինանսներ և էկոնոմիկա, 4.200, Երևան, 2017, էջ 118-121:
41. **Մանասյան Ն. Մ., Ավագյան Ա. Ռ.** Բնակչության միգրացիան և տարաբնակեցումը կառուցվածքային տեղաշարժերը Հայաստանի Հանրապետությունում (2002-2015թթ.) // ԵՊՀ գիտական տեղեկագիր, Երկրաբանություն և աշխարհագրություն, 2017, 2, էջ 127-134:

42. **Ավագյան Ա. Ռ., Սուվարյան Ս. Ռ.** Կայուն զբոսաշրջությունը որպես մարդկային ռեսուրսների կառավարման գործոն // Արցախի պետական համալսարան, գիտական ընթերցումներ (հոդվածների ժողովածու), Ստեփանակերտ, 2016, էջ 28-31:
43. **Ավագյան Ա. Ռ.**, Մարդ-բնություն փոխհարաբերության սոցիալ-էթնիկական սկզբունքների վերլուծությունը // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 3 (18), 2016, էջ 111-118:
44. **Մկրտչյան Լ. Ա.**, Բնական միջավայրի վրա տուրիզմի բացասական ազդեցության որոշ հարցեր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017, էջ 105-109:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱՅԻ ԵՎ ՖԻԶԻԿԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

*Ամբիոնի վարիչ՝ Մելիքյան Հենրիկ Աշոփի,
տեխնիկական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր*

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Շեկյան Լավրենտի Արամի** - Հայաստանի ճարտարագիտական ակադեմիայի թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
2. **Հակոբյան Մամիկոն Զալիբեկի** - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Համբարյան Վարդան Կարապետի** - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ
4. **Խուրշուդյան Արմեն Կորյունի** – տնտ. գիտ. թեկնածու, դոցենտ
5. **Հովհաննիսյան Անդրանիկ Պարույրի** - տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
6. **Բաղդոյան Շուշան Գևորգի** – ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Կուտուզյան Նելլի Ալբերտի** - ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
2. **Ղազարյան Հայկ Գեղամի** – ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
3. **Դարբինյան Ալբերտ Սարգսի** - դասախոս, ԳՊՀ պրոֆեսոր
4. **Ավետիսյան Վարազդատ Կորյունի** – տեխ. գիտ. թեկնածու, դասախոս
5. **Հովհաննիսյան Մարգար Արտավազդի** - դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ
2. Կառավարման ավտոմատացված համակարգեր
3. Ծրագրային ապահովման մշակում
4. WEB-տեխնոլոգիաներ

5. Համակարգչային թեստավորում

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ռեսուրսային ծեռնարկ	Ռեսուրսամեթոդական ծեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	-	1	-	10	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Մելիքյան Հ. Ա.** Կառավարման տարածքային ավտոմատացված համակարգերի մշակման և փորձարկումների անցկացման մասին // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 4 (19), 2017, էջ 69-74:
2. **Հովհաննիսյան Մ. Ա.** Տեղեկատվական տեխնոլոգիաները ուսումնական պրոցեսում. Հեռավար ուսուցման համակարգեր // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 4 (19), 2017, էջ 75-80:
3. **Кутузян Н. А., Шекян А. Л., Шекян Л. А.** Изгиб балки на упругом шероховатом слое под действием равномерно распределенных поперечных и сжимающих продольных сил // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 4 (19), 2017, էջ 29-37:
4. **Խուրշուդյան Ա. Կ.** Նեյրոնային ցանցերի կիրառությունը տնտեսական օբյեկտների «կլաստերացման» համար // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 4, 2017, էջ 81-89:
5. **Խուրշուդյան Ա. Կ., Ավետիսյան Վ. Կ.** Նեյրոնային ցանցերի կիրառությունը տնտեսական գործընթացների մոդելավորման համար // ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 4 (19), 2017, էջ 90-99:
6. **Հակոբյան Մ. Զ.** Մթնոլորտի երկրամերձ շերտերում վնասակար գազային բաղադրիչների չափման համար արեգակին հետևող ավտոմատ համակարգ // ՀԱՊՀ Լրաբեր: Գիտական հոդվածների ժողովածու: Մաս 1, Երևան, Ճարտարագետ, 2017, էջ 254-260:
7. **Հակոբյան Մ. Զ., Հակոբյան Շ. Մ.** Windows օպերացիոն համակարգում թղթապանակները գաղտնաբառելու հնարավորությունները // ՀԱՊՀ Լրաբեր: Երևան, 2017, 1-2 (64-65), էջ 84-89:
8. Ghazaryan H. G. Comparison of Power of Generalized - homogenous polynomial // Armenian Math. Union, Annual Session 2017, Yerevan 2017.
9. Margaryan V. N., Ghazaryan H. G., Lower Bounds for Polynomial of many variables // Journal of Contemporary Mathematical Analysis. Vol.52, no. 5, 211 - 220, 2017.
10. Ghazaryan H. G. Semilocality and Density of Multi - Anisotropic Sobolev Spaces // Communications in Mathematics and Mathematical Sciences. Vol. 8, Issue 1, 37 - 56, 2017.
11. **Ղազարյան Հ. Գ. և այլք,** «Մաթեմատիկական տերմինների բացատրական բառարան» (I - VI դասարանների համար) // Երևան, 2017:

**ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՖԱԿՈՒԼՏԵՏ**

Դեկան՝ Ղաջոյան Համլետ Գրիշայի,
փիլիսոփայական գիտությունների
թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
Դեկանի տեղակալ՝ Գևորգյան Գոհար Վոլոդյայի

**ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ**

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011301.01.6	011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության բակալավր
011301.01.7	011301.00.7 Ընդհանուր մանկավարժություն Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Մանկավարժության մագիստրոս
011401.18.6	011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն Պարմություն	Մանկավարժության բակալավր
011401.18.7	011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն Պարմություն	Մանկավարժության մագիստրոս
042101.01.6	042101.00.6 Իրավագիտություն Իրավագիտություն	Իրավագիտության բակալավր
042101.01.7	042101.00.7 Իրավագիտություն Իրավագիտություն	Իրավագիտության մագիստրոս

Ուսանողների թիվը՝ 156

Շրջանավարտների թիվը՝ 37

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի գործունեությունը հաշվետու ժամանակաշրջանում ընթացել է 2016-2017 ուսումնական տարվա ռազմավարական ծրագրին և գործողությունների պլանին համապատասխան: Հաշվետու ժամանակաշրջանը համընկավ ինքնավերլուծության և ինստիտուցիոնալ հավատարմագրման նախապատրաստման գործընթացի հետ և այդ ուղղությամբ կատարվեցին հետևողական աշխատանքներ: Երկրորդ կիսամյակում ուսումնասիրվեց ինստիտուցիոնալ հավատարմագրում իրականացնող փորձագիտական խմբի եզրափակիչ զեկույցը և 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգում ներառվեցին գործունեության նոր ուղղություններ:

Ֆակուլտետի գործունեության գլխավոր նպատակը ուսման որակի բարելավումն է, ուսուցման արդյունավետության բարձրացումը: Արդյունավետությունը չափելի դարձնելու համար ֆակուլտետը հաշվետու ժամանակաշրջանում առաջնորդվեց ռազմավարական այն մեթոդաբանությամբ, որի համաձայն տարանջատվեցին «ուսման առաջադիմություն» և «ուսման որակ» հասկացությունները: Ուսման առաջադիմությունը չափվում է տոկոսներով: Ֆակուլտետի տարեկան ռազմավարական ծրագրում նախատեսել էինք ուսման առաջադիմություն 75-80%-ի սահմանագծում թույլ չտալով նահանջ: Ռազմավարական այս պահանջը բակալավրիատի բոլոր խմբերում կատարված է: Այսպես, երեք մասնագիտությունների բոլոր առաջին կուրսերում ուսման առաջադիմությունը կազմել է 84.2 %, երկրորդ կուրսերում 76%, երրորդ կուրսերում 88.9%: Սրանք 2-րդ կիսամյակի տվյալներն են, որոնք ընդամենը 1.5 %-ով են տարբերվում առաջին կիսամյակի տվյալներից: Ուսման առաջադիմությունը առաջին կիսամյակում կազմել է 85.1%, երկրորդ կիսամյակում 84.2%: Եթե բակալավրիատում կարողացանք կատարել ռազմավարական ծրագրով նախատեսված պահանջը, ապա նույնը չստացվեց մագիստրոսական խմբերում: Առաջին կիսամյակում սովորողների ուսման առաջադիմությունը կազմեց 74.2 %, մինչդեռ 2-րդ կիսամյակում նվազեց՝ կազմելով 62.4%: Վերլուծությունը ցույց տվեց, որ նվազման պատճառներից մեկը ֆինանսական կարգապահության խախտումն է, ինչի հետևանքով մի շարք ուսանողների չի թույլատրվել մասնակցել քննաշրջանին: 1-ին կիսամյակում 100% առաջադիմություն ապահովեց 9 խումբ, 2-րդ կիսամյակում 7 խումբ, որից մագիստրոսական միայն 1 խումբ՝ Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 1-ին կուրսը:

Ամփոփիչ ատեստավորման քննություններին մասնակցել են բակալավրիատի և մագիստրատուրայի 37 ուսանող: Ամփոփիչ ատեստավորման քննությունների արդյունքներով բակալավրիատում և մագիստրատուրայում ուսման առաջադիմությունը կազմել է 100 %: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների կողմից հաշվետվություններում ներկայացված առաջարկությունները, դիտողություններն ու նկատառումները ներառվել են ֆակուլտետի զարգացման հայեցակարգում:

Ուսման որակի աստիճանական բարելավումը ֆակուլտետի առաջնահերթ խնդիրներից է: Հաշվետու ժամանակահատվածում գործողությունների իրականացման

պլանում նախատեսել ենք չափելիության հստակ ցուցանիշ, այն է՝ ուսանողների կողմից վաստակած ընդհանուր գնահատականների մեջ «գերազանց» և «լավ» գնահատականների տեսակարար կշիռը բարձր պահել 60 %-ի սահմանագծից: Բակալավրիատում և մագիստրատուրայում 1-ին և 2-րդ կիսամյակներում միասին ուսանողները ստացել են 637 «գերազանց» գնահատականներ, 305՝ «լավ» և 227՝ «բավարար» գնահատականներ: Թվերի համադրումից ակնհայտ է «գերազանց» և «լավ» գնահատականների առավել լինելը «բավարար» գնահատականների համեմատ: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուսանողների մեծամասնության մոտ կա բարձր գնահատականներ ձեռք բերելու ձգտում: Ուսանողները շահադրված են լավ սովորել և հաղթել ֆակուլտետում 25 անվճար տեղերի համար պայքարում: Անվճար և վճարովի տեղերի փոխատեղման մրցույթի արդյունքում 5 ուսանող կորցրել են անվճար սովորելու իրավունքը՝ այն զիջելով ավելի բարձր ՄՈԳ ունեցողներին: Տարբեր հիմնադրամներից օգտվելու համար ևս բարձր ՄՈԳ ունենալը անհրաժեշտ պայմաններից մեկն է: 2016-2017 ուստարվա ընթացքում 98 ուսանող օգտվել են տարբեր հիմնադրամներից, վարձի զեղչից, որը կազմում է ֆակուլտետի ուսանողների 63.2 %-ը: Նախորդ ուսումնական տարում տարբեր հիմնադրամներից օգտվել են 57-ը: «Հրայր և Աննա Հովնանյաններ» հիմնադրամից օգտվել են 17 ուսանող, ՀՕՖ-ի «Ժիրայր Նիշանյան» հիմնադրամից՝ 16, Հայաստանի երիտասարդական հիմնադրամից՝ 6, «Վիվա Սելլ-ՄՏՍ» ընկերությունից՝ 4, «Ամբրո-Հայաստան»-ից՝ 6, Հայ կրթական հիմնարկությունից՝ 1, «Փարոս» համակարգի շահառու 12 ուսանող օգտվել է ՀՀ պետական բյուջեի միջոցներից: Ուսման վարձի զեղչ կիրառվել է մարտական հերթապահություն իրականացրած 11 և 2 և ավելի երեխաներ ունեցող 2 ուսանողի: 2 ուսանողի ուսման վարձը փոխանցվել է Գավառի քաղաքապետարանի կողմից: Ֆակուլտետի զարգացման հայեցակարգում նախատեսվել էր աճ 5%-ով, որը 45%-ի փոխարեն կկազմեր 50%: 2017-2018 ուստարվա զարգացման հայեցակարգում նախատեսում ենք աճ ևս 5 %-ով:

Հաշվետու ուսումնական տարում ևս կարևորվել են առաջին կուրս ընդունված ուսանողների հետ տարվող աշխատանքները, որն սկսվում է ծնողների հետ օգոստոսյան հանդիպումից: Սեպտեմբերի 1-ին ուսումնասիրեցինք ուսանողների կողմից լրացված հարցաթերթիկները, որի շնորհիվ պատկերացում կազմեցինք ուսանողների սոցիալական վիճակի, նախասիրությունների, հասարակական ակտիվության մասին:

227 «C» գնահատականները ստիպում են առանձնացնել «հետնապահ» ուսանողների, նրանց հետ տանել լուրջ, նպատակաուղղված աշխատանք: Հաշվետու ժամանակահատվածում Տարրական մանկավարժություն և մեթոդիկա բաժնի 1-ին կուրսը ևս դեկանատի և Հասարակական գիտությունների ամբիոնի ուշադրության կենտրոնում էր, քանի որ ուսման առաջադիմության ու կարգապահական ցուցանիշներով զիջում էր նախորդներին:

Հաշվետու ժամանակահատվածում աշխատանքներ կատարվեցին բոլոր ամբիոններում ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի վերանայման ու թարմացման ուղղությամբ: Փոփոխությունները հիմնականում կապված էին բակալավրիատում և մագիստրատուրայում մանկավարժական բաղադրիչի ներառման հետ: Աշխատանքների ընթացքում համագործակցել ենք հանրապետության առաջատար պետական բուհերի համապատասխան ամբիոնների հետ:

Հասարակական գիտությունների ամբիոնը համագործակցել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Սկզբնական կրթության ֆակուլտետի հետ, իսկ Պատմության ամբիոնը՝ Երևանի պետական համալսարանի Պատմության ֆակուլտետի հետ: Իրավագիտության ամբիոնը շարունակեց պրակտիկ և տեսական ոլորտի դասախոսական կազմի հետ արդյունավետ համագործակցությունը:

Ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի վերանայումը և արդիականացումը շարունակական գործընթաց է: Կան դժվարություններ՝ գործատուների հետ համագործակցության և կապի ամրապնդման, նրանց պահանջների հաշվառման, առարկայական ծրագրերում ելքային արդյունքների, ուսումնական պլաններում համապատասխան փոփոխություններ կատարելու առումով: Ֆակուլտետի ամբիոնները համագործակցել են տարածաշրջանի հանրակրթական դպրոցների, մշակութային հիմնարկների և իրավապահ մարմինների հետ, այնուհանդերձ արդյունքները դեռևս բավարար չեն:

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում մասնագիտական կրթական ծրագրերն իրականացնում են բարձրակարգ մասնագետներ, ովքեր ունեն դոկտորի և թեկնածուի գիտական աստիճաններ, պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ: Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի երեք ամբիոններում աշխատել են 37 դասախոս, որից՝ գիտության դոկտորներ են 6-ը, գիտության թեկնածուներ՝ 17-ը, ասիստենտներ՝ 14-ը: Եղած համակազմի կայունությունը ապահովվել է և շարունակվում է դասախոսական կազմի համալրումը երիտասարդ կադրերով:

Ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի աշխատակազմը և դասախոսները մասնակցեցին վերապատրաստման դասընթացների, վերանայվեցին ու արդիականացվեցին դասախոսությունները, առարկայական ծրագրերը՝ դրանցում ներառելով գնահատման և ուսումնառության մեթոդները:

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնների վարիչների կողմից կազմակերպվել են դասախոսումներ, կատարվել է արդյունքների վերլուծություն: Հասարակական գիտությունների ամբիոնի կողմից ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել է 12 դասախոս, Իրավագիտության ամբիոնում՝ 10, իսկ Պատմության ամբիոնում՝ 7 դասախոս: 2 դասախոս անցկացվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում իրականացնող փորձագիտական խմբի կողմից:

Ուսանողների կարգապահական հարցերը ևս եղել են դեկանատի ուշադրության կենտրոնում: Բացատրական աշխատանքների միջոցով աշխատել ենք նվազագույնի հասցնել դասերից անհարգելի բացակայությունների թիվը: 1-ին կիսամյակում անհարգելի բացակայությունների պատճառով նկատողություն են ստացել ֆակուլտետի 21, 2-րդ կիսամյակում՝ 19 ուսանող, որը կիսով չափ պակաս է նախորդ տարվա ցուցանիշից:

2016-2017 ուսումնական տարում ֆակուլտետում սովորել է 156 ուսանող: Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ է ընդունվել 48 ուսանող, բակալավրիատում՝ 21, մագիստրատուրայում՝ 27 ուսանող: Այլ ֆակուլտետներից Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ են տեղափոխվել 8 ուսանող, զինձառայության հիմքով տարկետում է տրամադրվել 7 ուսանողի, տարկետումից վերականգնվել են 10 ուսանող: Տարբեր պատճառներով հեռացվել են 8 ուսանող: Եվրամիության «Erasmus+» միջազգային

փոխանակման ծրագրով արտերկրում ուսումը շարունակել իրավագիտություն բաժնի բակալավրիատի և մագիստրատուրայի 7 ուսանող:

Ուսանողական համակազմի համալրման նկատառումներով 2017 թվականի փետրվար ամսին Բնագիտական ֆակուլտետի հետ համատեղ այցելություններ ենք կատարել տարածաշրջանի հանրակրթական դպրոցներ՝ հանդիպումներին մասնակից դարձնելով արտերկրում ուսանած, հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին:

Հաշվետու ժամանակահատվածում ֆակուլտետի դասախոսները և ուսանողները մասնակցեցին գիտաժողովների: Գավառի պետական համալսարանի պատվավոր բարերար Ժիրայր Նիշանյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին նվիրված գիտաժողովին մասնակցեցին ֆակուլտետի 10 դասախոս:

Գյումրիում և Վանաձորում «Ներառական կրթության հիմնախնդիրները» թեմայով միջազգային և հանրապետական գիտաժողովներին մասնակցեց Հասարակական գիտությունների ամբիոնի դասախոս Արմինե Վահրամի Դավթյանը:

Գյումրիում և Վանաձորում կազմակերպված ուսանողական հանրապետական գիտաժողովներին զեկուցումներով հանդես եկան ֆակուլտետի 15 ուսանող և ստացան հավաստագրեր, գրքեր:

Երևանի Մերգեյանի անվան մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում մեկնարկած «EXPO-Ռուսաստան, Հայաստան և Իրան» 7-րդ միջազգային ցուցահանդեսին ներկայացվեցին պատմության ամբիոնի դասախոսներ Վալերի Գեորգի Թունյանի և Արսեն Աշոտի Հակոբյանի ռուսերեն աշխատությունները:

Հաշվետու ուստարում ֆակուլտետում բացվեց համակարգչային լսարան, որի հնարավորությունները օգտագործվեցին ինչպես դասերի անցկացման, այնպես էլ գրական-գեղարվեստական միջոցառումների նախապատրաստման նպատակով:

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՉԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ

Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական հայեցակարգային ուղղություններն են.

1. *Ռուսման գործընթացի կազմակերպման և կրթության որակի բարելավման ոլորտում*
 - 1.1. ֆակուլտետում գործունեություն ծավալել «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ, ակտիվ նախաձեռնություններ» կարգախոսը գործնականում իրագործելու նպատակով,
 - 1.2. ֆակուլտետում շարունակել ուսման որակի բարելավման ուղղությամբ տարվող աշխատանքները,
 - 1.3. 2017-2018 ուստարում ապահովել ուսման առաջադիմություն՝ 75-80 %-ի սահմաններում,
 - 1.4. վերանայել և լրամշակել դասընթացների, պրակտիկաների ծրագրերը՝ կրեդիտների հատկացման, ուսուցման և ուսումնառության, գնահատման մեթոդների, առկա և հեռակա ուսուցման ձևերում դասընթացների լսարանային և ինքնուրույն ժամաքանակների և վերջնարդյունքների հասանելիության տեսանկյունից՝ առկա և հեռակա ուսուցման համակազմի համար,

- 1.5. շարունակել իրականացնել հենանիշային վերլուծություն՝ «բենչմարքինգ» ֆակուլտետի ՄԿԾ-ների և նմանատիպ ծրագրեր իրականացնող առաջատար բուհերի կրթական ծրագրերի հետ և կատարել վերլուծություններ,
- 1.6. ամբիոններում իրականացնել դասախոսումներ և վերլուծել արդյունքները,
- 1.7. զարգացնել ակադեմիական խորհրդատուների ինստիտուտը՝ ակտիվացնելով աշխատանքները ուսանողական խմբերի հետ,
- 1.8. հստակեցնել ֆակուլտետի ամբիոնների գիտական ուղղությունները՝ ամբիոնների գիտական ներուժի, դասախոսների գիտական հետաքրքրությունների և ՀՀ Գեղարքունիքի մարզի զարգացման պահանջների հաշվառմամբ,
- 1.9. ամբիոններում ամրագրել գիտական ուղղությունները, հետազոտական աշխատանքների տարեկան հաշվետվությունների, կատարված աշխատանքների արդյունքների գնահատումների հիման վրա իրականացնել վերլուծություններ,
- 1.10. մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաները փոխկապակցել տարածաշրջանի արդիական խնդիրների ուսումնասիրման, վերլուծության, հետազոտության հետ,
- 1.11. մշակել ամբիոնների հետազոտական գործունեության կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ ծրագրեր,
- 1.12. անցկացնել հարցումներ պրոֆեսորադասախոսական կազմի որակավորման բարձրացման դասընթացների վերաբերյալ, վերլուծության արդյունքները ներկայացնել ԱԲՎ,
- 1.13. բարձրացնել կամընտրական դասընթացների վերաբերյալ ուսանողների իրազեկությունը,
- 1.14. առավելագույնի հասցնել տարբեր հիմնադրամներից ուսանողների օգտվելու հնարավորությունը, նպաստել սովորողների ընտանիքների ֆինանսական «բեռի» թեթևացմանը, ուսումնասիրել և բացահայտել նրանց սոցիալական կարիքները, իրականացնել աջակցության ծրագրեր,
- 1.15. համախմբել ֆակուլտետի աշխատակիցների և դասախոսների ներուժը դրամաշնորհային ծրագրերին մասնակցելու նպատակով,
- 1.16. պրոֆեսորադասախոսական և վարչական կայուն կազմի պահպանումը համարել ֆակուլտետի առաջընթացի գլխավոր երաշխիքը:

2. Գիտելիքների նկատմամբ ուսանողների հետաքրքրությունն ու շահագրգռվածությունը ապահովելու ոլորտում

- 2.1. որպես աշխարհայացքային կողմնորոշում՝ նպատակաուղղված աշխատանքների միջոցով շեշտադրել 21-րդ դարում կայուն ու խորը գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը, արժևորել գիտելիքը և դրա դերն ու նշանակությունը մարդու անձնական և հասարակական կյանքում,
- 2.2. ֆակուլտետի համակարգչային լսարանի և համացանցի հնարավորությունները օգտագործել լիարժեք՝ դասերի անցկացման, ընթերցանության և գրական-գեղարվեստական միջոցառումների նախապատրաստման համար,
- 2.3. վերանայել ուսումնական պլաններով նախատեսված բոլոր դասընթացների դասախոսությունները, հետևել դրանց լրամշակման, թարմացման և էլեկտրոնային ուսուցման համակարգում ներբեռնման աշխատանքներին,

- 2.4. ուսանողների հասարակական ակտիվության բարձրացումը համարել ոչ միայն որակյալ մասնագետ, այլև ակտիվ քաղաքական դիրքորոշում, լայն աշխարհայացք և կայուն համոզմունքներ ունեցող անհատների կայացման բաղկացուցիչ մասը: Նպաստել ուսանողական ինքնակառավարման մարմիններում ուսանողների ակտիվությանը և նախաձեռնողականությանը: Ապահովել ֆակուլտետի ուսանողների ակտիվ մասնակցությունը համալսարանի կառավարման գործընթացներում,
 - 2.5. գործնականում աջակցել և խրախուսել արտահամալսարանական հասարակական կազմակերպություններին և կամավորական շարժումներին, ոչ ֆորմալ ուսուցման համակարգում ուսանողների ներգրավմանը, ակտիվ մասնակցությանը, ստեղծել հնարավորություններ՝ փոքր դրամաշնորհային ծրագրերին ուսանողների մասնակցության համար,
 - 2.6. օգտագործել ԳՊՀ իրավաբանական կլինիկայի հնարավորությունները նախաավարտական պրակտիկաների անցկացման, միջբուհական տարաբնույթ միջոցառումների՝ դատախաղ, «կլոր սեղան»-քննարկումներ, բանավեճեր, նախապատրաստման և կազմակերպման նպատակով: Ապահովել առաջատար ուսանողների մասնակցությունը Ամառային և Ձմեռային դպրոցների դասընթացներին:
3. *Ուսանողական առօրյան հետաքրքիր դարձնելուն, սովորողների հոգևոր-մշակութային դաստիարակությանը և գեղարվեստական ճաշակի բարձրացմանն ուղղված աշխատանքների ոլորտում*
- 3.1. կարևորել 1-ին կուրս ընդունված ուսանողների ծնողների հետ հանդիպումը և 1-ին կուրսեցիների կողմից հարցաթերթիկների լրացումն ու դրանց ուսումնասիրությունը նրանց նախասիրություններին ծանոթանալու, հասարակական ակտիվությունը բարձրացնելու առումով,
 - 3.2. օգտագործել բոլոր հնարավոր մեթոդներն ու միջոցները՝ ուսանողների առօրյան առավել հետաքրքիր դարձնելու համար, սերտորեն համագործակցել ԳՊՀ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության հետ,
 - 3.3. կազմակերպել ճանաչողական, գիտագեղարվեստական և գրական-գեղարվեստական ուղղվածություն ունեցող միջոցառումներ,
 - 3.4. ուսանող-դասախոս փոխհարաբերություններն առավել ամրապնդելու, օգտակար սոցիալական փորձի փոխանցման նպատակով կազմակերպել համատեղ տարաբնույթ միջոցառումներ ազգային ավանդույթների, հոբբեյանների, նշանավոր դեպքերի, պատմական իրադարձությունների վերաբերյալ,
 - 3.5. ուսանողների շրջանում կազմակերպել մասնագիտական, գեղարվեստական գրականության քննարկումներ՝ ընթերցանության նկատմամբ հետաքրքրությունը մեծացնելու նպատակով, ուսանողների հանդիպումներ մշակույթի և արվեստի ոլորտի ներկայացուցիչների հետ:

**Հ. Գ. Ղազոյան՝
ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների
ֆակուլտետի ղեկավար**

**ՔՆՆԱՇՐՋԱՆԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
ՁՄԵՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ**

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն				
1-ին	4	-	3	75
2-րդ	13	-	4	62
3-րդ	19	-	6	79
4-րդ	7	-	2	57.1
Պատմություն				
2-րդ	5	-	1	100
3-րդ	4	-	4	100
4-րդ	4	-	4	100
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության)				
1-ին	15	-	2	86.7
2-րդ	9	-	5	100
3-րդ	15	-	12	100
4-րդ	6	-	4	100
Ընդամենը	101	-	47	85.1
Մագիստրատուրա				
Իրավագիտություն				
1-ին	13	-	1	61.5
2-րդ	14	-	2	78.5
Պատմություն				
1-ին	8	-	3	75
2-րդ	4	-	2	50
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության)				
1-ին	4	-	2	100
2-րդ	3	-	3	100
Ընդամենը	46	-	13	73.9

ԱՄԱՌԱՅԻՆ ՔՆՆԱՇՐՋԱՆ

Մասնագիտություն, կրթական աստիճան, կուրս	Քննաշրջանին մասնակցել են	Անբավարար գնահատական ստացած ուսանողների թիվը	Գերազան- ցիկների թիվը	Առաջադիմու- թյան %-ը
Բակալավրիատ				
Իրավագիտություն 1-ին	5	-	3	100
2-րդ	11	-	-	45.4
3-րդ	26	-	7	80.8
Պատմություն 2-րդ	5	-	3	100
3-րդ	4	-	4	100
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության)				
1-ին	14	-	-	79
2-րդ	9	-	2	100
3-րդ	15	-	4	100
Ընդամենը	89		23	84.2
Մագիստրատուրա				
Իրավագիտություն 1-ին	12	-	1	50
Պատմություն	7	-	3	57.1
Մանկ. և մեթոդ. (տարր. կրթության) 1-ին	4	-	2	100
Ընդամենը	23		6	61

2016/2017 ՈՒՍ. ՏԱՐՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ԵՆ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Ձեկուցումների թեզիս
-	2	-	-	37	-

Ֆակուլտետում գործող ամբիոններ թիվը՝ 3

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄԲԻՈՆ

Ամբիոնի վարիչ՝ *Քուրքյան Լուսիկ Ներսեսի,*
մանկավարժական գիտությունների թեկնածու,
դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. **Ղաջոյան Համլետ Գրիշայի** - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, ԳՊՀ պրոֆեսոր
2. **Օհանյան Հայկ Հեքիմի** - մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
3. **Մայիլյան Անուշ Տոլիկի** – մանկավարժական գիտությունների թեկնածու, դասախոս
4. **Գարեյան Մելանյա Վարդանի** - դասախոս
5. **Խաչիկյան Հայկ Խաչիկի** - դասախոս
6. **Համբարձումյան Արմինե Եփրեմի** - դասախոս
7. **Պետրոսյան Նաիրա Ֆահրադի** - դասախոս
8. **Ղաջոյան Արմինե Սամվելի** – ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. **Բարսեղյան Պարզև Աշոտի** - փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ
2. **Զարգարյան Արփինե Հրանտի** - դասախոս
3. **Կոտոլկյան Թամարա Հակոբի** - դասախոս
4. **Սաֆարյան Ալիտա Սոսի** - դասախոս
5. **Դավթյան Արմինե Վահրամի** – դասախոս

ԱՄԲԻՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ներառական կրթության մանկավարժական, սոցիալ-մանկավարժական, հոգեբանական հիմնախնդիրները և մանկավարժների մասնագիտական-մանկավարժական իրազեկությունները (կոմպետենտությունները):
2. Մարդը ժամանակակից սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային և կրթադաստիարակչական զարգացման արժեհամակարգում:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	-	-	9	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Բարսեղյան Պ.** Կրոնական կազմակերպությունների դասակարգումը, Տարեգիրք 2016, Աստվածաբանության ֆակուլտետ, Երևան, 2016, էջ 245-254:
2. **Բարսեղյան Պ. Ա.** Ոգեպաշտության վերապրովները պատմական Հայաստանում// ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, Երևան, N 4 (19), 2017, էջ 141-148:
10. **Բաղինյան Ա. Պ.**, «Արմենիա Ինչուրանս» ապահովագրական ՍՊԸ-ն որպես ՀՀ ապահովագրական շուկայի բաղադրիչ // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 3 (18), 2016թ., էջ 303-310
11. **Թորոսյան Դ. Լ.**, Հյուրանոցային զարգացման վիճակը և հեռանկարները Գեղարքունիքի մարզում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 3 (18), 2016թ., էջ 311-319
12. **Խաչատրյան Գ. Ա.**, Հարկային բեռի տեսական մոտեցումները // Արդարադատություն գիտական հանդես հունիս 2, (33), 2016թ., էջ 80-84
13. **Վերգնյան Մ. Ն., Ղուրջուդյան Լ. Մ., Վերգնյան Գ. Հ.**, Տոկոսային դիսկի կառավարման արդյունավետությունը «ՎՏԲ-Հայաստան Բանկե ՓԲԸ-ի օրինակով // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017թ., էջ 155-167
14. **Խաչատրյան Գ. Ա.**, Հարկային բեռի գնահատման մեթոդները, դրանց առավելությունների ու թերությունների վերլուծությունը // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017թ., էջ 168-176
15. **Բաղինյան Ա. Պ.**, Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը Հայաստանի Հանրապետությունում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017թ., էջ 206-215
16. **Թորոսյան Դ. Լ.**, «Սևանե ազգային պարկի հնարավորությունները որպես էկոտուրիզմի զարգացման միջոց // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017թ., էջ 216-222
17. **Մարդոյան Ա. Վ.**, Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական և բնօգտագործման վճարների համեմատական վերլուծություն // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017թ., էջ 223-228
18. **Մարդոյան Ա. Վ.**, Հանքարդյունաբերության ոլորտում առկա հիմնախնդիրները («Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատե ՓԲԸ-ի օրինակով) // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017թ., էջ 229-236
19. **Խաչատրյան Հ. Հ., Մելքոնյան Մ.**, FEASIBILITY ANALYSIS OF HIGH-PRODUCTIVITY WHEAT SEED // ՀԱԱՀ տեղեկագիր, N4 (56), 2016թ., էջ 101-105
20. **Խաչատրյան Գ. Ա.**, «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ ավարտական աշխատանքի և մագիստրոսական թեզի պատրաստման մեթոդական ուղեցույց // Երևան, Լիմուշ, 2016թ., 32 էջ
21. **Ղազարյան Ա. Յու.**, Համակարգչային առաջադրանքներ և խնդիրներ «Համակարգչային հմտություններ» առարկայից, Ուսումնամեթոդական ձեռնարկ, ՀՊՏՀ, «Տնտեսագետ» հրատարակչություն, Երևան, ՀՊՏՀ, 2016թ.

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԱՄԲՈՆ

Ամբիոնի վարիչ՝ Ղուկոյան Հակոբ Մելսիկի
 Կնիքստորագրության թեկնածու,
 դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր

ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ամիրխանյան Սամվել Գրիգորի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Հակոբյան Արմեն Աշմատի - տնտեսագիտության դոկտոր, դոցենտ
3. Մարգարյան Հասմիկ Անդրանիկի - ասիստենտ
4. Եղիազարյան Սամվել Ռադիկի - դասախոս
5. Հակոբյան Անահիտ Ալեքսանի - դասախոս
6. Ղաջոյան Կարինե Համլետի - դասախոս
7. Բաղայան Անի Սամվելի - ակադեմիական խորհրդատու

ՀԱՄԱՏԵՂՈՂՆԵՐ

1. Այրումյան Իրինա Գագիկի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր
2. Առաքելյան Վալերի Հովհաննեսի - տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
3. Մարկոսյան Սևակ Մեսրոպի - տնտեսագիտության թեկնածու

ԱՄԲՈՆՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ա) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) տնտեսական գործունեության տնտեսագիտական վերլուծության և ֆինանսական պլանավորման մեթոդիկաների մշակում և կատարելագործման հիմնախնդիրները:

բ) Ձեռնարկությունների (կազմակերպությունների) կառավարման մեթոդների, մեխանիզմների, գործիքների և տեխնոլոգիաների մշակման և կատարելագործման հիմնական ուղղությունները:

գ) Կազմակերպություններում հաշվապահական հաշվառման, հարկային հաշվառման և աուդիտի մեթոդոլոգիայի և կազմակերպման կատարելագործման հիմնահարցերը:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դասագիրք	Մենագրություն	Ուսումնական ձեռնարկ	Ուսումնամեթոդական ձեռնարկ	Հոդված	Զեկուցումների թեզիս
-	-	1	-	13	-

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. **Ամիրխանյան Ս. Գ.** Համայնքի զարգացման հիմնախնդիրները և դրանց առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետություններում // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 3 (18), 2016թ., էջ 192-205
2. **Առաքելյան Վ. Հ., Մկրտչյան Ա. Ֆ.,** Նոր ապրանքների գիտատեխնիկական մրցունակության մոդելների մշակամն մի քանի հարցեր // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 3 (18), 2016թ., էջ 246-256
3. **Ամիրխանյան Ս. Գ., Թովմասյան Մ. Մ.,** Գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները՝ կապված ոլորտի վարկավորման հիմնահարցերի հետ// ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017թ., էջ 148-154
4. **Առաքելյան Վ. Հ.,** Արտադրանքի մրցունակության տեխնիկական մակարդակի մոդելների ձևավորումը //ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017թ., էջ 177-187
5. **Առաքելյան Վ. Հ., Մկրտչյան Ա. Ֆ.,** Նոր ապրանքի մշակման գործընթացի որոշ խնդիրներ// ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017թ., էջ 188-200
6. **Առաքելյան Վ. Հ., Խաչատրյան Հ. Հ., Ավետիսյան Ա. Ս.,** Ապրանքի մրցունակության տնտեսական ցուցանիշների կառուցվածքը // ԳՊՀ Գիտական հոդվածների ժողովածու, N 4 (19), 2017թ., էջ 201-205
7. **Այրումյան Ի.Գ., Թանգյան Ս.,** Բանկային համակարգի դերը տնտեսության զարգացման գործընթացում // Ռ-Դ և ՀՀ կրթության և գիտության նախարարություն, 10-րդ հոբելյանական տարեկան գիտաժողով Գիտական հոդվածների ժողովածու, Եր. 2016, էջ 250-255
8. **Առաքելյան Վ. Հ.,** Նորամուծական գործընթացի արդյունավետության գնահատումը և զարգացման ռազմավարական ուղիները, Ուսումնական ձեռնարկ, «Ձանգակ» հրատարակչություն, Երևան 2016թ., 47 էջ
9. **Հակոբյան Ա. Ա., Խաչատրյան Մ. Վ.** Մաքսային արժեքի ազդեցությունը ներքին շուկայում ապրանքների գների վրա //«Տնտեսության և հասարակության զարգացում. XXI դարի մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով ՀՊՏՀ գիտաժողով, Երևան, «Տնտեսագետ», 2017 թ էջ 78-86
10. **Հակոբյան Ա. Ա., Խաչատրյան Մ. Վ.** Տնտեսության զարգացման վրա մաքսային արժեքի ազդեցությունը // «Բանբեր ՀՊՏՀ-ի», N 3(47), Երևան, 2017թ., էջ 56-63
11. **Հակոբյան Ա. Ա.,** Վարձակալության դասակարգման և հաշվառման մոտեցումները ՀՀՄՍ 17-ից ՖՀՄՍ 16-ին անցման պայմաններում // «Գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» /ՀՊՏՀ 26-րդ գիտաժողով/: Երևան, «Տնտեսագետ», 2017թ.,
12. **Հակոբյան Ա. Ա., Մեծլումյան Ա. Ա.** Կառավարչական հաշվառման ներդրման հիմնախնդիրները ՀՀ ագրոպարենային համակարգի կազմակերպություններում //Հայաստանի ֆինանսներ և էկոնոմիկա #5-6 /189-190/ հունվար2016, Երևան էջ 108-110

13. Hakobyan A. A. **Behboodi A.** The Five Threats of the Independence of the Auditor // Հայաստանի ազգային ազրարային համալսարանի Տեղեկագիր, N1/53/- Երևան, 2016, էջ 85-88
14. **Արաкелян В. О.**, Некоторые вопросы прогнозирования спроса в логистике // Актуальные проблемы современной науки, V Международная научно-практическая конференция, Выпуск 5, том II, г Ставрополь (СГУ) 2016 г., стр.47-55

ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Պատասխանատու՝ **Կուրուզյան Նելլի Ալբերգի,**
 ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Դասիչը	Մասնագիտությունը	Որակավորումը
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա 011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն	Մանկավարժության բակալավր
011401.01.6	Կենսաբանություն	Մանկավարժության բակալավր
011401.03.6	Աշխարհագրություն	Մանկավարժության բակալավր
011401.18.6	Պատմություն	Մանկավարժության բակալավր
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	Մանկավարժության բակալավր
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն 041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում	Մանկավարժության բակալավր
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/ 042101.00.6 Իրավագիտություն	Տնտեսագիտության բակալավր
042101.01.6	Իրավագիտություն 052201.00.6 Քննապահպանություն և բնօգտագործում	Իրավագիտության բակալավր
052201.01.6	Քննապահպանություն և բնօգտագործում 053101.00.6 Քիմիա	Շրջակա միջավայրի բակալավր
053101.02.6	Դեղագործական քիմիա 054201.00.6 Աշխարհագրություն	Քիմիայի բակալավր
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ 061103.00.6 Համակարգչային ճարտարագիտություն	Աշխարհագրության բակալավր
061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն 101801.00.6 Սերվիս	Ինֆորմատիկայի բակալավր
101801.01.6	Սերվիս	Սերվիսի բակալավր

Ուսանողների թիվը՝ 842

Շրջանավարտների թիվը՝ 213

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԵՌԱԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՆ
ՑԱԿՈՒԼՏԵՏԻ 2017թ. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2018թ. ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ**

2016 թվականին համալսարանի Հեռակա ուսուցման ֆակուլտետ դիմած 168 դիմորդից ընդունվեց 164-ը, սահմանված կարգով կազմակերպվել են ընդունելության քննությունները: Կրթական գործընթացն իրականացվել է բակալավրիատի 13 մասնագիտությունների գծով:

Տարեսկզբին հեռակա ուսուցման համակարգում սովորողների թիվը կազմում էր 629:

Ողջ ուսումնական տարվա ընթացքում շարունակվել են հետևողական աշխատանքները՝ կրթության որակի վերահսկողության, ուսանողների կրթական կարիքների բացահայտման, երկրորդ բարձրագույն կրթություն ստացողների կարիքների բացահայտման և դրանց բավարարման ուղղություններով: Հաշվետու ուստարում բուհն ավարտեց հեռակա ուսուցման բակալավրիատի թվով 213 շրջանավարտ: Նախորդ տարիներին բուհը չավարտած 23 նախկին ուսանողի և վեցամյա կրթության համակարգում ուսանած թվով 2 անձանց թույլատրվեց մասնակցելու ամփոփիչ ատեստավորմանը, նրանցից դրական գնահատական ստացան 25-ը (ընդհանուր թվով՝ 213 շրջանավարտ):

Չնայած այն հանգամանքին, որ ավարտական կուրսերի ուսանողների համար մասնագիտական ամբիոնների կողմից կազմակերպվել էին ամփոփիչ ատեստավորման նախապատրաստական տարաբնույթ աշխատանքներ, խորհրդատվություններ, ակադեմիական աջակցման նախաձեռնություններ, այնուամենայնիվ, 10 ուսանող անբավարար գնահատական ստանալու և չներկայանալու պատճառով չավարտեց համալսարանը, այսինքն՝ բուհն ավարտեց ուսանողների թվի 94.9%-ը (2016թ. ուստարում 89.1%-ը):

Մշակվեց համաեվրոպական նմուշի դիպլոմի հավելված նաև հեռակա ուսուցման համակարգում և 2017թ. շրջանավարտներին առաջին անգամ տրամադրվեց դիպլոմի երկլեզու հավելված:

Գերազանցության դիպլոմ շնորհվեց Հայոց լեզու և գրականություն, Մանկավարժություն և մեթոդիկա /տարրական կրթության/, Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա, Ռուսաց լեզու և գրականություն, Պատմություն, Կենսաբանություն և Հաշվապահական հաշվառում բաժինների 13 ուսանողի:

Կարևորելով կրթության հետագա հնարավորությունները՝ հաշվետու ուսումնական տարում բարձր առաջադիմություն ունեցող թվով 5 շրջանավարտներ ընդունվեցին ԳՊՀ մագիստրատուրայի համապատասխան բաժիններ, իսկ արտերկրում սովորելու հնարավորությունից օգտվեց 1 ուսանող՝ իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանող Ռաֆիկ Տիգրանի Ռաֆյանը սովորեց Իտալիայի Հանրապետության Սապիենզիայի համալսարանում, 5 ամիս ժամկետով: Նշված փաստը հաստատում է, որ հեռակա ուսուցման համակարգում ուսանողի ստացած կրեդիտները և ձեռքբերած գիտելիքները, գնահատված ուսման առողջության վերջնարդյունքները բավարար են եղել, ճանաչվել և ընդունվել են

եվրոպական առաջատար հաստատության կողմից, բավարարել առաջարկվող ծրագրի պահանջներին:

Հաշվետու ուսումնական տարվա ընթացքում հանրապետության և արտերկրի բարձրագույն ուսումնական այլ հաստատություններից հեռակա ուսուցման ֆակուլտետ է տեղափոխվել 14 ուսանող, երկրորդ մասնագիտություն ստանալու համար դիմել և սահմանված կարգով ընդունվել է 20 ուսանող, քոլեջն ավարտելուց հետո շարունակական կրթության կարգով՝ 8 ուսանող, ԳՊՀ առկա ուսուցման համակարգից ֆակուլտետ է տեղափոխվել 13 ուսանող, ուսանողական իրավունքները վերականգնել են 82 ուսանող, Հեռակա ուսուցման ֆակուլտետից ԳՊՀ այլ ֆակուլտետներ են տեղափոխվել 30 ուսանող, ֆակուլտետի տարբեր բաժիններ՝ 12 ուսանող, տարկետում տրամադրվել է 48 ուսանողի, իսկ այլ բուհ տեղափոխվողներ չեն եղել:

Կարևորելով բուհում ընդունված ներքին կարգապահական կանոնները՝ անհարգելի բացակայելու համար 438 ուսանող ստացել է նկատողություն, խիստ նկատողություն՝ 210 ուսանող: Դասերից անհարգելի բացակայելու, ակադեմիական և ֆինանսական պարտքեր ունենալու պատճառով համալսարանից հեռացվել է՝ 128, ժամանակավոր կցագրումից՝ 2 ուսանող, բուհից ազատվել՝ 4 ուսանող, իսկ համապատասխան հիմքով տրամադրված տարկետման ժամկետը լրանալու պատճառով՝ 16 ուսանող:

Աշխատանքներ են ծավալվել ֆակուլտետում ուսումնական, կրթական, լուսավորչական, դաստիարակչական գործընթացների արդյունավետ իրականացման ուղղությամբ, ինչպես նաև պատշաճ գործավարության, թափանցիկ հաշվետվողականության ապահովման ուղղությամբ՝ նպաստելով բուհի ենթակառուցվածքային հավատարմագրման աշխատանքներին, ուսանողներին անհրաժեշտ գրագրության, խորհրդատվության ապահովման, նրանց ակադեմիական ինտեգրմանը աջակցման նպատակներով:

Կրթության որակի ապահովման գործընթացում բարձրացել է ուսանողների դերակատարումը, մշտապես ուսումնասիրվել են նրանց կրթական կարիքները, հատկապես իրենց մասնագիտությամբ աշխատող ուսանողների առաջարկությունները քննարկվել են ֆակուլտետի խորհրդում, ապա նաև գիտխորհրդում՝ հնարավորության սահմաններում բավարարելով դրանք:

Ավանդույթ է դարձել Հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողների ջանքերով ստեղծված «Վերնատուն» ակումբի շրջանակներում միջոցառումների շարքի ամենամյա անցկացումը: Հաշվետու ուստարում կազմակերպեց ցերեկույթ, որին հրավիրված էին ԳՊՀ դասախոսներ, մարզում հայտնի ստեղծագործողներ, երգահաններ, մշակութային գործիչներ, ովքեր իրենց փորձով կիսվեցին ուսանողների հետ, փոխներգործուն մեթոդով կազմակերպված միջոցառմանը ներկայացրեցին իրենց կարծիքներն ու դիրքորոշումը քննարկվող հարցերի շուրջ: Ուսանողները և հյուրերը հանդես եկան իրենց հեղինակած գրական-գեղարվեստական ստեղծագործություններով:

Մշտական աջակցություն է ցուցաբերվել ուսանողներին ֆինանսական տարբեր ծրագրերում ընդգրկվելու ուղղությամբ, ինչի արդյունքում աճ է գրանցվել ֆինանսական օգնություն ստացողների թվում: 2017թ . ուսումնական տարում «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության միջոցներից օգտվում են 3 ուսանող, «ԱՄՔՈՐ. Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից հայտարարված «Ուսանողների ուսման

վճարների փոխհատուցման» ծրագրի միջոցներից՝ 9 ուսանող, «Հրայր և Աննա Հովնանյաններ» բարեգործական հիմնադրամի միջոցներից՝ 14 ուսանող:

Ընտանիքների սոցիալական անապահովության «Փարոս» համակարգում ընդգրկված 59 ուսանողների՝ ըստ անապահովության միավորների, սահմանված չափով պետական բյուջեից տրամադրվեց ֆինանսական աջակցություն, իսկ համալսարանի կողմից ուսման վարձերը զեղչվեցին 49 ուսանողի համար: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական ուսումնական հաստատություններում սովորողների համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արտոնություններից օգտվելու կարգի համաձայն՝ ֆակուլտետում անվճար սովորում է 6 ուսանող:

ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի 2018 թվականի ուսումնական տարվա զարգացման հայեցակարգ

ԳՊՀ Ռազմավարական ծրագրի նպատակներից ելնելով՝ 2018 թվականին նախանշվում են ֆակուլտետի զարգացման հետևյալ հայեցակարգային ուղղությունները.

1. Հեռակա ուսուցմամբ իրականացվող կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերանայում՝ համապատասխանեցնելով ՀՀ բարձրագույն կրթության մասնագիտությունների նոր ցանկին, որակավորումներին, ինչպես նաև առկա ուսուցման համապատասխան կրթական ծրագրերին:
2. Առկա ուսումնամեթոդական, կադրային ռեսուրսների ուսումնասիրում, հեռահար ուսուցում կազմակերպելու ուղղությամբ հետևողական աշխատանքների իրականացում:
3. Ուսանողների շրջանում կրթական կարիքների բացահայտմանը միտված, դասատվության որակից սովորողների բավարարվածության գնահատման հարցումների իրականացում, արդյունքների վերլուծություն, եզրահանգումների կատարում, լրացուցիչ կրթական ծառայությունների, խորհրդատվությունների և այլ աջակցման ծրագրերի իրականացում, երկրորդ բարձրագույն կրթություն ստացողների շրջանում ընտրովի հարցախոյզի իրականացում, արդյունքների վերլուծություն և եզրահանգումների հաշվառում:
4. Նոր ընդունված և վերականգնված ուսանողներին էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների բազաներին մուտքերի հնարավորությունների ընձեռում, տեխնիկական աջակցման ծրագրերի իրականացում:
5. Կրեդիտային համակարգի դրույթների, բոլոնյան գործընթացի սկզբունքների, բարձրագույն կրթության բարեփոխումների վերաբերյալ առաջին կուրսեցիների շրջանում ներածական դասընթացների վարում, ճանաչողական սեմինար-քննարկումների կազմակերպում, կրթական գործընթացին ակադեմիական ինտեգրման ծրագրերի իրականացում:
6. Իրականացվող կրթական ծրագրերի էլեկտրոնային ուսումնական ռեսուրսների մշտադիտարկում, համալրում, քննական առարկաների թեստերի մշակում, թեստային համակարգով քննությունների անցկացման հնարավորությունների ընդլայնում:
7. Ակադեմիական շարժունության ծրագրերի, դրանց մասնակցության պայմանների ու պահանջների վերաբերյալ ուսանողների շրջանում իրազեկվածության աստիճանի բարձրացում:

8. Կրթական ծրագրերում ուսանողների հետազոտական աշխատանքների կարևորում, գործնական հմտությունների զարգացման կառուցակարգերի կիրառում, Համակարգչային ճարտարագիտություն և Դեղագործական քիմիա կրթական ծրագրերի ամփոփիչ ատեստավորման պահանջներում ավարտական աշխատանքների ներառում:

**ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր՝
Ն. Ա. Կուրուզյան**

**ԳՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

ԳՊՀ ակադեմիական քաղաքականության վարչության (այսուհետ՝ ԱՔՎ) աշխատանքները 2016-2017 ուսումնական տարում կազմակերպվել են ԳՊՀ հնգամյա ռազմավարական և հակակոռուպցիոն ծրագրերում առաջադրված առաջնահերթություններին ու նպատակներին համապատասխան, ինչպես նաև ինքնավերլուծության արդյունքները և հավատարմագրման գործընթացում առկա պահանջները հաշվի առնելով:

Հաշվետու տարում ԱՔՎ-ն իրականացրել է հետևյալ աշխատանքները՝ բակալավրիատի և մագիստրատուրայի ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի բարելավման գործընթացների կազմակերպում և դրանց իրականացման վերահսկում, ամբիոնային աշխատաձևավորների ստուգում և կատարման վերահսկում, ժամավճարային հիմունքներով աշխատողների ձևակերպման ներկայացում, բակալավրիատում և մագիստրատուրայում ուսուցման գործընթացի ստուգում և լսարանային ֆոնդով ապահովում, ուսումնական ժամանակացույցի և դասատախտակների օպտիմալացում, դասալսումների կազմակերպում և քննարկումների անցկացում:

Միաժամանակ, Եվրոպական Միության «TEMPUS ARMENQA Որակավորումների ազգային և ոլորտային շրջանակների իրականացումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են «Դասընթացի կրթական վերջնարդյունքների ձևակերպումը», «ՈԱՇ-ի կիրառելիությունը բուհերում» թեմաներով վերապատրաստման դասընթացներ, ինչի արդյունքում վերանայվել և շարունակվում են աշխատանքները կրթական ծրագրերի վերջնարդյունքների հստակեցման, դրանց ճիշտ ձևակերպումների, դասավանդման և գնահատման մեթոդների արդիականացման, որակի ապահովման ուղղություններով:

Բակալավրիատում և մագիստրատուրայում կամընտրական դասընթացների ճիշտ ընտրություն ապահովելու նպատակով ուսանողների շրջանում անցկացվել են հարցումներ:

Դեկանատների հետ կատարվել են համապատասխան աշխատանքներ քննաշրջանները և լուծարային գործընթացը հստակ կազմակերպելու, փոխատեղման արդյունքները առավել հասանելի ու թափանցիկ դարձնելու ուղղությամբ:

Հաշվետու ուսումնական տարում շարունակվել են ուսանողների տվյալների բազաների լրացման աշխատանքները, որոնց հիման վրա յուրաքանչյուր եռամսյակը մեկ ներկայացվել են համապատասխան հաշվետվություններ:

Շարունակական կրթության պահանջներից ելնելով՝ 2016-2017 ուսումնական տարում ԱՔՎ-ի կողմից կազմակերպվել են միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների բարձր առաջադիմությամբ շրջանավարտների՝ ԳՊՀ-ում կրթությունը շարունակելու գործընթացը, երկրորդ մասնագիտություն ստացողների ընդունելությունը, ինչպես նաև միջբուհական և ներբուհական տեղափոխությունների կազմակերպումն ու վերահսկումը:

ԱԲՎ-ի կողմից նախապատրաստվել և հաշվառվել են ԳՊՀ ուսանողների շարժի՝ տարկետման, վերականգման, հեռացման, ազատման, տեղափոխությունների փաստաթղթային հիմքերը:

2016-2017 ուսումնական տարում գրանցվել է ԳՊՀ ուսանողների հետևյալ շարժը՝ 2015-2016 ուսումնական տարվա հետ համեմատությամբ.

		2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի
1	Այլ բուհերից ԳՊՀ են տեղափոխվել	11	15
2	ԳՊՀ-ից այլ բուհ են տեղափոխվել	0	0
3	Երկրորդ մասնագիտություն ստացողներ	12	16
4	Քոլեջից ԳՊՀ են ընդունվել/ուսուցիչներ	23/5	27/2
5	Ներբուհական տեղափոխություններ	36	59
	➤ Առկա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են հեռակա	14	15
	➤ Հեռակա ուսուցման ֆակուլտետից տեղափոխվել են առկա	10	30
	➤ Ներֆակուլտետային տեղափոխություններ	12	14
6	Տարկետում են ստացել	51	32
	➤ առողջական վիճակի պատճառով	4	3
	➤ գինձառայության մեկնելու հիմքով	47	29
7	ԳՊՀ-ից հեռացվել են	161	152
8	ԳՊՀ-ից ազատվել են	17	16
9	Վերականգնվել են ԳՊՀ	143	127
	➤ զորացումից հետո	66	59
	➤ հեռացումից հետո	37	39
	➤ տարկետումից հետո	4	2
	➤ ամփոփիչ ատեստավորման քննություններին թույլատրվածներ	36	27
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՇԱՐՃ		459	446

Նախորդ՝ 2015-2016 ուսումնական տարվա ընդհանուր շարժի 459-ի դիմաց հաշվետու տարում արձանագրվել է 446-ը:

Շարժի առումով հիշատակելի են նաև ԳՊՀ այն ուսանողներն ու դասախոսները, որոնք փոխանակման ծրագրերի շրջանակներում եվրոպական տարբեր բուհերում շարունակել են իրենց ուսումնառությունն ու անցել վերապատրաստումներ, կատարել մանկավարժական, հետազոտական աշխատանքներ: Հաշվետու ուսումնական տարում արտերկրյա տարբեր բուհերում իրենց ուսումնառությունն են շարունակել ԳՊՀ 28

ուսանողներ, ԳՊՀ 5 դասախոսներ վերապատրաստումներ են անցել, իսկ 12-ը դասախոսել են եվրոպական առաջատար բուհերում:

2016-2017 ուսումնական տարվա ընդունելության արդյունքներով Գավառի պետական համալսարանի առկա բակալավրիատի առաջին կուրսեր են ընդունվել 51 սովորող, որոնցից 49-ը՝ հրամանագրված, 2-ը՝ ժամանակավոր կցագրված, հեռակա բակալավրիատ՝ 164 սովորող, որոնցից 120-ը՝ հրամանագրված, 44-ը՝ ժամանակավոր կցագրված:

2016-2017 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի մագիստրատուրա է ընդունվել 96 ուսանող:

ԱԲՎ-ի կողմից համակարգվել են ուսանողների պրակտիկաների անցկացման գործընթացները:

2016-2017 ուսումնական տարում պրակտիկաներին մասնակցած ուսանողների տվյալները.

Առկա բակալավրիատ	Ուսումնական	67
	Մանկավարժական	52
	Արտադրական	52
	Նախաավարտական	54
Մագիստրատուրա	Գիտամանկավարժական	29
	Գիտահետազոտական	29
Հեռակա բակալավրիատ	Ուսումնական	44
	Արտադրական	26
	Նախաավարտական	68
	Մանկավարժական	68
Ընդամենը		489

Շարունակելով նախորդ տարիների քաղաքականությանը՝ բուհը կատարել է ուսման վարձավճարների զեղչեր սոցիալապես անապահով և բարձր առաջադիմություն ունեցող, ինչպես նաև մարտական հերթապահություն իրականացրած և Արցախում ապրիլյան քառօրյա պատերազմին մասնակցած և բանակից զորացրված ուսանողների համար:

2016-2017 ուսումնական տարում ԳՊՀ-ում կապարված ուսման վարձավճարների զեչերի ընդհանուր չափը հետևյալն է.

Ուսուցման ձևը	Ուսանողների թիվը	Զեղչված գումարի չափը
Բակալավրիատ /առկա/	32	4.306.500
Մագիստրատուրա /առկա/	6	866.000
Հեռակա	49	5.231.000
ԸՆԴԱՄԵՆԸ	88	10.403.500

Նախորդ՝ 2015-2016 ուսումնական տարում համալսարանի կողմից զեղչված գումարի չափը կազմել է 5.049.500՝ 71 ուսանողի համար, հաշվետու տարում այդ գումարը կազմել է 10.403.500՝ 88 ուսանողի համար:

Ուսանողները նյութական աջակցություն են ստանում ոչ միայն բուհի միջոցների հաշվին: Գավառի պետական համալսարանի բարերարների, տարբեր կազմակերպությունների և հիմնադրամների շնորհիվ հաշվետու ուսումնական տարում մասնակի կամ լրիվ փոխհատուցվել են ԳՊՀ ուսանողների ուսման վարձավճարները:

2016-2017 ուսումնական տարում անվանական կրթաթոշակներ ստացած ուսանողների թիվը հետևյալն է.

Հ/Հ	Հովանավոր կազմակերպություն	Ուսանողների թիվը
1.	«Ժիրայր Նիշանյան» հիմնադրամ	76
2.	«Հրայր և Աննա Հովնանյաններ»	76
3.	Հայաստանի երիտասարդական հիմնադրամ	10
4.	«Ամբոբ Հայաստան» բարեգործական հիմնադրամ	18
5.	«ՎիվաՍեյ-ՄՏՍ» կրթական ֆոնդ	25
6.	Հայ կրթական հիմնարկություն	4
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		209

2015-2016 ուսումնական տարվա 189-ի փոխարեն 2016-2017 ուսումնական տարում կրթաթոշակ ստացողների թիվը կազմում է 209-ը:

Հաշվետու տարում նույնպես ամփոփիչ ատեստավորման քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության օբյեկտիվությունն ու թափանցիկությունն ապահովելու նպատակով քննական լսարաններում տեղադրվել են ծայնագրող սարքեր՝ բողոքարկման գործընթացը պատշաճ կազմակերպելու համար: Ավարտական քննությունների արդյունքներն ամփոփվել և ատեստավորման հանձնաժողովների նախագահների հաշվետվությունների հետ ներկայացվել են ՀՀ ԿԳ նախարարություն՝ համաձայն սահմանված կարգի:

ԱԲՎ մասնագետների կողմից կատարվել են շրջանավարտների դիպլոմների հավելվածների ստուգման աշխատանքներ:

2016-2017 ուսումնական տարում պատրաստվել և շրջանավարտներին է հանձնվել 373 դիպլոմ:

2016-2017 ուսումնական տարվա ԳՊՀ շրջանավարտների թիվը.

Ֆակուլտետ		ոչ գերազանցության	գերազանցության	ընդամենը
Բանասիրական	Բակալավր	12	17	29
	մագիստրոս		1	1
Բնագիտական	Բակալավր	28	19	47
	մագիստրոս	1		1
Հումանիտար մասնագիտությունների	Բակալավր	4	15	19
	մագիստրոս	11	7	18
Տնտեսագիտական	Բակալավր	18	18	36
	մագիստրոս	4	5	9
ԸՆԴԱՄԵՆԸ	Բակալավր	62	69	131
	մագիստրոս	16	13	29
Հեռակա	Բակալավր	198	13	213
	դիպլ. մասն.	2	-	
ԸՆԴԱՄԵՆԸ		278	95	373

ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն և ՀՀ ԿԳՆ են ներկայացվել «1-ԳՄ» և «3-ԳՄ» ձևաչափերով ամենամյա վիճակագրական հաշվետվությունները:

ԱԲՎ-ում իրականացվել են ԳՊՀ գործունեության հաշվետվության և ուսանողական ծրագրի ինքնավերլուծության զեկույցի հրատարակման նախապատրաստական աշխատանքները:

Վարչությունը նախապատրաստում և ՀՀ ԿԳ նախարարություն է ներկայացնում դիպլոմների ստացման և բաշխման հաշվետվությունն ու շրջանավարտների ցուցակները՝ թղթային և էլեկտրոնային տարբերակներով, տեղափոխությունների և երկրորդ մասնագիտություն ստացողների վերաբերյալ հաշվետվությունները, ինչպես նաև՝ կիսամյակային քննաշրջանների առաջադիմության արդյունքները՝ սահմանված ձևաչափերով:

Բուհ-դպրոց փոխադարձ կապերի ամրապնդման նպատակով ԱԲՎ-ն, հանրության և լրատվության բաժնի հետ համագործակցելով, հաշվետու տարում շարունակել է իրականացնել աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը նպաստող մի շարք միջոցառումներ:

Համալսարանում 7 առարկաների (Հայոց լեզու, Անգլերեն լեզու, Ռուսաց լեզու, Մաթեմատիկա, Հայոց պատմություն, Աշխարհագրություն, Քիմիա) գծով 12-րդ

դասարանցիների համար կազմակերպվեցին օլիմպիադաներ, որոնց մասնակցեցին մարզի 13 դպրոցների 73 աշակերտներ: Տարբեր առարկաների գծով 30 աշակերտներ վաստակեցին 16-20 միավորներ, 18-ը՝ դրականի շեմը չհաղթահարեցին: 73 հարցված աշակերտներից 39-ն են ցանկացել սովորել Գավառի պետական համալսարանում:

Կազմակերպվել են մարզի 4 դպրոցների 130 աշակերտների և ուսուցիչների ծանաչողական այցեր համալսարան՝ ծանոթանալու համալսարանի լաբորատորիաներին, ամբիոններին, մասնագիտություններին, թանգարանին:

2016-2017 ուսումնական տարում համալսարանը համագործակցության հուշագրեր է կնքել Գեղարքունիքի մարզում գործող 5 կազմակերպությունների հետ.

Գավառ քաղաքի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հանրակրթական դպրոց	04.09.2016թ.	5 տարով
Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N 8 միջնակարգ դպրոց	24.11.2016թ.	5 տարով
Կարմիրգյուղ գյուղի N 1 միջնակարգ դպրոց	24.11.2016թ.	5 տարով
Նորատուա գյուղի Ա. Սողոմոնյանի անվան N 2 միջնակարգ դպրոց	24.11. 2016թ.	5 տարով
«UCOM» հեռահաղորդակցական ընկերություն	09.11.2016թ.	5 տարով

ԳՊՀ ուսանողների և դասախոսների համակազմը.

2016-2017 ուսումնական տարվա սեպտեմբեր ամսին ԳՊՀ ուսանողների ընդհանուր թիվը կազմել է 1141, մայիս՝ 1294 սովորող, որոնցից՝

առկա բակավճիռատում՝ 423 սովորող,

մագիստրատուրայում՝ 102 սովորող,

հեռակա ուսուցման համակարգում՝ 769 սովորող,

օտարերկրյա քաղաքացիություն են ունեցել 3 ուսանողներ:

2016-2017 ուսումնական տարում ԳՊՀ-ում աշխատող դասախոսների ընդհանուր թիվը 134 է՝

դոկտորներ՝ 16, որոնցից 10-ը ունեն պրոֆեսորի կոչում,

գիտությունների թեկնածու՝ 52-ը, որոնցից 34-ը ունեն դոցենտի կոչում,

ասիստենտ, դասախոս՝ համապատասխանաբար՝ 20, 46 :

ԳՊՀ ԱԲՎ-ի 2017-2018 ուսումնական տարվա գործունեության հիմնական ուղղությունները.

ԱԲՎ-ի գործունեությունը շարունակվելու է հետևյալ ուղղություններով՝ ՄԿԾ-ների, ուսումնական պլանների, առարկայական ծրագրերի վերանայում, գնահատում, բարելավում, դասավանդման և գնահատման մեթոդների հստակեցում և դրանց համապատասխանության ապահովում, դասալսույնների կազմակերպում և արդյունքների քննարկում, հետազոտական աշխատանքների թեմաների ուղղորդում մարզում առկա խնդիրների ուսումնասիրությանը և գիտական հիմնավորմանը, օլիմպիադաների կազմակերպում, բազային տվյալների հավաքագրման և մշակման աշխատանքների

շարունակում, ՈւԽ-ի հետ համատեղ մարզամշակութային միջոցառումների անցկացում՝ ներգրավելով մարզում գործող քոլեջների, ավագ դպրոցների սովորողներին, մարզի դպրոցների և քոլեջների հետ համագործակցության ընդլայնում և այլն:

Նախորդ տարում ԱԲՎ-ի կողմից չիրականացված մի քանի ծրագրեր նախատեսել ենք կյանքի կոչել 2017-2018 ուսումնական տարում, մասնավորապես.

- իրականացնել «Բաց դռների օր՝ մասնագիտությունների ցուցահանդես» միջոցառումը՝ մարզի դպրոցների և քոլեջների սովորողներին ներկայացնելով ԳՊՀ կրթական միջավայրը, ԳՊՀ մասնագիտություններն իրենց որակավորումներով,
- ԳՊՀ դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային դասախոսությունների, մեթոդական խորհրդատվությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործին:
- Դասախոսների համար շարունակել կազմակերպել «Դասավանդման, ուսումնառության և գնահատման մեթոդները», «Ուսուցման ժամանակակից մեթոդներ և տեխնոլոգիաներ», «Մասնագիտության արդի հիմնախնդիրները» թեմաներով վերապատրաստման դասընթացներ, որոնք կարևոր են և պարտադիր ուսումնական գործընթացում առկա ժամանակակից խնդիրները և պահանջները ճիշտ ըմբռնելու և իրագործելու առումով՝ իհարկե, օգտագործելով ամբիոնների գիտական ներուժը:
- Հաշվի առնելով ուսանողների կողմից հետազոտական աշխատանք կատարելու կարողությունների և հմտությունների զարգացման անհրաժեշտությունը՝ մագիստրոսական ծրագրերում ներմուծել «Հետազոտության պլանավորում և մեթոդներ» դասընթացը,
- բակալավրիատում ուսանողների հմտությունների զարգացմանն ու կիրառմանը նպաստելու համար ՈւԳԸ-ի հետ կազմակերպել գիտական աշխատանք կատարելու հմտություններին նվիրված դասընթաց, որի շրջանակներում ԳՊՀ բոլոր ֆակուլտետներում կանցկացվեն ինտերակտիվ դասախոսություններ՝ ներգրավելով 1-4-րդ կուրսերի ուսանողներին:
- Աշխատանքներ տանել նախապատրաստական բաժին ձևավորելու ուղղությամբ:
- Հանրահոշակել ԳՊՀ-ում ստեղծված ակադեմիական գրավիչ և ազնիվ միջավայրը, մարզի գեղեցիկ բնությունը, հարուստ պատմամշակութային ժառանգությունը, հրաշալի մարդիկ, գեղեցիկ բարքեր, համեղ կերակրատեսակներ, զարգացած ՏՏ ոլորտը, մի խոսքով՝ այն ամենը, ինչը կգրավի և կուղղորդի հայ և օտարերկրացի ուսանողներին դեպի Գավառի պետական համալսարան: Այդ ամենը պետք է արտահայտվի գովազդային հոլովակներում, որոնցում կներկայացվի ԳՊՀ-ն: Գովազդ պատրաստելու գործին ՈւԽ-ի միջոցով կարելի է ներգրավել ուսանողների: Լավագույն գովազդը կամ գովազդները կգետնողվեն ԳՊՀ կայքէջում:
- ԳՊՀ ռազմավարական ծրագրի տեսլականից ելնելով՝ ուսումնական պլաններում առկա ընդհանուր կրթամասի դասընթացներից որևէ մեկի դասավանդումը փորձել կազմակերպել հեռավար ուսուցման եղանակով:
- Շարունակել ուսանողների անձնական թերթիկների լրացման աշխատանքները թղթային և էլեկտրոնային տարբերակներով՝ ուսանողի սոցիալական կարիքները վեր հանելու նպատակով:

- Բազմազանեցնել մարզամշակութային ծրագրերը, զարգացնել ուսանողական ակումբները՝ կարևորելով ինտելեկտուալ, բնապահպանական, հայրենաճանաչողական բնույթի ձեռնարկները:
- Կիրառել ակադեմիական ազնվությունն ապահովող կառուցակարգեր, մասնավորապես, ավարտական աշխատանքներում ու մագիստրոսական թեզերում գրագողությունը կանխելու նպատակով:
- Ակտիվացնել արտաքին և ներքին շահառուների հետ հետադարձ կապերը և զարգացնել մշտադիտարկման համակարգը, համագործակցության շրջանակներում շահառուների հետ աշխատանքները փորձել ավելի հասցեական կազմակերպել, ընդլայնել և զարգացնել համալսարանի ներգրավումը մարզային ծրագրերին և նախաձեռնություններին, բազմազան դարձնել հանրությանը մատուցվող ծառայությունները՝ օգտագործելով համալսարանի ներքին ռեսուրսները, ուսանողների և դասախոսների ուժերն ու հնարավորությունները, ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի հետ համագործակցելով՝ պարբերական դարձնել մարզի աշակերտների և մանկավարժների այցելությունները համալսարան:
- Իրականացնել ԳՊՀ ռազմավարական ծրագրի կատարման տարեկան ինքնավերլուծություն և ներկայացնել բուհի գիտական խորհրդին համապատասխան զեկույց:

Ա. Ա. Ղարիբյան՝
ԳՊՀ ակադեմիական քաղաքականության
վարչության պետ

**ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺՆԻ
2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2016-2017 ուստարում, առաջնորդվելով Գավառի պետական համալսարանի նազմավարական ծրագրի գերակա նպատակներով, բուհի որակի ապահովման բաժնի (ՈԱԲ) կողմից իրականացվել է հետևողական աշխատանք որակի մշակույթի արմատավորման ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում Որակի ապահովման բաժինը վերակազմակերպվել է որպես ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում՝ համաձայն «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017թ.-ի հունվարի 26-ի թիվ 2-րդ նիստի որոշման 4-րդ կետի: Մշակվել է «ԳՊՀ որակի ապահովման բաժնի գործունեության կանոնակարգ»-ը:

Բաժինն իրականացրել է բազմաթիվ և բազմապիսի հարցումներ: Վեբ-հարթակում կատարվել է հարցաթերթերի առցանց մշակում «Google forms» էլեկտրոնային գործիքով:

Հարցաթերթերը լրամշակվել են, և իրականացվել են հարցումներ և՛ էլեկտրոնային, և՛ թղթային տարբերակներով: Մշակվել է շուրջ 40 էլեկտրոնային հարցաթերթեր՝ համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի հետ համատեղ:

Շարունակաբար հարցումներ են իրականացվել ուսանողների /հեռակա և առկա ուսուցման համակարգում սովորող/, շրջանավարտների, դասախոսների, գործատուների, աշակերտ-դիմորդների շրջանում:

Ուսանողների և շրջանավարտների շրջանում իրականացված հարցումներ

Հ/հ	Հարցման տեսակները	Ուսուցման համակարգ	Հարցվողների մասնակցության թիվ	Մասնակցության տոկոս
1	Դասավանդման որակի և ուսումնական գործընթացի կազմակերպման աշխատանքների արդյունավետության գնահատման	առկա հեռակա	956	74.05%
2	ԳՊՀ-ում ստացած կրթությունից ուսանողների բավարարվածության գնահատման	առկա հեռակա	673	52.13%
3	Տեղեկատվական համակարգերի,	առկա	269	51.43%

	համալսարանի կողմից հանրությանը տրամադրվող տեղեկատվության համապատասխանության, ուսանողների ուսումնառության, ուսումնական ռեսուրսների գնահատման			
4	Ուսանողների բավարարվածությունը կրթական ծրագրի իրականացման ընթացքից	առկա	269	51.43%
5	ԳՊՀ-ում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման	առկա հեռակա	188	50.68%

Իրականացված հարցումների ուսումնասիրության արդյունքներն ուղղված են ուսուցման և ուսումնառության գործընթացների կազմակերպման, տեղեկատվական համակարգերի որակի բարելավմանը:

Դասախոսների շրջանում իրականացված հարցումներ

Հ/հ	Հարցման տեսակները	Հարցվողների մասնակցության թիվ	Մասնակցություն տոկոս
1	ԳՊՀ-ում կրթական միջավայրից դասախոսների բավարարվածության գնահատման	96	87.27%
2	Դասախոսը՝ կրթական ծրագրի ղեկավարի գնահատմամբ	101	91.82%

Վերը նշված հարցաթերթերով իրականացված հարցումների արդյունքներն ուղղված են բացահայտելու և բարելավելու ԳՊՀ-ում կրթության որակի, ուսումնական ռեսուրսների ապահովման, սպասարկան, դասախոս-վարչական աշխատակից, դասախոս-ուսանող փոխհարաբերությունների առնչությամբ խնդիրները և կրթական ծրագրի ղեկավարի գնահատմամբ՝ դասախոսների մանկավարժական և կազմակերպչական որակները:

ԳՊՀ ֆակուլտետների հետ համատեղ իրականացվել է հարցում արտաքին շահակիցների՝ գործատուների շրջանում, բացահայտելու ԳՊՀ շրջանավարտների՝ աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական պատրաստվածության աստիճանը:

ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի հետ համատեղ ուսումնասիրություն է իրականացվել բուհի և մասնագիտության ընտրության վերաբերյալ Գեղարքունիքի մարզի 73 աշակերտ-դիմորդների շրջանում: Հարցվող աշակերտ-դիմորդներից 39-ը ցանկացել է ընդունվել ԳՊՀ, որոնցից 34-ն ընդունվել և սովորում են ԳՊՀ-ում:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱԲ-ի կողմից մշակվել են հարցումների արդյունքները, և վերլուծվել են ստացված տվյալները, որոնք ներկայացվել են ԳՊՀ գիտական խորհրդում և ռեկտորատի նիստերում:

ՈԱԲ-ը համագործակցել է ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝

- Օտար լեզուների և գրականության ամբիոնի, գրադարանի և ընթերցասրահի հետ՝ ինքնագնահատման և ինքնավերլուծության աշխատանքներ իրականացնելու նպատակով,
- Արտաքին կապերի և լրատվության բաժնի հետ՝ ԵՄ «TEMPUS. ԱՐՄԵՆՔԱ» ծրագրի շրջանակում «Որակի ապահովման ազգային շրջանակը և դրա կիրառումը բուհերում» թեմայով վերապատրաստման դասընթացի կազմակերպման նպատակով,
- Տնտեսագիտական ֆակուլտետի հետ՝ գիտահետազոտական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով կազմակերպվել է «Գիտահետազոտական աշխատանքներ կատարելու հիմնական սկզբունքները» թեմայով սեմինարների շարք:

Գիտահետազոտական աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՈԱԲ-ի կողմից մշակվել է ԳՊՀ մագիստրոսական թեզի պատրաստման և գնահատման նոր կարգի նախագիծ, ներդրվել է հակագրագողության /անտիպլագիատ/ համակարգ:

ԳՊՀ Որակի ապահովման բաժնի 2016-2017 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները

ԳՊՀ ռազմավարական ծրագրի նպատակներին համապատասխան՝ նախատեսվում են գործունեության հայեցակարգային ուղղությունները.

1. մշակել ԳՊՀ որակի ներքին ապահովման նոր քաղաքականություն, ՈԱԲ-ի գործունեության նոր իրավական հիմքեր,
2. մշակել ԳՊՀ-ում հարցումների անցկացման կարգ,
3. վերանայել ներքին և արտաքին շահառուների շրջանում իրականացվող հարցումների հարցաթերթերը և գնահատման մեթոդաբանությունը,
4. ապահովել հարցումների շարունակաբար անցկացում և վերլուծությունների իրականացում,
5. ակտիվացնել աշխատանքները ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հետ՝ ինքնավերլուծության և ինքնագնահատման նպատակով,
6. իրականացնել ՄԿԾ-ների ընթացիկ մշտադիտարկում,
7. իրականացնել կառուցվածքային ստորաբաժանումների գործողությունների պլանների մշտադիտարկում,

8. դասավանդման որակի և արդյունավետության բարձրացման նպատակով կազմակերպել սեմինարներ՝ «Համագործակցային ուսուցում», «Հետազոտական մեթոդներ», «Գնահատում և հետադարձ կապ»/ և այլ թեմաներով,
9. ՏՏ բաժնի հետ համատեղ թվայնացնել մագիստրոսական թեզերը,
10. ԳՊՀ ֆակուլտետների, Արտաքին կապերի և լրատվության բաժնի հետ համատեղ իրականացնել մարզի դպրոցների աշակերտների մասնագիտական կողմնորոշման, ԳՊՀ մասնագիտություններին ծանոթացնելու, ինչպես նաև դիմորդների ներգրավման նպատակով իրականացված միջոցառումների արդյունավետության գնահատում,
11. հստակեցնել ԳՊՀ ֆակուլտետների որակի ապահովման պատասխանատուների պարտականություններն ու գործառույթները,
12. ներհամալսարանական գործընթացներում իրականացնել որակի պլանավորում-իրագործում-գնահատում-բարելավում շրջափուլը:

Ա. Տ. Մայիլյան՝
ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչ

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԵՎ
ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գավառի պետական համալսարանի արտաքին կապերի և լրատվության բաժնի կողմից հաշվետու ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել են տարաբնույթ ճանաչողական, տեղեկատվական, գովազդային ծրագրեր ու ակցիաներ, կատարվել է Համալսարանի գիտահետազոտական, կրթադաստիարակչական գործունեության լուսաբանում, ապահովվել է գործընկեր կազմակերպությունների, շահակիցների հետ սերտ համագործակցություն:

Հաշվետու ժամանակահատվածում առանձնահատուկ ուշադրության են արժանացել Հայաստանի անկախության հռչակման 25-ամյակին նվիրված ծրագրերին և միջոցառումներին առնչվող գործընթացները:

Լրամշակել և ԳՊՀ գիտական խորհրդին է ներկայացվել ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի նոր կանոնակարգի նախագիծը:

2016-2017 ուսումնական տարվա ընթացքում Արտաքին կապերի և լրատվության բաժնի գործառույթների իրականացման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ Համագործակցություն տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցների հետ:
- ✓ «Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր» լրատվական, «Համալսարանական ժամ» հաղորդաշարերով եթեր են հեռարձակվել ԳՊՀ-ին վերաբերող հայտարարություններ: Բոլոր տեսագրությունները տեղադրվել են ԳՊՀ համացանցային պաշտոնական վիդեոբլոգում:
- ✓ ԳՊՀ միջոցառումների և բազմաբնույթ իրադարձությունների վերաբերյալ նկարված լուսանկարներն արխիվացվել են էլեկտրոնային տարբերակով:
- ✓ Համալրվել է «Մամուլը ԳՊՀ-ի մասին» այբոմ-ժողովածուն, որում ներառված են Հայաստանյան տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում տեղ գտած բուհին վերաբերող տեղեկատվությունը:
- ✓ ՀՀ պաշտպանության նախարարության 2-րդ բանակային կորպուսի հետ համագործակցության շրջանակներում կորպուսի զորահրամանատարական կազմի բարձրաստիճան ներկայացուցիչների կողմից բուհում անցկացվել են ռազմահայրենասիրական դասեր:
- ✓ Գնահատման և թեստավորման կենտրոն են ներկայացվել ԳՊՀ 11 ուսանողի տվյալներ, ովքեր որպես կազմակերպիչներ մասնակցել են 2017 թվականի կենտրոնացված միասնական քննություններին:
- ✓ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից իրականացվող դպրոցականների ամառային հանգստի կազմակերպման ամենամյա ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանի ուսանողները հաշվետու տարվա

հունիս, հուլիս և օգոստոս ամիսներին Հանքավանի «Հասմիկ» ճամբարում աշխատել են որպես ջոկատավարներ:

✓ Շարունակվել է համագործակցությունը Գեղարքունյաց թեմի առաջնորդարանի հետ: Բուհում պարբերաբար կազմակերպվել են հոգևոր թեմաներով դասախոսություններ:

✓ Դպրոց-բուհ համագործակցության ծրագրի շրջանակներում կազմակերպվել են փոխադարձ այցելություններ և շրջայցեր ՀՀ դպրոցներ, միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ և Գավառի պետական համալսարան: Համալսարանի կողմից հիշյալ հաստատություններ են առաքվել դիմորդների մասնագիտական կողմնորոշմանն ուղղված հարցաթերթեր, տեղեկատվական թերթիկներ:

✓ Վերախմբագրվել են ԳՊՀ բակալավրիատի առաջին կուրսեցու, մագիստրատուրայի ուսանողի ուղեցույցերը և տեղադրվել կայքի համապատասխան բաժիններում:

✓ Թարմացվել և տպագրության են ներկայացվել ԳՊՀ այցեքարտերը, թղթապանակները, գրիչները, ժամացույցեր, բաժակներ, վերնաշապիկներ և այլ քարոզչական նյութեր:

✓ Ամենօրյա աշխատանքներ են կատարվել բուհում սովորող սոցիալապես անապահով, բազմանդամ ընտանքների երեխա-ուսանողների, հաշմանդամություն ունեցող և ծնողազուրկ ուսանողների հետ: Թարմացվել է վերոնշյալ ուսանողների տվյալների բազան, որի հիման վրա համապատասխան կարգավիճակ ունեցող ուսանողները ներգրավվել են մի շարք կրթաթոշակային ծրագրերում և ստացել ուսման վարձի լրիվ կամ մասնակի փոխհատուցում:

✓

ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի 2017-2018 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները

2017-2018 ուսումնական տարում Արտաքին կապերի և լրատվության բաժնի կողմից նախատեսվում է իրականացնել հետևյալ գործողությունները.

- ✓ Նկարահանել ԳՊՀ-ին վերաբերող նոր տեղեկատվական հոլովակ՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն լեզուներով:
- ✓ Հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումն ապահովելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ, մշակել ԳՊՀ հանրային կապերի հայեցակարգի նախագիծը:
- ✓ Մշակել և ԳՊՀ գիտական խորհրդին ներկայացնել «ԳՊՀ մեդալ»-ի օրինակը:
- ✓ Ակտիվորեն համագործակցել «Գեղամա աշխարհ» թերթի հետ: Թերթում ունենալ «Գավառի պետական համալսարան» խորագիր, որտեղ պարբերաբար կտպագրվեն համալսարանական նորությունները:
- ✓ Ուսումնասիրել բուհերի ազգային և միջազգային վարկանիշավորման համակարգերը և սահմանված չափանիշերին համապատասխան քաղաքականություն մշակել և իրականացնել:

- ✓ Մշտադիտարկման ենթարկել համացանցային տիրույթում ԳՊՀ-ին վերաբերող տեղեկատվությունը և անհրաժեշտ փոփոխություններ կատարելու համար համագործակցել համապատասխան խմբագրությունների հետ:
- ✓ Պարբերաբար կազմակերպել հանդիպումներ ԳՊՀ կրթաշնորհառու ուսանողների հետ, քննարկել ուսանողներին մտահոգող հարցերը և նրանց ներգրավել կամավորական աշխատանքներում:
- ✓ Կազմակերպել Արտաքին կապերի և լրատվության բաժնի կողմից նկարահանված լուսանկարների ցուցահանդես:
- ✓ Առանձնահատուկ ուշադրություն դարձնել համացանցում ԳՊՀ-ի վերաբերյալ անգլերեն և ռուսերեն նյութերի տարածմանը:
- ✓ Սոցիալական ցանցերում ակտիվորեն տարածել ԳՊՀ-ին վերաբերող տեղեկատվությունը:
- ✓ Ստեղծել Գավառի պետական համալսարանի «QR Code»-ը:
- ✓ Ակտիվացնել համագործակցությունը բոլոր գործընկեր կազմակերպությունների, ներքին և արտաքին շահառուների հետ:

ԳՊՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Գործունեության ոլորտները	2015-2016 ուստարի	2016-2017 ուստարի
<i>www.gsu.am կայքի նորություններ</i>	197	293
<i>Իրազեկման հայտերի քանակը</i>	38	35
<i>infogsu@mail.ru, info@gsu.am (հայերեն, ռուսերեն, անգլերեն) հարցերի քանակը (բոլոր հարցերին տրվել են պատասխաններ)</i>	2065	2093
<i>Տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներում ԳՊՀ-ին վերաբերող հրապարակված նյութերի քանակը</i>	119	246
<i>Լուսանկարահանված միջոցառումներ/ Լուսանկարների քանակը</i>	234/13600	316/8720
<i>«Գեղամա» հեռուստաընկերության «Լուրեր» լրատվական ծրագրով եթեր հեռարձակված ԳՊՀ-ին վերաբերող տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)</i>	6/23.83	11/46. 55

<p>«Գեղամա» հեռուստաընկերությամբ «Համալսարանական ժամ» հաղորդաշարի շրջանակում եթեր հեռարձակված տեսանյութերի քանակը և տեսանկարահանման տևողությունը (րոպեներով)</p>	<p>2/21.18</p>	<p>6/1ժ.8ր 49վ</p>
--	----------------	--------------------

ԳՊՀ ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՎԱՅԻՆ ՏՎՅԱԼՆԵՐ

<p>ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ</p>	<p>ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԹԻՎԸ 2015-2016</p>	<p>ԿՐԹԱԹՈՇԱԿԱՌՈՒ ՆԵՐԻ ԹԻՎԸ 2016-2017</p>
<p>«Ժիրայր Նիշանյան հիմնադրամ». կրթավճար ծրագիր</p>	<p>77</p>	<p>76</p>
<p>«ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերություն</p>	<p>42</p>	<p>25</p>
<p>Հայաստանի երիտասարդական հիմնադրամ</p>	<p>24</p>	<p>10</p>
<p>«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն</p>	<p>29</p>	<p>18</p>
<p>«Հայ կրթական հիմնարկություն»</p>	<p>12</p>	<p>4</p>
<p>«Հրայր և Աննա Հովնանյաններ» հիմնադրամի կրթաթոշակառուներ</p>	<p>-</p>	<p>76</p>
<p>ԸՆԴԱՄԵՆԸ</p>	<p>189</p>	<p>209</p>

**Պ. Օ. Մուրադյան՝
ԳՊՀ արտաքին կապերի և
լրատվության բաժնի վարիչ**

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԲԱԺՆԻ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) բաժնում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- ✓ Նախագծվել և մշակվել է ԳՊՀ պաշտոնական կայքի նոր տարբերակը: Այս տարբերակը բնորոշվում է ժամանակակից «Flat» դիզայնով, պարզեցված և հեշտ կիրառելի ադմինիստրատորի կառավարման «Wordpress» համակարգով, «Adaptive Design» կառուցվածքով, ինչը հեշտությամբ կիրառելի է դարձնում կայքը նաև հեռախոսների, պլանշետային համակարգիչների օգտատերերի համար:
- ✓ Գործարկվել է ԳՊՀ նոր սերվերային կենտրոնը: Տեղակայվել և կարգաբերվել են երկու սերվերներ, ներդրվել է սերվերների անվտանգության և պահուստային պատճենման ընթացակարգ:
- ✓ Իրականացվել են ԳՊՀ պաշտոնական կայքի, «E-Learning. GSU» համակարգի, «E-Library. GSU» էլեկտրոնային գրադարանի, «Examination GSU» համակարգի հոսթինգային առցանց տիրույթից համալսարանական սերվեր տեղափոխման, տեղակայման, կարգաբերման և գործարկման աշխատանքները:
- ✓ Իրականացվել են նորացվող համակարգչային գույքի տեղադրման, վերաբաշխման աշխատանքները: Հաշվետու ժամանակահատվածում տեղադրվել և կարգաբերվել է 40 նոր համակարգիչ, նորերով փոխարինվել է 15 համակարգիչ:
- ✓ Կատարվել են համակարգչային լսարանների արդիականացման աշխատանքներ: Բոլոր համակարգչային լսարանների համակարգիչները ֆորմատավորվել և վերազինվել են ստանդարտ և մասնագիտական ծրագրային փաթեթներով:
- ✓ Գործարկվել է հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի մասնաշենքի նոր համակարգչային լսարանը: Իրականացվել են լսարանի համակարգչային ցանցի նախագծման, գույքի տեխնիկական և ծրագրային վերազինման աշխատանքներ:
- ✓ Վերամոնտաժվել է բնագիտական մասնաշենքի 201 համակարգչային լսարանի ցանցը, կատարվել են համակարգչային գույքի վերադասավորման աշխատանքներ:
- ✓ Մշակվել են համակարգչային լսարանների դասաբաշխման ժամանակացույցերը:
- ✓ Կատարվել են SS բաժնի ընթացակարգերի բարելավման և արդիականացման աշխատանքներ, ներդրվել է էլեկտրոնային հաշվետվությունների տրամադրման ընթացակարգ:
- ✓ Որակի ապահովման բաժնի հետ համատեղ մշակվել են շուրջ 40 էլեկտրոնային հարցաթերթեր, տարմադրվել են խորհրդատվություններ:
- ✓ Կատարվել են ԳՊՀ պաշտոնական կայքում հայտարարությունների, էջերի օպերատիվ թարմացումներ, տեղադրվել են դասացուցակները, պարբերաբար հրապարակվել են քննաշրջանների ժամանակացույցերը, «Գնումներ» էջում

- պարբերաբար հրապարակվել են գնումների վերաբերյալ հայտարարությունները, էլեկտրոնային հարցումների հղումները:
- ✓ Կազմակերպվել են ԳՊՀ կենտրոնական մասնաշենքի նախասրահի էլեկտրոնային էկրանին ցուցադրվող նյութերի համակարգչային մշակումներ և թարմացումներ, ապահովվել է պաշտոնական հանդիպումների, միջոցառումների համակարգչային սպասարկում:
 - ✓ Կազմակերպվել է 2016-2017 ուսումնական տարվա բակալավրիատի և մագիստրատուրայի «E-Learning. GSU» էլեկտրոնային ուսուցման համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Ըստ ուսումնական պլանների՝ «E-Learning. GSU» համակարգում համալրվել են խմբերի, դասախոսների անվանական և առարկաների ուսուցման տիրույթները, տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկներ:
 - ✓ Կազմակերպվել է 2017թ. ուսումնական տարվա հեռակա ուսուցման ֆակուլտետում «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացը: Բոլոր խմբերի համար ստեղծվել են «Ուսանող» օգտատերի անվանական և խմբի վիրտուալ տիրույթները: Տեղադրվել են բոլոր խմբերի ուսումնական պլանները, ուսանողների ցանկերը: Համակարգի միջավայրում ստեղծվել են առարկայական ուսուցման փաթեթներ: Տպված տարբերակով տրամադրվել են համակարգից օգվելու մուտքային տվյալները բովանդակող թերթիկները:
 - ✓ Շարունակական բնույթ է կրել «E-Learning. GSU» համակարգի վերաբերյալ դասախոսներին և ուսանողներին խորհրդատվությունների տրամադրումը, առարկաների փաթեթների խմբագրման գործում աջակցության ապահովումը:
 - ✓ «Examination:-GSU» համակարգի միջոցով նախապատրաստվել և կազմակերպվել են միջանկյալ և ամփոփիչ քննություններ: Հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 14 թեստային քննություն:
 - ✓ Իրականացվել է «Office 365» էլեկտրոնային փոստերի ծառայությունների համակարգի սպասարկում:
 - ✓ Կազմակերպվել են համացանցի հասանելիության, ցանցի կառավարման «MikroTik» համակարգի սպասարկման և մշտադիտարկման աշխատանքները:
 - ✓ Կատարվել է համակարգչային տեխնիկայի ծրագրային և տեխնիկական սպասարկում, խորհրդատվությունների տրամադրում:
 - ✓ Իրականացվել է տպիչների սպասարկում՝ լիցքավորում, վերանորոգում:
 - ✓ Քննարկվել և մշակվել են համակարգչային գույքի գնումների ցուցակները:

ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2017-2018 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները

- ✓ Նորարարական մոտեցումով միջազգային համագործակցության ենթադրմենային կայքի նախագծում և մշակում:
- ✓ ԳՊՀ մոբայլ iOS հավելվածի մշակում, Android հավելվածի նոր տարբերակի թողարկում: Հավելվածը հնարավորություն կտա մոբայլ հարթակի միջոցով ծանոթանալ համալսարանական նորություններին, հայտարարություններին, դասացուցակներին, ժամանակացույցերին, ինչպես նաև ստանալ ծանուցումներ:

- ✓ Էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ընդլայնման նպատակով «Առցանց իրազեկման հայտ», «Էլեկտրոնային զեկուցագիր», «Էլեկտրոնային օրացույց» ծառայությունների ներդնում, ինֆորմացիոն մշակույթի զարգացման ուղղված միջոցառումների իրականացում:
- ✓ «Office 365» փաթեթի ծառայությունների շրջանակներում ներքին փաստաթղթերի ամպային տիրույթի կառուցվածքի նախագծում և մշակում:
- ✓ ԳՊՀ պաշտոնական կայքի կատարելագործում, անգլերեն և ռուսերեն տարբերակների մշակում:
- ✓ ԳՊՀ բոլոր կայքերի և տեղեկատվական համակարգերի՝ www.gsu.am, www.student.gsu.am, www.career.gsu.am, www.elearning.gsu.am, www.library.gsu.am, www.phone.gsu.am սպասարկում, անգլերեն և ռուսերեն էջերի պարբերական համալրումներ, ԳՊՀ «Youtube» տեսահարթակի համալրում և սպասարկում:
- ✓ Համակարգչային գույքի գույքագրման, համարակալման, կնիքման, տեխնիկական անձնագրերի կազմման, տվյալների բազայի հավաքագրման աշխատանքների կազմակերպում:
- ✓ Էլեկտրոնային ուսուցման «E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման գործընթացի պարբերաբար իրականացում (ուսումնական պլանների հիման վրա թարմացումների, փոփոխությունների կազմակերպում):
- ✓ «Examination. GSU» համակարգով քննությունների նախապատրաստում և կազմակերպում:
- ✓ ԳՊՀ սերվերային կենտրոնի սպասարկում և զարգացում:
- ✓ Համալսարանում համացանցի կապի տրամադրման, համակարգչային ցանցի, բաժանորդային համակարգիչների ծրագրային և տեխնիկական սպասարկման, վերահսկման աշխատանքների իրականացում:
- ✓ Համակարգչային լսարանների մշտադիտարկման, պարբերաբար ծրագրային վերազինման, դասաբաշխման աշխատանքների կազմակերպում:
- ✓ Նորացվող համակարգչային գույքի տեղադրման, համակարգչային լսարանների գույքի վերաբաշխման աշխատանքների իրականացում:

«E-Learning. GSU» համակարգի ինֆորմացիոն ապահովման վերաբերյալ տվյալներ

«E-Learning. GSU» տիրույթ	Ժամանակահատվածը				
	31.08.2013թ.	31.08.2014թ.	31.09.2015թ.	31.09.2016թ.	31.09.2017թ.
«Ուսանող» օգտատերի անվանական տիրույթ	99	150	156	162	170
«Դասախոս» օգտատերի անվանական տիրույթ	150	163	176	179	184

«Առարկա» ուսուցման փաթեթների տիրույթ	842	1960	2191	2300	2440
---	-----	------	------	------	------

«E-Learning. GSU» համակարգի ուղեցույցերի դիտումներ				
	(31.08.2013- 31.08.2014թթ.)	(01.09.2014- 31.08.2015թթ.)	(01.09.2015- 31.08.2016թթ.)	(01.09.2016- 31.08.2017թթ.)
Դասախոսի տեսաուղեցույց	395	104	186	290
Ուսանողի տեսաուղեցույց	1156	1044	286	510

Վ. Կ. Ավերիսյան՝
ԳՊՀ Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ

**ԳՎԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ
2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գավառի պետական համալսարանի գրադարանը և ընթերցասրահները տեղակայված են համալսարանի կենտրոնական և բնագիտական մասնաշենքերում. ԳՊՀ կենտրոնական մասնաշենքում տեղակայված գրադարանը համալրված է հումանիտար ուղղվածության մասնագիտական գրականությամբ, իսկ բնագիտական ֆակուլտետի մասնաշենքի գրադարանը՝ բնագիտական մասնագիտական գրականությամբ: Երկու գրադարանները միասին սպասարկում են համալսարանի ուսանողներին, պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմին, այլ շահառուներին:

ԳՊՀ գրադարանի առաքելությունն է գրադարանային գործառույթների իրականացումը և պարտականությունների բարեխիղճ կատարումը՝ ապահովելով սովորողներին անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ, համապատասխան տեղեկատվական աղբյուրներով:

Գրադարանի նպատակն է նպաստել ուսումնական գործընթացին՝ համալրելով գրքաֆոնդը, կազմակերպելով և ընթերցողներին տրամադրելով մասնագիտական գրականություն, անհրաժեշտ շտեմարաններ, սովորողների մոտ ձևավորելով տեղեկատվության հետ ինքնուրույն աշխատելու կարողություն և հմտություններ, զարգացնելով ընթերցանության մշակույթ: Այս նպատակներն իրագործելու համար գրադարանը մատուցում է հետևյալ ծառայությունները.

- ընթերցողների գրանցում, որն իրավունք է տալիս ուսումնառության տարիներին օգտվելու գրադարանից՝ սպասարկման սահմանված ձևերով,
- ընթերցասրահում և գրադարանում ընթերցողների սպասարկում «դասական» և էլեկտրոնային եղանակներով,
 - տեղեկատվական-մատենագիտական սպասարկում,
 - գրականության ցուցադրում (մատենագիտական ցանկեր, գրքերի ցուցահանդեսներ, գրապահոցի «Բաց դռների օրեր»-ի անցկացում և այլն),
 - անմիջական օգնություն ընթերցողին՝ տեղեկատվություն որոնելու, ընտրելու, գրադարանի կայքից օգտվելու, նորություններին իրազեկ դառնալու գործընթացներում,
 - Ընթերցողների հետ անհատական և խմբակային աշխատանքի տարբեր ձևերի ու մեթոդների կիրառում:

ԳՊՀ գրադարանում աշխատանքներ են իրականացվել նաև հետևյալ ուղղություններով.

- գրադարանային ֆոնդի համալրում,
- մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում,
- գրքերի համալրումների ցուցադրում և դրանց մասին տեղեկատվության ապահովում,
 - գրքապաշարի մշակում,
 - գրքերի շրջանառում,
 - վնասված գրքերի վերանորոգում,

- մասնագիտական գրականության ֆոնդերի գրացուցակների մշակում և համալրում,
- մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում,
- ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Գրադարան» հատվածամասի լրամշակում,
- ընթացսարահում հետազոտող ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համակարգչային-տեղեկատվական սպասարկում:

Գրադարանային ֆոնդի համալրում

Հաշվետու ուսումնական տարում գրադարանը համալրվել է թվով 1200 կտոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, որից 110 կտոր գրականությունը ձեռք է բերվել համալսարանի ֆինանսական միջոցներով, ԳՊՀ ռեկտորատի և պրոֆեսորադասախոսական կազմի աջակցությամբ:

Գրադարանի համալրման գործում մշտական աջակից է ՀՀ Սփյուռքի նախարար, ԳՊՀ կառավարման խորհրդի նախագահ տիկին Հրանուշ Հակոբյանը, ում կողմից նվիրաբերվել է հայագիտական և գեղարվեստական նոր հրատարակություններ՝ թվով 50 օրինակ:

Գրադարանին ամենամյա նվիրատվություն է կատարում նաև ՀՀ Գեղարքունիքի մարզային գրադարանը, որը հաշվետու տարում տրամադրել է 330 գեղարվեստական և հայագիտական գրքեր:

«Հույս և օգնություն» հասարակական կազմակերպության կողմից նվիրատվության կարգով համալսարանին տրամադրվել է գեղարվեստական և հայագիտական 30 ձեռնարկ:

Հաշվետու ուստարում 350 կտոր գրականության նվիրատվություն է կատարել Լալիկ Խաչատրյանը: Համալրված գրականությունը հայերեն, ռուսերեն գեղարվեստական, հայագիտական, ինչպես նաև լեզվաբանական, մանկավարժական մասնագիտական գրքեր են:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից ստացել ենք 43 տնտեսագիտական գրքեր:

Նաիրա Պետրոսյանի կողմից նվիրաբերվել է 134 կտոր ֆրանսերեն մասնագիտական և գեղարվեստական գրքեր:

Արմինե Դավթյանը գրադարանին տրամադրել է 45 գիրք,

Խաչիկ Արզականցյանը՝ 142 գիրք,

Նունե Դովլաթյանը՝ 64 գիտակրթական հանդես:

Մուտքագրված գրքերի նկարագրում և դասակարգում

Այսպես՝ համալրված 1200 միավոր գրականությունից

- հայերեն են՝ 20.878 գիրք /համալրվել է 858 գիրք/՝ 48%,
- ռուսերեն են՝ 17.152 գիրք, /համալրվել է 185 գիրք/՝ 38%,
- այլ լեզուներով՝ 6.340 գիրք, /համալրվել է 167 գիրք/՝ 14%:

ԳՊՀ թիվ 1 գրադարանի գրապահոցի գրադարակների դասավորման արդյունքում դուրս են բերվել 70 կտոր հնացած, մաշված, մասամբ անընթեռնելի, կոմունիստական-սոցիալիստական գաղափարախոսության և Մարքս-Լենինյան ուսմունքի լուսաբանմանը նվիրված գրականություն: Արդյունքում օտարվել է արդիականությունը կորցրած 1930-50-ական թվականներին հրատարակված 70 կտոր գրականություն:

Այսպիսով, ԳՊՀ գրադարանն իր համալրումների և զտումների արդյունքում գրքային ֆոնդում ունի 44.370 գրադարանային միավոր:

Կատարվել է նշված գրքաֆոնդի մասնագիտական գրացուցակների մշակում:

Արդյունքում գրադարանում առկա է յուրաքանչյուր մասնագիտությանը համապատասխան մասնագիտական գրքերի հետևյալ քանակը.

- Հայոց լեզու և գրականություն՝ 2903
- Ռուսաց լեզու և գրականություն՝ 2389
- Անգլերեն լեզու և գրականություն՝ 2240
- Պատմություն՝ 1602
- Իրավագիտություն՝ 1643
- Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա՝ 1287
- Կառավարում և ֆինանսներ՝ 2307
- Հաշվապահական հաշվառում՝ 2307
- Կենսաբանություն՝ 2435
- Դեղագործական քիմիա՝ 232
- Աշխարհագրություն՝ 934
- Բնապահպանություն և բնօգտագործում՝ 101
- Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա՝ 2514
- Քարտեզագրություն և կադաստրային գործ՝ 60
- Սերվիս՝ 42:

Մասնագիտական տեղեկատվական բազայի համալրում

Մասնագիտական տեղեկատվական բազան իրենից ներկայացնում է մասնագիտական հոդվածների մատենագիտական ցանկեր: Գրադարանում համալրվում և լրամշակվում են թեմատիկ հանձնարարականների մատենագիտական ցանկը, որտեղ ներառված են տարբեր հանդեսների, գիտական ժողովածուների մեջ ներառված հոդվածների վերնագրեր /պարունակում է 3938 հոդված/ և ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուների մատենագիտական ցանկը՝ 12 գիտական ուղղություններով /պարունակում է 1383 հոդված/:

Այս ցանկերը, բացի գրադարանում առկա թղթային տարբերակից, տեղադրված են նաև ԳՊՀ www.gsu.am պաշտոնական կայքի «Էլեկտրոնային գրադարան» հատվածամասում՝ պարբերաբար լրամշակումներով:

Գրադարանային ամենօրյա աշխատանքներից բացի, ԳՊՀ գրադարանը հաշվետու ուսումնական տարում իրականացրել է նաև բազմապիսի միջոցառումներ:

ԳՊՀ գրադարանի իրականացրած միջոցառումները

- ✓ Գրադարանում ավանդույթ է դարձել յուրաքանչյուր կիսամյակի սկզբում՝ սեպտեմբեր և հունվար ամիսներին «Գրադարանի բաց դռների օրեր»-ի անցկացումը, որի ընթացքում ուսանողները, հատկապես՝ առաջին կուրսեցիները, ծանոթանում են համապատասխան մասնագիտական գրքապաշարին:

- ✓ Հաշվետու ուստարում ակտիվ շրջանառվել են ինչպես մասնագիտական /ուսումնական գործընթացի և հանձնարարականների պահանջներից ելնելով/, այնպես էլ գեղարվեստական գրականություն: Գրքատացքին նպաստում են համայրված գրականության ցուցադրությունը գրադարանում և ընթերցասրահներում, համայրումների մասին տեղեկատվության տարածումը՝ էլեկտրոնային փոստերի համակարգի միջոցով:
- Ուսանողների շրջանում գեղարվեստական գրականության լայն շրջանառությունը առիթ հանդիսացավ հաշվետու ուստարվա ընթացքում բազմաթիվ գրքերի քննարկման համար:
Քննարկվել են հետևյալ գրքերը.
- Ա. Քամյու՝ «Անկումը»,
- Ռ. Բրեդբերի՝ «451 աստիճան ըստ ֆարենհայթի»,
- Վ. Սարոյան՝ «Մարդկային կատակերգություն»,
- Միջոցառում՝ նվիրված Սրբոց Վարդանանց տոնին /ապրիլի 20, գրադ. 2, ԻՀՏ և ԴՔ/,
- Վ. Պետրոսյան՝ «Մենավոր ընկուզենին» և «Ապրած և չապրած տարիները»:
Գրադարանը ծավալել է գործունեություն՝ հետևյալ ուղղություններով.
- ✓ Ընթերցասրահում և գրադարանում ցուցադրվել են գրականության նոր համայրումները, որոնց մասին տեղակացվել են դեկանատները և ամբիոնները:
- ✓ Գրադարանը անմասն չի մնացել ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացին, որի շրջանակներում ներկայացվել են ԳՊՀ մատենագիտական ցանկերը, ԳՊՀ դասախոսների նոր հրատարակությունների ցանկերը և պահանջվող այլ նյութեր:
- ✓ Դեկանատների և մասնագիտական ամբիոնների հետ համագործակցության արդյունքում, ինչպես նաև գրադարանում պատվիրված և մերժված գրականության ցանկերով կազմվել և սահմանված կարգով ռեկտորատ է ներկայացվել գրքերի գնումների ցանկ:
- ✓ ԳՊՀ գրադարանը մի խումբ ուսանողների հետ աշխատանքային ծրագիր մշակեց, որն իրականացրեց Գավառի մանկատանը: Ձևավորվեցին մանկատան սաների 3 տարիքային խմբեր, և ուսանողները պարբերաբար այցելություններ կազմակերպեցին Գավառի մանկատան: Այցելությունների նպատակն էր մանկատան սաներին օգնելն ու աջակցելը դասապատրաստման գործընթացում, ինչպես նաև գրքերի քննարկումներ կազմակերպելը: Քննարկվեցին «Ժողովրդի վրիժառուն», «Վարդանանքը», Վարդան Այգեկցու առակները: Այցելությունների նպատակն էր նաև զրույցների միջոցով նրանց կրթական, տեղեկատվական կարիքների բացահայտումը և դրանց հնարավորինս բավարարումը:
- ✓ 2017թ. հունվար ամսին ԳՊՀ ուսանողական ինքնակառավարման մարմինները և գրադարանը միացան ՀՀ Սփյուռքի նախարարության կողմից հայտարարած «Դու ի՞նչ ես արել Ղարաբաղի համար» համահայկական շարժմանը: Հավաքագրվեցին և տուփավորվեցին 100-ից ավելի գրքեր, որոնք ուղարկվեցին Արցախի զորամասեր:

- ✓ Գրադարանի աշխատակազմը մասնակցել է տարբեր համապետական միջոցառումների, ինչպես նաև «Մաքուր համալսարան» ծրագրի շրջանակներում կազմակերպված շաբաթօրյակներին: Արդյունքում ԳՊՀ-ն արժանացել է «Մաքուր կրթական հաստատություն» կոչմանը:

ԳՊՀ գրադարանի համագործակցային ծրագրերը

Գրադարանը ակտիվորեն համագործակցում է ԳՊՀ բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, ներքին և արտաքին շահառուների, կրթական, գիտական, երիտասարդական, մշակույթային կազմակերպությունների հետ: Սերտ է համագործակցությունը Գավառի մարզային և քաղաքային գրադարանների, ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների հետ:

ԳՊՀ գրադարանը Հայաստանի գրադարանային ասոցիացիայի անդամ է, համագործակցում է Հայաստանի ազգային գրադարանի հետ, որի շրջանակներում ԳՊՀ գրադարանն ամեն տարի ներկայացնում է հաշվետվություն գրադարանային հազեցվածության մասին: Գրադարանի հազեցվածության մասին ցուցանիշները հրատարակվում են Հայաստանի ազգային գրադարանի «Հայաստանի գրադարանները» մատենաշարում:

ԳՊՀ հրատարակությունների օրինակներ են տրամադրվում Հայաստանի ազգային գրադարանին, ինչպես նաև ՀՀ այլ բուհերի ու Արցախի պետական համալսարանի գրադարաններին:

ԳՊՀ գրադարանի ու Գեղարքունիքի մարզային և Գավառի քաղաքային գրադարանների հետ համագործակցության արդյունքում համալսարանի գրքերի նվիրատվություններով վերոնշյալ գրադարաններում տարեցտարի համալրվում է ԳՊՀ հրատարակությունների ֆոնդը: ԳՊՀ հրատարակություններով են համալրվել նաև Գեղարքունիքի մարզի դպրոցների գրադարանները:

Մարզային գրադարանի հետ համագործակցության շրջանակում անցկացվում է գրքերի փոխադարձ նվիրատվություն, որը վերածվել է գեղեցիկ ավանդույթի և շարունակական բնույթ է կրում:

ԳՊՀ գրադարանի 2017-2018 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները

2017-2018 ուսումնական տարվա ընթացքում նախատեսվում են ԳՊՀ գրադարանի զարգացման հետևյալ ուղղությունները.

- աշխատանքներ իրականացնել գրադարանի գրքաֆոնդի համալրման ուղղությամբ՝ էլնելով դասընթացների վերանայված և արդիականացված կրթական ծրագրերից, ներկայացվող նոր մասնագիտական գրականության ցանկերից և գրադարանում հաճախ պատվիրվող և մերժվող գրականությունից,
- «E-Library.GSU» էլեկտրոնային գրադարանի շարունակական համալրում՝ անհրաժեշտ գրականությամբ,

- նպատակային համալրումների հետ մեկտեղ շարունակել գրքաֆոնդի արդիականությունը կորցրած գրականության զտման աշխատանքները՝ գրադարանում որակյալ ուսումնական նյութերով հարուստ գրքաֆոնդ ձևավորելու նպատակով,
- համագործակցել ԳՊՀ կառուցվածքային ստորբաժանումների հետ և ԳՊՀ պաշտոնական կայքէջի «Էլեկտրոնային գրադարան» հատվածամասում ստեղծել «Համալրված գրականություն» բաժինը, որտեղ պարբերաբար տեղեկություններ կհաղորդվեն գրքաֆոնդը համալրած գրականության մասին,
- գրքաֆոնդն անհրաժեշտ մասնագիտական գրքերով համալրելու, ուսումնամեթոդական կարիքների վերհանման նպատակով իրականացնել հարցումներ դասախոսների և ուսանողների շրջանում, նրկայացնել նոր գրականության պահանջագիր, բավարարել գրադարանի բաժանորդների կարիքները,
- ընդլայնել ԳՊՀ գրադարանի համագործակցության շրջանակը, կապեր հաստատելու ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվան լեզվի և Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտների գրադարանների, այլ կառույցների հետ,
- հետազոտող ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի համար ընթերցասրահում ակտիվացնել համակարգչային-տեղեկատվական սպասարկումը,
- Արցախի տարբեր համայնքներին, ուսումնական հաստատություններին և զորամասերին նվիրաբերել գեղարվեստական գրականություն,
- շարունակական աշխատանքներ իրականացնել՝ ուսանողների շրջանում ընթերցանությունը խթանելու նպատակով:

**Ն. Ֆ. Պեպրոսյան՝
ԳՊՀ գրադարանի վարիչ**

**ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱՐԱՆԱԿԱՆ
ԿԼԻՆԻԿԱՅԻ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան 14 տարի շարունակ ծավալում է իր գործունեությունը՝ նպատակ ունենալով խորացնել իրավաբան ուսանողների մասնագիտական գիտելիքներն ու գործնական հմտությունները, ինչպես նաև Գեղարքունիքի մարզի բնակչությանը մատուցել անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Հաշվետու ժամանակահատվածը նշանավորվեց ԳՊՀ իրավաբանական կլինիկայի գործունեության ամփոփմամբ, ինչի առիթով իրավաբանական կլինիկայի հիմնադրման օրը՝ դեկտեմբերի 10-ին, կազմակերպվեց իրավաբան ուսանողների կլոր-սեղան, քննարկում «Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներն ու ազատությունները» թեմայով: Զեկուցումներով հանդես եկան Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի 6 իրավաբան ուսանողներ: Քննարկմանը մասնակցեցին ԳՊՀ դասախոսներ, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության անդամներ:

ԳՊՀ-ի իրավաբանական կլինիկայում ուսանողներն ուսումնասիրում են կանանց և երեխաների իրավունքներ, փաստաբանական գործունեության հմտություններ, սովորում են մասնագիտական էթիկայի նորմեր, ընդունում են հաճախորդների, յուրացնում են իրավաբանական գործերի կազմման և վարման կանոնները, կազմում հայցադիմումներ, նամակներ և այլ պաշտոնական փաստաթղթեր, ծանոթանում են իրավաբանական խորհրդատվության փուլերին: Ի թիվս այլ առարկաների, իրավաբանական կլինիկայում ներդրվել է նաև «Իրավաբանական գրագրություն» դասընթացը՝ յուրաքանչյուր ուսանողի տրամադրելով նաև դասընթացի դասագիրք, անհրաժեշտ ուսումնական նյութեր:

2016-2017 ուսումնական տարվա ընթացքում իրավաբանական կլինիկայի ուսանողները ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի, վարչական և քաղաքացիական վերաքննիչ դատարաններում մասնակցել են դատաքննությունների՝ քննված գործերի մասին իրենց կարծիքը ներկայացնելով իրավաբանական կլինիկայի «Փաստաբանական հմտություններ» դասընթացին:

Հաշվետու ժամանակահատվածում իրավաբանական կլինիկայում խորացված ուսուցում են անցել 6 ուսանողներ, որոնք 24 քաղաքացիների տրամադրել են անվճար իրավաբանական խորհրդատվություն:

2016 թվականի հոկտեմբեր - դեկտեմբեր ամիսներին Իրավաբանական կլինիկայի ուսանողները «Շրջիկ կլինիկա» ծրագրի շրջանակներում հանդիպումներ են կազմակերպել նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի երկու գյուղական համայնքներում, տեղի բնակիչներին հուզող բազմաթիվ իրավաբանական խնդիրների մասին տվել պարզաբանումներ, պետական մարմիններին ուղարկել համապատասխան հարցումներ և գրություններ:

ԳՊՀ իրավաբանական կլինիկայի կրթության ծրագրի ղեկավար Արսեն Ապրոյանը մասնակցել է ՄԱԿ-ի փախստականների գործերով հանձնակատարի գրասենյակի կողմից

Երևան քաղաքում կազմակերպված 4 միջոցառումների՝ սեմինար-քննարկումների, որակավորման բարձրացման դասընթացների:

2016թ. հոկտեմբերի 29-31-ը Հայաստանի Հանրապետության Դիլիջան քաղաքում անցկացվեց Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի, ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակի (ՄԱԿ ՓԳՀ) և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպված «Փախստականների իրավունք» խորագիրը կրող 6-րդ դպրոցի դասընթացը:

Դպրոցի աշխատանքներին մասնակցեցին Հայաստանի Հանրապետության տարբեր ուսումնական հաստատությունների, հասարակական կազմակերպությունների, միջազգային կառույցների ներկայացուցիչներ, հանրապետության առաջատար բուհերի իրավաբանական կլինիկաների տնօրեններ, ուսանողներ:

Գավառի պետական համալսարանի պատվիրակների կազմում էին բուհի պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Գրիշա Չիբուխյանը, նույն բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ Աննա Համբարձումյանը, Սեդա Ղարիբյանը, Տիգրան Չանդոյանը, Մարիամ Հակոբյանը, հեռակա ուսուցման ֆակուլտետի նույն բաժնի 5-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Սարգսյանը, ովքեր ակտիվորեն մասնակցեցին դպրոցի աշխատանքներին և խրախուսվեցին:

Ա. Ապրոյանը ներկայացրեց դասախոսությունների շարք՝ «Երեխայի իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները փախստականի և ապաստանի իրավունքների համատեքստում» և «Փախստականների իրավունք. կլինիկական կրթություն» թեմաներով:

Եռօրյա դասընթացի շրջանակում մասնակիցներին ներկայացվեցին փախստականների իրավունքների միջազգային և ներպետական պաշտպանության հիմնարար սկզբունքներն ու կառուցակարգերը, փախստականի կարգավիճակի սահմանման առանձնահատկությունները, ՀՀ-ում փախստականների իրավունքների դատական պաշտպանության և այլ հիմնահարցեր:

Դպրոցի կազմակերպումը նպատակ էր հետապնդում ապահովել ապագա իրավաբաններին, հետազոտողներին, պրակտիկ աշխատողներին՝ ապաստանի և փախստականների իրավունքի բնագավառում հիմնարար գիտելիքներով, խրախուսել մասնակիցներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել փախստականների իրավունքների պաշտպանության, փախստականների պաշտպանության իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմների կիրառման ոլորտներում, ծանոթացնել Հայաստանի Հանրապետության իրավաբանական կլինիկաների գործունեությանը՝ ապահովելով դրանց արդյունավետ համագործակցությունը և փախստականների իրավունքների պաշտպանության ոլորտում կլինիկական կրթության զարգացումը:

Գավառի պետական համալսարանի իրավաբանական կլինիկան փորձում է լուծել կարևոր խնդիր՝ օժանդակելով սոցիալապես անապահով քաղաքացիներին, անվճար խորհրդատվություն մատուցելով առաջին հերթին կանանց և երեխաներին, ինչպես նաև սոցիալապես անապահով այլ անձանց:

Հատկանշական է, որ իրավաբանական կլինիկան փորձում է սովորողների տեսական գիտելիքները հարստացնել պրակտիկ հմտություններով՝ ուսանողներին տալով անհրաժեշտ իմացություն և փորձ գործնական աշխատանքով զբաղվելու համար:

Հաշվետու ժամանակաշրջանում իրավաբանական կլինիկայում տարբեր թեմաներով սեմինարներ են անցկացրել ՄԱԿ-ի Երևանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Հայկական ստոցիացիայի և այլ կազմակերպությունների փորձառու իրավաբաններ ու փորձագետներ:

2017 թվականի հունվար ամսից ԳՊՀ իրավաբանական կլինիկան պատրաստվում է առավել ակտիվ համագործակցել ՄԱԿ-ի փախստականների հանձնակատարի գրասենյակի, ինչպես նաև «Առաքելություն Հայաստան» բարեգործական, հասարակական կազմակերպության հետ:

Իրավաբանական կլինիկան ծրագրում է նաև մասնակցություն ունենալ Եվրամիության կողմից ֆինանսավորվող «Էրասմուս +» ծրագրին և գործընկերային կապեր հաստատել Եվրոպական բուհերի իրավաբանական կլինիկաների, իրավապաշտպան կազմակերպությունների հետ:

Իրավաբանական կլինիկան շարունակում է համագործակցել Հայաստանի իրավաբանական կլինիկաների, Գավառի մանկատան հետ և ակտիվորեն աջակցում է Գավառի պետական համալսարանի ուսանողական խորհրդի, ուսանողական գիտական ընկերության, ինչպես նաև Համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքներին:

**Ա. Հ. Ապրոյան՝
ԳՊՀ իրավաբանական կլինիկական
կրթության ծրագրի ղեկավար**

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հաշվետու ուսումնական տարում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունն իր կանոնադրական խնդիրներն արդյունավետ լուծելու նպատակով շարունակում է նախորդ տարիներից ավանդույթ դարձած սոցիալական ուղղվածության միջոցառումները համալսարանի աշխատողների և ուսանողների համար:

Համալսարանի աշխատակիցների աշխատանքային և դրա հետ կապված սոցիալական իրավունքներն ու օրինական շահերը ներկայացնելու և պաշտպանելու նպատակով արհեստակցական կազմակերպության և համալսարանի ռեկտորի միջև կնքվել է համալսարանի կոլեկտիվ պայմանագիր:

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի արհեստակցական կազմակերպությունն առավել ուշադրություն է դարձրել համալսարանի աշխատակիցների և ուսանողների սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ձեռնարկների իրականացմանը: Այդ նպատակով արհեստակցական կազմակերպությունը իր միջոցներից օգնության կարգով համալսարանի աշխատակիցներին հատկացրել է 1 միլիոն 865 հազար դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ԳՊՀ արհեստակցական կազմակերպությունը և ուսանողական խորհուրդը դասախոսների և բուհի վարչական աշխատակազմի հետ միասին իրականացրել են ուսանողական կյանքի ակտիվացմանը, ուսանողների հասարակական մշակութային, ինտելեկտուալ զարգացմանը ուղղված բազմաթիվ ծրագրեր:

2016-2017 ուսումնական տարում կազմակերպվել են ֆակուլտետային սպորտային միջոցառումներ, ինչպես նաև համալսարանի մինի ֆուտբոլի և ձեռքի գնդակի առաջնություններ:

Նշված ժամանակահատվածում բուհի ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպել են ուսանողական միջոցառումների շարք համալսարանի չորս ֆակուլտետներում՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին:

Արհեստակցական կազմակերպությունը իր կանոնադրական գործառույթներին համապատասխան այսուհետ ևս հետամուտ կլինի համալսարանի աշխատակիցներին և ուսանողներին աջակցության ցուցաբերմանը, իր առջև դրված խնդիրների պատշաճ լուծմանը:

**Լ. Գ. Սիրունյան՝
ԳՊՀ արհեստակցական կազմակերպության
նախագահ**

ԳՎՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հաշվետու ժամանակահատվածում Գավառի պետական համալսարանի ուսանողական ինքնակառավարման մարմինները՝ Ուսանողական խորհուրդը և Ուսանողական գիտական ընկերությունը, համակարգել են ուսանողների համար իրականացվող ծրագրերը, նպաստել ուսանողների ընդհանուր աշխարհայացքային, ստեղծագործական և մասնագիտական զարգացմանը, կազմակերպել են ուսուցողական, ճանաչողական ու դաստիարակչական ուղղվածություն ունեցող բազմաթիվ միջոցառումներ, ուսանողական ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովներ, սեմինար-քննարկումներ, բաց դասեր, գրական-գեղարվեստական ցերեկոյթներ, սպորտային և ինտելեկտուալ միջոցառումներ, բանավեճեր, ակտիվորեն համագործակցել ՀՀ այլ բուհերի ուսանողական կառույցների, դպրոցների, քոլեջների և այլ կազմակերպությունների հետ: Հաշվետու ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի Ուսանողական խորհուրդն ու Ուսանողական գիտական ընկերությունը հանդես են եկել հետևյալ նախաձեռնություններով.

2016թ. նոյեմբերի 5-ին- միջոցառում՝ նվիրված առաջին կուրսի ուսանողներին «Բարև, մե՛նք ենք» խորագրով.

2016թ. նոյեմբերի 18-ին միջոցառում՝ նվիրված անկախության 25-ամյակին «Անկախությունը՝ սավառնող թռչուն է» խորագրով.

2016թ. պրիլի 7-ին- միջոցառում՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին «Մայրության տոնը ԳՊՀ-ում» վերնագրով.

2016թ. մայիսի 5-ին- միջոցառում՝ նվիրված ԳՊՀ-ի հիմնադրման 24 ամյակին «Ծնունդդ շնորհավոր, ի՛մ համալսարան»,

2016թ. մայիսի 10-ին- միջոցառում՝ նվիրված մայիսյան տոներին «Մայիսյան հաղթական եռատոնը ԳՊՀ-ում» խորագրով.

2016թ. սեպտեմբերին կազմակերպվել է ճանաչողական հանդիպում ԳՊՀ ֆակուլտետների առաջին կուրսի ուսանողների հետ: Նրանց ծանոթացրել են ԳՊՀ ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության գործունեության առաքելությանը և նպատակներին:

2016թ. նոյեմբերի 14-ին ԳՊՀ ուսանողները մասնակցել են Վանաձորի պետական համալսարանում տեղի ունեցած հանրապետական գիտաժողովին:

2017թ. ապրիլի 30-ին կազմակերպվել է սեմինար-քննարկում «Ընտանեկան բռնությունների կանխումը» թեմայով:

2016թ. նոյեմբերի 10-ին կայացավ համերգ Մարգահամերգային համալիրում՝ ուսանողների օրվա առիթով, որին մասնակցեցին ԳՊՀ 120 ուսանողներ:

2016թ. նոյեմբերի 18-ին Գավառի պետական համալսարանում տեղի ունեցավ «Անկախությունը՝ սավառնող թռչուն» խորագիրը կրող ցերեկոյթ, որն իրականացվեց Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակում:

2017թ. նոյեմբերի 23-ին Գավառի պետական Համալսարանի Ոսանողական խորհրդի և Ոսանողական գիտական ընկերության առաջարկությամբ բուհի գրադարանային ֆոնդից հարյուրավոր գեղարվեստական և հայագիտական գրքեր նվիրաբերվեցին Արցախում տեղակայված զորամասերին:

2017թ. մարտի 29-ին Գավառի պետական համալսարանի ընթերցասրահում գրադարանի վարիչ Նաիրա Պետրոսյանի, ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության և ոսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվեց ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանի «Մարդկային կատակերգություն» վեպի քննարկում:

2017թ. ապրիլի 1-ին կայացավ սեմինար-քննարկում «Բուհ-Գործատու համագործակցությունը՝ ժամանակի պահանջ» խորագրով:

2017թ. ապրիլի 7-ին Գավառի պետական համալսարանի Բանասիրական ֆակուլտետի ոսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել էր գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին:

2017թ. ապրիլի 15-ին ԳՊՀ-ում նշվեց Սուրբ Հարության տոնը:

2017թ. Ապրիլի 20-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ Երևանի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, կազմակերպել էր «Ազգ-բանակ-2017» խորագրով համաժողով՝ նվիրված ռազմակրթական ոլորտի հիմնախնդիրներին: Մասնակցեցին Գավառի պետական համալսարանի Ոսանողական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները:

2017թ. ապրիլի 24-ին կայացավ <<Ո՛չ ցեղասպանությանը>> խորագիրը կրող միջոցառումը:

2017թ. ապրիլի 28-ին Գավառի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ «Բնական գիտությունները՝ 21-րդ դարում» թեմայով:

2017թ. մայիսի 4-ին կազմակերպվեց «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» միջֆակուլտետային մրցույթը:

2017թ. մայիսի 5-ին կազմակերպվեց միջոցառում՝ «Մեծ անկյուն փոքր քաղաքում» խորագրով, որը նվիրված էր ԳՊՀ հիմնադրման 24 ամյակին:

2017թ. մայիսի 10-ին կազմակերպվեց ցերեկույթ՝ նվիրված Մայիսյան եռատոնին:

2017թ. մայիսի 17-ին ԳՊՀ-ում կազմակերպվեց շախմատի միջֆակուլտետային մրցույթ:

2017թ. մայիսի 20-ից 24-ը կայացավ «Ֆինանսական նորարարություն ազգային զարգացման համար» խորագիրը կրող համահայկական ոսանողական համաժողովը, որն արդեն երկրորդ անգամ իրականացվում է Հայաստանում Եվրոպական պառլամենտի և ՀՀ կենտրոնական բանկի համագործակցությամբ՝ «Իմ ֆինանսների ամիս» ծրագրի շրջանակներում: Համաժողովին մասնակցեցին նաև ԳՊՀ ուսանողական խորհրդի անդամները:

2017թ. Հուլիսի 5-ին համալսարանի ուսանողական խորհուրդը և ուսանողական գիտական ընկերությունը կազմակերպեցին ԳՊՀ շրջանավարտների 20-րդ սերնդի դիպլոմների հանձման արարողությունը:

2017-2018 ուսումնական տարին Գավառի պետական համալսարանը դիմավորեց «Նոր մտածողություն, նոր մոտեցումներ և նախաձեռնություններ» կարգախոսով: Նոր ուսումնական տարին հորեյանական է Գավառի պետական համալսարանի համար՝ լրանում է բուհի հիմնադրման 25-ամյակը: Միաժամանակ, տարին նշանավոր և հիշարժան է համայն հայության համար, քանի որ Հայաստանը, Արցախն ու Սփյուռքը արժանավայել միջոցառումներով նշելու են Հայաստանի առաջին Հանրապետության մեկդարյա տարեդարձը և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակը, ինչպես նաև Էրեբունի-Երևանի հիմնադրման 2800-ամյակը:

2017-2018 ուսումնական տարում ԳՊՀ ինքնակառավարման մարմինները նախատեսել են կազմակերպել.

- միջոցառումների շարք՝ նվիրված մայր բուհի հիմնադրման 25-ամյակին,
- միջոցառումների շարք՝ նվիրված Հայաստանի առաջին Հանրապետության և մայիսյան հերոսամարտերի 100-ամյակին,
- միջոցառումներ՝ նվիրված Էրեբունի-Երեւանի 2800-ամյակին,
- Ֆակուլտետային և համահամալսարանական գիտաժողովներ, բազմաբնույթ ցերեկույթներ, ուսուցողական և դաստիարակչական միջոցառումներ,
- բանավեճեր, դերային խաղեր, սեմինարներ, ֆիլմերի դիտում-քննարկումներ, գրական քննարկումներ,
- ինտելեկտուալ խաղեր, մրցույթներ,
- գիտաճանաչողական էքսկուրսիաներ,
- այցելություններ դպրոցներ և քոլեջներ, աշխատանք դիմորդների հետ,
- հանդիպումներ Գավառի և հարակից համայնքների դպրոցականների, մանկատան և հատուկ դպրոցի սաների հետ,
- համագործակցություն ՀՀ այլ բուհերի ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ:

Ա. Ս. Սինանյան՝

ԳՊՀ Ուսանողական խորհրդի նախագահ,

Կ. Կ. Սարգսյան՝

**ԳՊՀ Ուսանողական գիտական ընկերության
նախագահ**

**ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՏՆՏԵՍԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ 2017-2018 ՈՒՍՏԱՐՎԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2016-2017 ուսումնական տարում Գավառի պետական համալսարանի տնտեսատեխնիկական ոլորտի գործունեությունն ընթացել է բուհի զարգացման ռազմավարական ծրագրի պահանջներին համապատասխան: Ծրագիրը նախանշել է համալսարանի տնտեսատեխնիկական անձնակազմի գործունեության հիմնական ուղղությունները, դրանց համապատասխան նպատակներն ու խնդիրները, իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներն ու կառուցակարգերը:

Տնտեսատեխնիկական անձնակազմի գործունեությունը.

Տնտեսատեխնիկական անձնակազմի բնականոն գործունեության հիմնական նպատակն է ապահովել համալսարանի ուսումնական, գիտական գործընթացների բնականոն ընթացքը:

Հաշվետու ժամանակահատվածում իրենց գործառույթները պատշաճ իրականացրել են համալսարանի տնտեսական, տեխնիկական, սպասարկման անձնակազմի բոլոր անդամները: 2016-2017 ուսումնական տարում ևս հետևողական կերպով ուղղորդվել և համակարգվել են բուհի տնտեսատեխնիկական անձնակազմի աշխատանքները: Մասնավորապես, կազմակերպվել են ավելի քան 12 կոլեկտիվ աշխատաժողովներ, հանդիպումներ՝ առանձին ստորաբաժանումների ղեկավարների և աշխատակիցների հետ: Բարձրացված բոլոր հարցերը ներկայացվել են ԳՊՀ ռեկտորատի նիստերի ընթացքում, տրվել են լուծումներ և հանձնարարականներ:

Տնտեսատեխնիկական անձնակազմի բազմաթիվ աշխատակիցներ ստացել են դրամական և այլ խրախուսական պարգևատրումներ:

Համալսարանի հանրակացարանը.

2016-2017 ուսումնական տարում համալսարանի հանրակացարանում սենյակներ են հատկացվել 22 դասախոսների: Հանրակացարանն ամբողջ ուսումնական տարվա ընթացքում ԳՊՀ ֆինանսական միջոցների հաշվին ապահովվել է անհրաժեշտ բոլոր պարագաներով, կենցաղային տեխնիկայով, սանիտարահիգիենիկ և այլ նյութերով: Մասնակի բարելավվել է 4 սենյակների և ճաշարանի վիճակը, տեղադրվել է անլար համացանցից օգտվելու սարք (WiFi), ինչպես նաև առանձնացված սենյակում դասախոսների աշխատանքային համակարգիչների թիվը հասցվել է երկուսի: Շարունակական աշխատանքներ են կատարվել մաքրության, պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակի պահպանման ուղղությամբ:

Ուսումնական մասնաշենքերի հիմնական և ընթացիկ վերանորոգում, կենսաապահովման համակարգեր, սանհիգիենիկ պայմանների ապահովում և բարեկարգում.

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանում իրագործվել են ընթացիկ վերանորոգման աշխատանքներ.

1. Բացվել է համալսարանի ՏՏ բաժնի նոր աշխատասենյակը:

2. Համալսարանի հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում հիմնադրվել է համակարգչային լսարան:

3. Վերանորոգվել և կահավորվել են 4 լսարաններ:

4. Վերացվել են բոլոր մասնաշենքերի տանիքների, շքամուտքերի եղանակային վատ պայմանների հետևանքով պատճառված վնասները:

5. Ընթացիկ նորոգման են ենթարկվել կաթսայատան գազայրիչները և պոմպի շարժիչը:

6. Վերանորոգվել է ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի ջրահեռացման դիտահորը և ջրամատակարարման խողովակաշարը:

«Մաքուր համալսարան» ծրագրի շրջանակներում ԳՊՀ մասնաշենքերի հարակից տարածքներում կազմակերպվել են շաբաթօրյակներ, ծառատունկ, տնտեսական աշխատակիցների կողմից խնամվել են տարածքի ծառերը և կանաչապատ տարածքը:

Նյութատեխնիկական մատակարարումը

Հաշվետու ժամանակաշրջանում համալսարանի նյութատեխնիկական մատակարարումն իրականացվել է համաձայն տարեկան հաստատված գնումների պլանի: Ըստ այդմ, ձեռք են բերվել գրենական պիտույք և գրասենյակային ապրանքներ, գրասենյակային կահույք, տնտեսական և լվացքի պարագաներ, ընթացիկ նորոգման շինարարական նյութեր, համակարգչային տեխնիկա և համալրող սարքեր, վառելիք, բուհի մեծ դահլիճում տեղադրվել են 200 նոր աթոռ:

Համալսարանի ՏՏ սարքերի համալրումն իրականացվել է ինչպես բուհի, այնպես էլ ԳՊՀ-ում իրականացվող Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող Տեմպուս և Էրասմուս + ծրագրերի ֆինանսական աջակցությամբ:

Կենսապահովման համակարգերը

Համալսարանի բոլոր մասնաշենքերն ապահովված են մշտական խմելու ջրով: Տարվա ընթացքում իրագործվող սպասարկման ու մասնակի նորոգման աշխատանքների շնորհիվ ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը գործում են անխափան ռեժիմով: Էլեկտրամատակարարման, հեռախոսային և համացանցային կապի ծառայությունները գործել են առանց էական ընդմիջումների: Կարճաժամկետ անջատումները, կապված ընթացիկ նորոգման ու սպասարկման աշխատանքների իրականացման հետ, չեն ազդել համալսարանի բնականոն գործունեության վրա: Զեռուցման ժամանակաշրջանում ջեռուցվել են ուսումնական բոլոր մասնաշենքերը:

Համալսարանի բոլոր մասնաշենքերում տեղադրվել են անլար համացանցի WiFi ապահովման սարքավորումներ: Գործել է նաև «Յուքոմ» ընկերությունների անվճար տրամադրած WiFi անկյունը: Մշակվել ու գործարկվել է Համալսարանի համացանցային կայքէջի նոր տարբերակը:

Անխափան գործել է Համալսարանի բուժկետը, առաջին բուժօգնություն է ցուցաբերվել բուժկետ դիմած դասախոսներին և ուսանողներին՝ տրամադրելով նաև անհրաժեշտ դեղորայք:

2017-2018 ուսումնական տարում Գավառի պեպական համալսարանի տնտեսապեխնիկական գործունեության հիմնական ուղղություններն են.

1. Համալսարանի գլխավոր մասնաշենքում հիմնանորոգել առնվազն 200 հոգանոց նոր դահլիճ, որը զինված կլինի տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներով:

2. Հիմնանորոգել և կահավորել համալսարանի առնվազն 4 լսարան:

3. Օգտագործել արտաքին հնարավորությունները՝ համալսարանի մարզական բացօթյա բազայի վերանորոգման համար:

4. Ապահովել լսարանային ֆոնդի պատշաճ կահավորում՝ այն հնարավորինս հագեցնելով ժամանակակից գույքով և նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման հնարավորություններ ընձեռող տեխնիկայով ու սարքավորումներով:

5. Զարգացնել համալսարանի տեխնոլոգիական կարողությունները, ապահովել հեռաուսուցման լսարանների համալսարանական ցանցի ստեղծման, շարունակական ընդլայնման և տեխնիկական կատարելագործման գործընթաց՝ հեռաուսուցման կազմակերպման համար:

Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ և դրամաշնորհային ծրագրեր իրականացնելու միջոցով հնարավորություն ստեղծել կապարելու լայնածավալ աշխատանքներ.

1. Հիմնանորոգել համալսարանի գրադարանները և ընթերցասրահները:

2. Պահպանության ծառայության աշխատանքների արդյունավետության բարձրացման և տեսահսկման ցանցի ընդլայնման նպատակով Համալսարանի բոլոր մասնաշենքերը և հարակից տարածքներն ապահովել տեսախցիկներով:

3. Կազմակերպել գործող կաթսայատան արդիականացման փուլային գործընթացը՝ նպատակ ունենալով խնայողական նոր ջրատաքացուցիչ կաթսաների տեղադրումը:

4. Բարենորոգել և արդիականացնել համալսարանի բոլոր ֆակուլտետների լսարանները:

5. Բարեկարգման և կահավորման աշխատանքներ իրականացնել համալսարանի հանրակացարանում:

6. Առողջ ապրելակերպի մշակույթի արմատավորման նպատակով համալսարանի կենտրոնական մասնաշենքում կառուցել ժամանակակից մարզագույքով ապահովված մարզասրահ:

Նախատեսված ռազմավարական խնդիրների լուծումը հնարավորություն կտա առավել արդյունավետ կազմակերպել կրթական գործընթացը, ապահովել գրավիչ կրթական միջավայր համալսարանի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում և մասնաշենքերում:

Ա. Հ. Ապրոյան՝

ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր

**2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՈՒՄ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՀԻՇԱՐԺԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՑ**

01.09.2016թ. ԲԱՐԻ ԳԱԼՈՒՍ, ՍԻՐԵԼԻ՝ ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

ԳՊՀ-ում տոնական տրամադրությամբ մեկնարկեց 2016-2017 ուսումնական տարին: 24-րդ անգամ հնչեց համալսարանական առաջին զանգը: Բուհը ջերմորեն ընդունեց դեպի գիտելիքը, լույսը և իմացությունը ձգտող նոր սերնդին: Բուհում ձևավորված ավանդույթի համաձայն՝ մինչ առաջին զանգը տեղի ունեցավ գեղեցիկ միջոցառում՝ նվիրված գիտելիքի, գրի և դպրության օրվան:

Առաջին զանգից հետո Տեր Գնել քահանա Մարտիրոսյանը կատարեց առաջին կուրսի ուսանողների օրհնության կարգ, իսկ Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության 2-րդ բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ Դավիթ Մանուկյանը վարեց հայրենասիրության և արիության դաս:

02.09.2016թ. ՀՈԳԵՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ԽՆԴՐՈ ԱՌԱՐԿԱ

Այսօր ԳՊՀ-ում տեղի ունեցավ սեմինար-քննարկում՝ նվիրված հոգեվերլուծության հիմնախնդիրներին:

Սեմինարը նախաձեռնել էր «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան գրասենյակը, որը ՅՈՒՆԻՍԵՖ-ի հետ համատեղ, Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացնում է «Սոցիալական արձագանքն աշխատանքային միգրացիային, սփյուռքի բաղադրիչ» ծրագիրը՝ միտված Հայաստանի Հանրապետության չորս մարզերի՝ Գեղարքունիքի, Լոռու, Տավուշի, Շիրակի համայնքների զարգացման գործին սփյուռքի ներկայացուցիչների ներգրավմանը:

11.09.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

Այսօր ԳՊՀ Հրայր Աճառյանի անվան լսարանում կայացավ բուհի ուսանողական խորհրդի նիստը, ինչպես նաև տեղի ունեցավ առաջին կուրսեցիների հանդիպումը ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահ Արեգ Սինանյանի և ուսխորհրդի անդամների հետ:

11.09.2016թ. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՄ «GOVERN» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Այսօր ԳՊՀ-ում Եվրոպական միության «GOVERN» ինքնավարության և հաշվետվողականության խթանում. բարձրագույն կրթության ոլորտում Բլոլոնիայի սկզբունքներին համահունչ արդյունավետ փոփոխությունների կառավարման արդի համակարգի զարգացում» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ աշխատանքային հանդիպում, որին մասնակցեցին Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Տեղեկատվական տեխնոլոգիաների և ինովացիոն ծրագրերի կենտրոնի տնօրեն Վաչագան Մելքոնյանը, ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուսուդյանը, տնտեսական գծով պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը, տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ

Վարազդատ Ավետիսյանը, ակադեմիական քաղաքականության վարչության և SS բաժնի ներկայացուցիչներ:

13.09.2016թ. «ՄԵԿ ԱԶԳ ՈՒ ԱՐՅՈՒՆ»

ԳՊՀ-ն Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում հայտարարել էր «Մեկ ազգ ու արյուն» խորագիրը կրող արյունատվության ակցիան, որին արձագանքեցին բուհի տարբեր ֆակուլտետների ուսանողներ:

ԳՊՀ ուսանողները ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր Արսեն Ապրոյանի գլխավորությամբ եղան ՀՀ Առողջապահության նախարարության պրոֆեսոր Ռ. Օ. Յոլյանի անվան Արյունաբանական կենտրոնում և կամավոր հիմունքներով արյուն հանձնեցին:

14.09.2016թ. «ՄԻԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՐ»

ՀԱՐԹԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

«Քյավառ» հեռուստաընկերությունում տեղի ունեցավ «Մեղմացնել աշխատանքային միգրացիայի արդյունքում առաջացած սոցիալական հետևանքները և մեծացնել միգրանտների ներգրավվածությունը տեղական համայնքների զարգացման գործում» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովը:

Աշխատանքային հանդիպմանը ներկա էին ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանը, ակադեմիական քաղաքականության վարչության բաժնի մասնագետներ Մարիամ Նախրատյանը, Սիրանուշ Խաչատրյանը, հանրության հետ կապերի և լրատվության բաժնի աշխատակիցներ Նոնա Մուրադյանը, Նունե Միրիբյանը:

15.09.2016թ. «STREET WORKOUT»-Ը

ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ ԳՐԱՎԱԿԱՆ

ԳՊՀ-ում, «Սոցիալական արձագանքն աշխատանքային միգրացիային, սփյուռքի բաղադրիչ» ծրագրի շրջանակում, տեղի ունեցավ հանդիպում «Street Workout .Armenia» ֆեդերացիայի համահիմնադիր ու խորհրդի նախագահ Ղազար Հակոբյանի հետ: Նա բովանդակալից շնորհանդեսի միջոցով ներկայացրեց առողջ ապրելակերպի հիմնական սկզբունքները՝ կարևորելով ֆիզիկական և հոգեկան առողջությունը: Հանդիպման ընթացքում ցուցադրվեց ֆիլմ «Street Workout»-ի՝ բակային սպորտի վերաբերյալ:

Հանդիպումն ավարտվեց բուհի՝ Վարչամ Ավետիսյանի անվան պատմագիտական թանգարան այցով:

17.09.2016թ. ԵՎՐՈՊԱՅԻՑ ՎԵՐԱԴԱՐՁԱԾ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ

ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

Կայացավ ԳՊՀ միջազգային ծրագրերի շրջանակում եվրոպական մի շարք հեղինակավոր բուհերում կրթություն ստացած և մանկավարժական ու հետազոտական գործունեություն ծավալած համալսարանականների հաշվետու հանդիպումը: ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դասախոս, աշխարհագրական գիտությունների թեկնածու Վահագն Մուրադյանը հաշվետու շնորհանդես ներկայացրեց Իտալիայի Պավիայի համալսարանում անցկացրած դասախոսությունների վերաբերյալ: ԳՊՀ բանասիրական, Հումանիտար մասնագիտությունների և Հեռակա ուսուցման ֆակուլտետների ուսանողներ

Մարիամ Սուքիասյանը, Տիգրան Չանդոյանը և Մերի Վարդանյանը բովանդակալից շնորհանդեսների միջոցով ներկայացրին Իտալիայի Սալեռնոյի, Բուլղարիայի Սոֆիայի Սուրբ Կլիմենտի և Ռուսեի Անգել Կանչևի անվան համալսարաններում 6-ից 10 ամիս ժամկետներով անցկացրած ուսումնառության վերաբերյալ հաշվետվություններ:

22.09.2016թ. ՕՐԻՆԱԿԵԼԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎՏԵՔՍ՝ Գավառ տեքստիլ» նախաձեռնող խումբը կազմավորվել է Ջինիշյան հիշատակի հիմնադրամի «Ակտիվ երիտասարդները փոփոխության համար 2015-2016թ.» ծրագրի շրջանակներում:

Խմբի ղեկավարն է ԳՊՀ շրջանավարտ Հովհաննես Գալստյանը, ծրագրի անդամներն են Տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի Սոֆի Կիրակոսյանը, բակալավրիատի 3-րդ կուրսի ուսանողուհի Սոնյա Դարոյանը, նույն կուրսի ուսանող Վազգեն Մանուկյանը, ԳՊՀ շրջանավարտ Բաբկեն Ղարաբաղյանը և Երևանի գեղեցիկ արվեստների ազգային ակադեմիայի Գրաֆիկական դիզայն բաժնի 4-րդ կուրսի ուսանող Լևոն Չքոյանը: Ծրագրի արդյունքում բարեգործական նպատակով կարվել է արտահագուստ համալսարանում աշխատող 15 տնտեսուհիների համար, ինչպես նաև կարվել են մանկատան 6-15 տարեկան տարիքային խմբին պատկանող երեխաների հագուստ և հագուստի փաթեթներ, որոնք նախատեսված են Գավառում սեպտեմբեր ամսվա ընթացքում լույս աշխարհ եկած նորածինների համար: Խմբի անդամներն իրենց կարած արտահագուստը հանձնեցին բուհի տնտեսուհիներին:

23.09.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

«ERASMUS+DOCMEN» ԾՐԱԳՐԻ ԾՐՋԱՆԱԿՈՒՄ

Ս. թ. սեպտեմբերի 22-23-ին Եվրոպական Միության «ERASMUS+DOCMEN» ծրագրի շրջանակում Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ հերթական աշխատաժողովը, որին մասնակցեցին ԳՊՀ տնտեսական գծով պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը, Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Մամիկոն Հակոբյանը:

24.09.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸՍ

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում կայացավ գիտական խորհրդի հերթական նիստը:

Նիստի օրակարգի համաձայն՝ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան Թաթուլ Ասոյանը և Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Համլետ Ղաջոյանը ներկայացրին ֆակուլտետների 2015-2016 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2016-2017 ուսումնական տարվա զարգացման հայեցակարգը:

29.09.2016թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԵՎ Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ

Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Գեղարքունիքի մարզային կենտրոնի նախաձեռնությամբ տեղի ունեցավ սեմինար-քննարկում «Ոչ ֆորմալ կրթություն և կամավորություն» թեմայով:

ՀԵՀ-ի Գեղարքունիքի մարզային ծրագրի համակարգողի օգնականներ ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի շրջանավարտ Հասմիկ Մովսիսյանը և Հակոբ Սարգսյանը բովանդակալից շնորհանդեսով ներկայացրին ֆորմալ, ինֆորմալ, ոչ ֆորմալ կրթության, կամավորության, առաջնորդության դերը քաղաքացիական հասարակության զարգացման գործում:

**05.10.2016թ. ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏԸ՝
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ**

«Ուսուցչի օրվա» կապակցությամբ Առնո Բաբաջանյանի անվան համերգասրահում տեղի է ունեցել տոնական միջոցառում, որի ընթացքում մրցանակներ են հանձնվել 2016 թվականի «Լավագույն ուսուցիչ», «Լավագույն տնօրեն» և «Լավագույն դաստիարակ» անվանակարգերում հաղթած մանկավարժներին:

ԳՊՀ շրջանավարտ, Դրախտիկի միջնակարգ դպրոցի պատմության ուսուցիչ Արարատ Մովսեսյանը Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից անցկացված մրցույթի արդյունքում ճանաչվել է ՀՀ լավագույն ուսուցիչ և արժանացել պարգևի:

**06.10.2016թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ ԴԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ՕՐՀՈՒՍԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Եվրոպական Միության «TEMPUS. ARMENQA - Ազգային և ոլորտային որակավորումների շրջանակների իրականացում Հայաստանում (ճանաչում ազգային և միջազգային աշխատանքային շուկայում)» ծրագրի շրջանակներում Դանիայի Թագավորության Օրհուսի համալսարանում տեղի ունեցավ հերթական աշխատաժողովը:

2016 թվականի հոկտեմբերի 14-ից ԳՊՀ –ում կմեկնարկի վերապատրաստումների և սեմինարների շարք՝ նվիրված որակավորումների ազգային և ոլորտային շրջանակներին, կրթական ու առարկայական վերջնարդյունքներին:

07.10.2016թ. ՆՈՐԱՏՈՒՍԻ ԹԻՎ 1 ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ բնագիտության լաբորատորիան հյուրընկալել էր Նորատուսի թիվ 1 դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներին՝ ֆիզիկայի ուսուցչուհի Մանուշ Համբարձումյանի ղեկավարությամբ: Այցելության նպատակը ԳՊՀ բնագիտության լաբորատորիայում ֆիզիկա և աշխարհագրություն առարկաների գործնական աշխատանքների կազմակերպումն էր:

**08.10.2016թ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԳՊՀ-ՈՒՄ
ԵՄ «ERASMUS+DOCMEN» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

ԳՊՀ-ում՝ Եվրոպական միության «ERASMUS+DOCMEN» ծրագրի շրջանակում, տեղի ունեցավ հերթական մշտադիտարկումը՝ ուղղված վերոնշյալ ծրագրի իրականացման ընթացքի ու ձեռքբերումների ուսումնասիրությանը, խնդիրների բացահայտմանը, հետագա անելիքների հստակեցմանը:

**08.10.2016թ. ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆՆԵՐԻ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՓՈՐՁԸ**

ԳՊՀ-ում ձևավորված ավանդույթի համաձայն՝ այսօր տեղի ունեցավ բուհի միջազգային ծրագրերի շրջանակում եվրոպական մի շարք հեղինակավոր բուհերում կրթություն ստացած և մանկավարժական ու հետազոտական գործունեություն ծավալած համալսարանականների հաշվետու հանդիպումը, որի ընթացքում ներկայացվեց համալսարանականների եվրոպական փորձը:

ԳՊՀ կադրերի և հատուկ բաժնի տեսուչ, Հեռակա ուսուցման ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող Սահակ Դավթյանը 3 ամիս ժամկետով ուսանել է Բուլղարայի Վառնայի մենեջմենթի համալսարանի ամառային ճամբարում, ինչի վերաբերյալ ներկայացրեց շնորհանդես-հաշվետվություն:

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 4-րդ կուրսի ուսանող Նարեկ Արևշատյանը, Բանասիրական ֆակուլտետի Ռուսաց լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Կատվայանը բովանդակալից շնորհանդեսների և տեսանյութերի միջոցով ներկայացրին Իտալիայի Սալերնոյի և Բուլղարիայի Ռուսեի Անգել Կանչևի անվան համալսարաններում 6-ից 10 ամիս ժամկետներով անցկացրած ուսումնառության վերաբերյալ հաշվետվություն:

12.10.2016թ. ԱԿՏԻՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ՝ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ

Գավառի պետական համալսարանի Բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ հանդիպում Ջինիշյան հիշատակի հիմնադրամի «Ակտիվ երիտասարդները փոփոխության համար» մարզային կենտրոնի համակարգող, ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի շրջանավարտ Վարդան Գարեյանի հետ:

**13.10.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ԵՄ «TEMPUS. LeAGUe»
ԾՐԱԳՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԸ**

Ս. թ. հոկտեմբերի 11-12-ին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS. LeAGUe –Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև ուսուցումը խթանող ցանցի ներդրում» ծրագրի հերթական աշխատաժողովը: Ծրագրին մասնակցում էին անդամ բուհերի ներկայացուցիչներ, այդ թվում՝ Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, Ակադեմիական քաղաքականության վարչության մեթոդիստ Լիլիթ Թոռչյանը, միջազգային ծրագրերի գծով որակի ապահովման մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը:

**14.10.2016թ. ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ
ԵՄ «TEMPUS.RETHINK» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ**

Ս. թ. սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի 10-ը Եվրոպական Միության «TEMPUS.RETHINK» ծրագրի շրջանակում ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոսներ՝ կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Անահիտ Մարգարյանը և Մարինե

Հովհաննիսյանը մասնակցեցին Իսպանիայի Կոռունայի համալսարանում կազմակերպված վերապատրաստման դասընթացին:

**14.10.2016թ. ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ
ՎԱՆԱՁՈՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Վանաձորի պետական համալսարանում տեղի ունեցավ Ուսանողական գիտական ընկերության տարեկան գիտական նստաշրջանը՝ նվիրված Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին, որին ակտիվորեն մասնակցում էին նաև Գավառի պետական համալսարանի ուսանողները:

**16.10.2016թ. ՆԵՐԱՈՒԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ՝
ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**

Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը հյուրընկալեց ԱՄՆ-ում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության ոլորտի մասնագետ Քեվին Միլերին, ով կարևորեց ներառական կրթության զարգացումը Հայաստանի Հանրապետությունում և ներկայացրեց ամերիկյան փորձը:

**19.10.2016թ. ՇՎԵԴԻԱՅԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը հյուրընկալեց Շվեդիայի Կառլ Լինեուսի անվան համալսարանի պրոֆեսոր Ուլֆ Ռուսենի գլխավորած պատվիրակությանը:

Հանդիպման ընթացքում տիկին Հակոբյանը ներկայացրեց ԳՊՀ իրականացրած միջազգային ծրագրերը, շարունակական կրթության խնդիրները, Հայաստանի կրթության և գիտության ոլորտի վերջին տարիների զարգացումները:

**23.10.2016թ. ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի դահլիճում տեղի ունեցավ սեղանի թենիսի համալսարանական առաջնություն, որը կազմակերպել էին ԳՊՀ կենսաբանության և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս Գագիկ Հասասյանը, սեղանի թենիսի թիմի մարզիչ, ԳՊՀ ուսանողական խորհրդի սպորտի հանձնաժողովի նախագահ, Բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող Գառնիկ Թոռչյանը: Մրցույթի ավարտին մասնակիցներին շնորհվեցին պատվոգրեր, իսկ հաղթողներին՝ մեդալներ:

**26.10.2016թ. ԳՊՀ-Ն ՄԱՍՆԱԿՑԵՑ VII ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ**

Ս. թ. հոկտեմբերի 26-ին Երևանի Մերգեյյանի անվան մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտում մեկնարկեց «EXPO-Ռուսաստան, Հայաստան և Իրան» 7-րդ միջազգային ցուցահանդեսը, որին մասնակցեց Գավառի պետական համալսարանը:

ԳՊՀ-ն ցուցահանդեսին ներկայացավ ռուսական և իրանական կողմի համար հետաքրքրություն ներկայացնող ծրագրերով, բուհի կողմից առաջարկվող կրթական ծառայությունների ցանկով, համալսարանի պրոֆեսորադասախոսական անձնակազմի անդամների մենագրություններով, գիտահետազոտական աշխատանքների արդյունքներով, ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման (E-Learning.gsu.am), էլեկտրոնային գրադարանի (E-Library.gsu.am), ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման (Examination.gsu.am) և այլ համակարգերով:

**31.10.2016թ. ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ՝ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ
6-ՐԴ ԴՊՐՈՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ**

Սույն թվականի հոկտեմբերի 29-31-ը Հայաստանի Հանրապետության Դիլիջան քաղաքում անցկացվեց Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի, ՄԱԿ-ի փախստականների գծով Գերագույն հանձնակատարի երևանյան գրասենյակի /ՄԱԿ ՓԳՀ/ և «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ համատեղ կազմակերպված «Փախստականների իրավունք» խորագիրը կրող 6-րդ դպրոցի դասընթացը:

ԳՊՀ պատվիրակների կազմում էին բուհի պրոռեկտոր, Իրավաբանական կլինիկայի տնօրեն, միջազգային ծրագրերի պատասխանատու Արսեն Ապրոյանը, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Իրավագիտության բաժնի 3-րդ կուրսի ուսանող Գրիշա Չիբուխյանը, նույն բաժնի 4-րդ կուրսի ուսանողներ Աննա Համբարձումյանը, Սեդա Ղարիբյանը, Տիգրան Չանդոյանը, Մարիամ Հակոբյանը, հեռակա ուսուցման ֆակուլտետի նույն բաժնի 5-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Սարգսյանը, ովքեր ակտիվորեն մասնակցեցին դպրոցի աշխատանքներին և խրախուսվեցին:

**03.11.2016թ. ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝ «ԵՎՐԱԿՈՒՄԲ»
ԾՐԱԳՐԻ ԳՈՐԾԸՆԿԵՐ**

ԳՊՀ-ում տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության Եվրոպական միության պատվիրակության և «Երևանի Եվրոպական ուսանողների ֆորում ասոցիացիա» հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքում Եվրասկումբի բացման արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական անձնակազմի ներկայացուցիչներ, շրջանավարտներ:

05.11.2016թ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ ԳՊՀ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտության գծով ասպիրանտուրայի առաջին համալիր մասնագիտական քննությունը:

Ընդունելության քննության արդյունքում ԳՊՀ ասպիրանտուրա ընդունվեց բուհի տնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատի, ապա մագիստրատուրայի գերազանցիկ շրջանավարտ Բաբկեն Սիմոնի Ղարաբաղյանը:

09.11.2016թ. ԿԱՅԱՑԱՆ «ԷՐԱՉՄՈՒՍ+» ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՕՐԵՐԸ

Հայաստանում «Էրազմուս+» ծրագրի ազգային գրասենյակը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կազմակերպեց տեղեկատվական օրեր «Էրազմուս+» ծրագրի շրջանակում, որին ներկա էին ՀՀ ԿԳ նախարար Լևոն Մկրտչյանը, ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանը, Հայաստանում «Էրասմուս+»-ի ազգային գրասենյակի տնօրեն Լանա Կառլովան, ԵՄ հայաստանյան պատվիրակության համագործակցության բաժնի փոխտնօրեն Գրեգորի Ցուրիսը, հայաստանյան բուհերի միջազգային համագործակցության ծրագրերում ներգրավված անձինք, տարբեր բուհերի ուսանողներ:

Տեղեկատվական միջոցառմանը ԳՊՀ որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը ներկայացրեց շնորհանդես:

09.11.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Ս. թ. նոյեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիայում կայացավ «Սահմանադրական բարեփոխումները Հայաստանի Հանրապետությունում. արդի մարտահրավերները» խորագրով միջբուհական գիտաժողով, որին մասնակցեցին ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Երևանի և Գավառի պետական համալսարանների, Հայաստանում ֆրանսիական և Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանների, ինչպես նաև ՀՀ ոստիկանության ակադեմիայի ներկայացուցիչներ:

ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը ներկայացրեց զեկուցում՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի սահմանադրական պատասխանատվությունը՝ ըստ ՀՀ սահմանադրության 2015 թվականի փոփոխությունների» թեմայով:

Գիտաժողովի ավարտին տիկին Ռուզաննա Հակոբյանն արժանացավ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պատվոգրի՝ լավագույն զեկուցման համար:

12.11.2016թ. ԱՆԱԶԱՌ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ՝ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ «Միջսահմանային դիտարկումներ. Հայաստանում և Ներքին Սաքսոնիայում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների անաչառ լուսաբանում» խորագրով սեմինար-դասընթաց:

Սեմինարին մասնակցում էին ԳՊՀ «Տպագիր և էլեկտրոնային ժուռնալիստիկայի հիմունքներ» դասընթացի ուսանողներն ու շրջանավարտները, ինչպես նաև բուհի տարբեր ֆակուլտետների ուսանողներ:

16.11.2016թ. «ՆԱՏՕ-ՀԱՅԱՍՏԱՆ»

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ում «Տեղեկատվական արշավ. ՆԱՏՕ-Հայաստան-2016» ծրագրի շրջանակում տեղի ունեցավ «ՆԱՏՕ-Հայաստան» վեցերորդ երիտասարդական ուսուցողական հանդիպումը: Տեղեկատվական արշավի նպատակն է Հայաստանի հասարակությանը ներկայացնել Հայաստան-ՆԱՏՕ համագործակցության հիմնական ուղղությունները, ՆԱՏՕ - ի խնդիրները, գործունեության սկզբունքներն ու կառուցակարգերը:

Հանդիպմանը մասնակցեց Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան պարոն Մաթիաս Քիսլերը: ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, Հայկական ատլանտյան ասոցիացիայի նախագահ պարոն Թևան Պողոսյանը հանգամանալիորեն ներկայացրեց ՆԱՏՕ-Հայաստան հարաբերությունները, միջազգային անվտանգության և խաղաղության ապահովման գործընթացում ՆԱՏՕ-ի անդամ-պետությունների և, մասնավորապես, Գերմանիայի դերը:

17.11.2016թ. ՆՈՐԱՏՈՒՄԻ ԹԻՎ 1 ԵՎ ԳԱՎԱՌԻ ԹԻՎ 5

ԴՊՐՈՑՆԵՐԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ՝ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ բնագիտության լաբորատորիան հյուրընկալել էր Նորատուսի թիվ 1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտներին՝ փոխտնօրեն, քիմիայի ուսուցչուհի Ֆրիդա Ասոյանի, դպրոցի լաբորատորիայի վարիչ Ջեմմա Խաչատրյանի ղեկավարությամբ, և Գավառի թիվ 5 հիմնական դպրոցի 8-րդ և 9-րդ դասարանների աշակերտներին՝ կենսաբանության ուսուցչուհի Իրանուհի Խաչիկյանի գլխավորությամբ:

11-րդ դասարանի աշակերտների այցելության նպատակը ԳՊՀ բնագիտության լաբորատորիայում օրգանական քիմիա առարկայի շրջանակում գործնական աշխատանքների կատարումն էր:

18.11.2016թ. ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴԸ ՆՇՈՒՄ Է

ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ «Անկախությունը՝ սավառնող թռչուն» խորագիրը կրող ցերեկույթ, որն իրականացվեց Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակում:

Միջոցառումը կազմակերպել էին Բանասիրական ֆակուլտետի Հայոց լեզու և գրականություն բաժնի 1-ին կուրսի ուսանողուհիները: Միջոցառմանը ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական և ուսանողական անձնակազմի ներկայացուցիչներ:

20.11.2016թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ «Կրթական Ավտոբուս» խորագիրը կրող սեմինար-դասընթաց, որն իրականացնում է Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիան՝ Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ:

Ծրագրի նպատակն է ներկայացնել 2014-2015 թվականներին իրականացված «Բոլոնյան համակարգն ուսանողների աչքերով» հետազոտության արդյունքները և ուսանողներին տեղեկացնել ՀՀ բարձրագույն կրթական համակարգի ընձեռած հնարավորությունների մասին:

23.11.2016թ. ԳՊՀ-Ն ՄԻԱՑԱՎ «ԴՈՒ ԻՆՉ ԵՍ ԱՐԵԼ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՄԱՐ»

ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆԸ

Հայաստանի Հանրապետության Սփյուռքի նախարարության կողմից հայտարարված «Դու ի՞նչ ես արել Ղարաբաղի համար» համահայկական շարժմանը միացավ նաև Գավառի

պետական համալսարանը: Համալսարանի Ոսանողական խորհրդի և Ոսանողական գիտական ընկերության առաջարկությամբ բուհի գրադարանային ֆոնդից հարյուրավոր գեղարվեստական և հայագիտական գրքեր նվիրաբերվեցին Արցախում տեղակայված գործամասերին:

23.11.2016թ. ԳԻՏԱԺՈՂՈՎ ԵՄ «TEMPUS. PICASA»

ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ս. թ. նոյեմբերի 21-22-ը Եվրոպական միության «TEMPUS. PICASA» ծրագրի շրջանակում Վրաստանի Հանրապետության Թբիլիսի քաղաքում կայացավ ծրագրային երկրորդ գիտաժողովը: Գիտաժողովն անցկացվեց «Ուսուցման և ուսումնառության միջազգայնացում. Քաղաքականություններ և փորձառություն» խորագրի ներքո:

ԳՊՀ-ից գիտաժողովին մասնակցեցին ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, Հանրության հետ կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը, Որակի ապահովման բաժնի միջազգային ծրագրերի գծով մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը:

02.12.2016թ. ԳՊՀ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ՝ ԵՄ «ԷՐԱՍՄՈՒՍ+»

ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Ս. թ. նոյեմբերի 28-30-ը Ուկրաինայի Հանրապետության Կիև քաղաքում Եվրոպական Միության Կրթության և Մշակույթի կենտրոնական գրասենյակի կողմից կայացավ «Համագործակցության նոր հեռանկարներ» խորագրով սեմինար-աշխատաժողով, որի նպատակն էր՝ ներկայացնել Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերը, կազմակերպել քննարկումներ, կլոր-սեղաններ, նոր համագործակցության համար, ներկայացնել ԵՄ ծրագրերի հայտերի, դրանց իրականացման առանձնահատկությունները:

ԳՊՀ պրոռեկտոր, միջազգային ծրագրերի գծով պատասխանատու Արսեն Ապրոյանը աշխատաժողովի ընթացքում ներկայացրեց բուհի միջազգային համագործակցության փորձը, մասնագիտությունները և նոր համագործակցության ծրագրերի հեռանկարները:

14.12.2016թ. ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԲԱՐԵՎԱՐՔՈՒԹՅԱՆ

ԱՄՐԱՊՆԴՄԱՆԸ ԵՎ ԿՈՌՈՒՊՏԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ

Ս. թ. դեկտեմբերի 13-ին և 14-ին Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակը ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համատեղ «Հայաստանի բարձրագույն կրթության համակարգում բարեվարքության ամրապնդում և կոռուպցիայի դեմ պայքար» ծրագրի շրջանակներում կազմակերպել էր «Ծրագրի արդյունքների ներկայացում» թեմայով համաժողով:

ԳՊՀ-ից համաժողովին մասնակցեցին Ակադեմիական քաղաքականության վարչության պետ Ալինա Ղարիբյանը և ԳՊՀ ուսանողական գիտական ընկերության նախագահ, տնտեսագիտական ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 2-րդ կուրսի ուսանող Կորյուն Սարգսյանը:

22.12.2016թ. ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԸ՝ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ն հյուրընկալել էր Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանին և Պաշտպանի աշխատակազմի ներկայացուցիչներին: Պաշտպանի հետ հանդիպմանը ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական, ուսանողական անձնակազմի, տարբեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ԳՊՀ շրջանավարտներ:

24.12.2016թ. ԿԱՅԱՑԱՎ ԳՊՀ 2016 Թ.-Ի ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

ԳՊՀ-ում կայացավ 19-րդ ամենամյա գիտաժողովը՝ նվիրված ԳՊՀ պատվավոր բարերար Ժիրայր Նիշանյանի ծննդյան 80-ամյա հորեյանին:

Գիտաժողովին ներկայացված զեկուցումները կտպագրվեն «ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու»-ի հերթական՝ 19-րդ համարում:

19.01.2017թ. ՀՀ ԳԱԱ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ԷՂՈՒԱՐԴ ՄՈՒՇԵՂԻ ՂԱԶԱՐՅԱՆԸ՝ ԳՊՀ ՊԱՏՎԱՎՈՐ ԴՈԿՏՈՐ

ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի մաթեմատիկայի և բարձր տեխնոլոգիաների ինստիտուտի տնօրեն, Գավառի պետական համալսարանի խորհրդի անդամ Էդուարդ Մուշեղի Ղազարյանին շնորհվել է Գավառի պետական համալսարանի պատվավոր դոկտորի կոչում:

17.02.2017թ. ԳՊՀ-ՈՒՄ ՄԵԿՆԱՐԿԵՑ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ ԵՄ «TEMPUS. ARMENQA» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

ԳՊՀ-ում մեկնարկեց «Որակի ապահովման ազգային շրջանակը և դրա կիրառումը բուհերում» թեմայով վերապատրաստման դասընթաց:

Դասընթացները վարում է Գավառի պետական համալսարանի պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Ապրոյանը: Երկու ամիս տևողությամբ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար գրանցվել են բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ:

24.02.2017թ. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՌԱԴԻՈԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ «Ռադիոկենսաբանության արդի հիմնախնդիրները» թեմայով:

Գիտաժողովը կազմակերպել էին «Կենսաբանություն» բաժնի 4-րդ կուրսի ուսանողները Կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Լյուդմիլա Առաքելյանի աջակցությամբ: Գիտաժողովին ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ և ուսանողներ:

03.03.2017թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇԱՐՔՈՒՄ

Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում կայացավ «Լավագույն ուսանող» մրցույթի հաղթողների պարգևատրման արարողությունը:

«Լավագույն ուսանող-2016» հանրապետական մրցույթում հաղթողներից 2-ը Գավառի պետական համալսարանի ուսանողներ են .

Հումանիտար գիտությունների ոլորտում՝ ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Ավետիսյանը և Բնագիտական ոլորտում՝ ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողուհի Մերի Ասատրյանը:

11.03.2017թ. ԱՇԽԱՏԱԺՈՂՎ ՈՒԿՐԱՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԻԵՎ ՔԱՂԱՔՈՒՄ

Ս. թ. մարտի 8-11-ը Եվրոպական Միության «TEMPUS. PICASA - Promoting Internationalization Of Heis In Eastern Neighbourhood Countries Through Cultural And Structural Adaptations - Բուհերի միջազգայնացման խթանում Արևելյան հարևան երկրներում մշակութային և կառուցվածքային փոփոխությունների միջոցով» ծրագրի աշխատանքային չորրորդ ենթափաթեթի շրջանակում Ուկրաինայի Հանրապետության Կիև քաղաքի Տարաս Շևչենկոյի անվան ազգային համալսարանում տեղի ունեցավ ծրագրի հերթական աշխատաժողովը:

ԳՊՀ-ից աշխատաժողովին մասնակցում էին պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու Արսեն Ապրոյանը, տնտեսագիտական ֆակուլտետի դասախոս Գուրգեն Մուրադյանը, ովքեր մասնակիցներին ներկայացրին բուհի միջազգայնացման փորձը, արձանագրած հաջողությունները, ուսանողների և դասախոսների ակադեմիական շարժունության ծրագրերը և կրթական ծրագրերի բարեփոխման ընթացքը:

11.03.2017թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԳԱԳԻԿ ՄԱԿԱՐՅԱՆԻ ՀԵՏ

ԳՊՀ-ն հյուընկալել էր Հայաստանի գործատուների հանրապետական միության նախագահ Գագիկ Մակարյանին: Հանդիպմանը ներկա էին բուհի ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանը, պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչներ, ուսանողներ:

22.03.2017թ. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ՝ ՏՆՏԵՍԱԳԵՏՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՄԲ

ԳՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերությունը ուսանողների համար կազմակերպել էր սեմինար-քննարկում՝ «Ընտանեկան բռնությունը՝ որպես հանրային-սոցիալական հիմնախնդիր Հայաստանի Հանրապետությունում» թեմայով:

Սեմինար-քննարկմանը ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, տարբեր ֆակուլտետներում սովորող ուսանողներ:

24.03.2017թ. ՄԻԱՎՁԻԱՎՈՒՄ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ում տեղի ունեցավ սեմինար-քննարկում ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշի (ՄԻԱՎՁԻԱՎ) վերաբերյալ: ԳՊՀ ուսանողական խորհուրդը, Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Գեղարքունիքի մարզային կենտրոնի հետ համատեղ՝ «Երիտասարդների և միգրանտների շրջանում ՄԻԱՎ-ի ինքնաթեստավորման վերաբերյալ իրազեկում» ծրագրի շրջանակում բուհի ուսանողների համար կազմակերպել էր եռօրյա դասընթաց:

25.03.2017թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԳՊՀ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ

Ս.թ. մարտի 25-ին ԳՊՀ ծրագրային հերթական մշտադիտարկման այցի շրջանակում հյուրընկալեց Հայաստանում «ERASMUS+ (TEMPUS)» գրասենյակի համակարգող Լանա Կարլովային, Անի Թորոսյանին և Էդիթ Սողոմոնյանին: Մշտադիտարկման թիրախում ԳՊՀ «Erasmus+ KA1» ակադեմիական շարժունության վեց ծրագրերն էին, ինչպես նաև ԵՄ TEMPUS RETHINK ծրագիրը:

Մշտադիտարկման հանդիպմանը ներկա էին ԳՊՀ պրոռեկտոր, միջազգային ծրագրերի գծով պատասխանատու Արսեն Ապրոյանը, միջազգային ծրագրերի գծով որակի ապահովման մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը, ակադեմիական շարժունության ծրագրերին իրենց մասնակցությունն ունեցած ԳՊՀ դասախոսներ և ուսանողներ:

01.04.2017թ. ԳԻՏԱԿԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

ԳՊՀ Որակի ապահովման բաժնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր սեմինար-դասընթաց՝ «Գիտահետազոտական աշխատանք կատարելու հիմնական սկզբունքները» թեմայով:

Սեմինար-դասընթացը վարեց Տնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Գայանե Խաչատրյանը:

01.04.2017թ. ԶԱՐԳԱՅՆԵՆՔ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՄՈՐԻ ՄԻՋՈՑՈՎ

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Համակարգչային ճարտարագիտություն բաժնի ուսանողները բուհի ուսումնագիտական գծով պրոռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու Նելլի Կուտուզյանի աջակցությամբ կազմակերպել էին միջոցառում՝ նվիրված ծիծաղի և հումորի համաշխարհային օրվան:

06.04.2017թ. ԱՍՊԻՐԱՆՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԳՊՀ-ՈՒՄ

Եվրոպական Միության «TEMPUS.VERITAS-Ձայցբուրգյան սկզբունքների հիման վրա կրթության երրորդ մակարդակի կառուցվածքային զարգացում» ծրագրի շրջանակներում

հետազոտողի կրթական ծրագրի արտաքին գնահատման նպատակով հայաստանյան 11 բարձրագույն ուսումնական հաստատություններում անցկացվում է արտաքին գնահատում:

«VERITAS» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանում մշակվել է «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» ասպիրանտական կրթական ծրագիրը, կատարվել է համակողմանի ինքնավերլուծություն և SWOT վերլուծություն:

07.04.2017թ. ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ Բանասիրական ֆակուլտետի ուսանողական խորհուրդը ֆակուլտետի նախագահ, Հայոց լեզու և գրականություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Լիլիթ Ներսիսյանի, նույն բաժնի 1-ին կուրսի ուսանողուհի Ռիտա փոխնախագահ Լիլիթ Դադոյանի նախաձեռնությամբ կազմակերպել էր գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված Մայրության և գեղեցկության տոնին:

Միջոցառմանը ներկա էին բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, տարբեր ֆակուլտետների ուսանողներ:

08.04.2017թ. ԴՊՐՈՑԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ում մեկնարկեց ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցների 12-րդ դասարանի աշակերտների համար նախատեսված առարկայական օլիմպիադաների շարքը:

Կայացավ հայոց լեզու և գրականություն առարկայի օլիմպիադան:

Ձեռնարկի հիմնական նպատակն է դպրոցականների գիտելիքների ստուգումը, աշակերտների խրախուսումը, նրանց մասնագիտական կողմնորոշման հարցում աջակցությունը:

09.04.2017թ. ՀԱՅԵՐԸ՝ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի Կենսաբանության, Էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի նախաձեռնությամբ Ֆրանկոֆոնիային նվիրված օրերի շրջանակում կազմակերպել էր ցերեկույթ՝ «Հայերը՝ Ֆրանսիայում» խորագրով:

Անդրադարձ կատարվեց Ֆրանսիայում հայկական համայնքի ձևավորման պատմությանը, մշակութային կազմակերպություններին, ինչպես նաև հայկական պատմաճարտարապետական հուշարձաններին:

12.04.2017թ. ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ԿՈՌՈՒՆԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Ս. թ. ապրիլի 1-7-ը ԵՄ «Էրազմուս+» ծրագրի շրջանակում Գավառի պետական և Իսպանիայի Կոռունայի համալսարանների միջև կնքված միջհամալսարանական պայմանագրի համաձայն՝ ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժնի մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը մեկշաբաթյա դասախոսական աշխատանք կատարեց Կոռունայի համալսարանում՝ «Հանրալեզվաբանություն» թեմայով:

Ձեռք բերվեց հետագա գործընկերության մասին պայմանավորվածություն:

12.04.2017թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲՈՒՇԵՐՈՒՄ

Ս. թ. ապրիլի 14-ին ԳՊՀ-ում տեղի ունեցավ Եվրոպական միության «Erasmus+» ակադեմիական շարժունության ծրագրերի շրջանակում արտերկրի բուհերում կրթություն

ստացած և հետազոտական աշխատանք կատարած ԳՊՀ ուսանողների շնորհանդես-հաշվետվությունների ներկայացումը:

Արտերկրում ուսանելու իրենց փորձը ներկայացրին Իտալիայի Սապիենզայի համալսարանում ուսումնառած Իրավագիտություն բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի Վարսիկ Հակոբյանը, նույն բաժնի 3-րդ կուրսի ուսանող Նարեկ Հովեյանը, Տնտեսագիտություն բաժնի մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանող Լևոն Արզումանյանը, Իտալիայի Պավիայի համալսարանում ուսումնառած Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի ուսանող Նարեկ Թադևոսյանը, Իսպանիայի Ալմերիայի համալսարանում ուսումնառած Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 2-րդ կուրսի ուսանող Գագիկ Ղարաբաղյանը, Սերվիս բաժնի 4-րդ կուրսի ուսանող Շիրազ Սահակյանը:

15.04.2017թ. **«ԿՐԹՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ Է»**

ԽՈՐԱԳՐՈՎ ՍԵՄԻՆԱՐ-ԴԱՍԸՆԹԱՑ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում «Էրազմուս+» բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների խմբի ներկայացուցիչներն անցկացրին «Կրթության ժամանակն է» խորագիրը կրող սեմինար-դասընթաց: Դասընթացին մասնակցում էին տարբեր ֆակուլտետների ուսանողներ, բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ:

19.04.2017թ. **ԱՄՓՈՓՎԵՑ ԵՎՍ ՄԵԿ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ**

«Տեմպուս» ծրագրի «Մշակութային և կառուցվածքային վերափոխումների միջոցով նպաստել Արևելյան գործընկերության երկրների բուհերի միջազգայնացմանը» (PICASA) նախագծի համակարգող Երևանի պետական համալսարանում այսօր կազմակերպվեց միջազգային գիտաժողով՝ «Համալսարանի միջազգայնացում՝ ռազմավարություն և որակի ապահովում» թեմայով:

ԳՊՀ-ից գիտաժողովին մասնակցում էին ԳՊՀ պրոռեկտոր Արսեն Ապրոյանը, ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը, Արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը, Ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռյանը:

20.04.2017թ. **ՄԻՋՈՑԱՌՈՒՄ**

ՆՎԻՐՎԱԾ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻՆ

ԳՊՀ Բնագիտական ֆակուլտետի գրադարանում Կենսաբանության, Էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի լաբորանտ Մարինե Հովհաննիսյանի նախաձեռնությամբ, Դեղագործական քիմիա բաժնի 3-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված «Սուրբ Վարդանանց» տոնին:

Միջոցառման նպատակն էր ներկայացնել քրիստոնեական հավատի պահպանման համար մղած պատերազմի նախապատմությունը:

21.04.2017թ. **«ԹՎԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՐԱՇԱԼԻՔՆԵՐԸ»**

ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ «Թվերի տեսության հրաշալիքները» խորագրով ուսանողական գիտաժողով: Գիտաժողովին զեկույցներով

հանդես եկան «Համակարգչային ճարտարագիտություն» բաժնի 1-ին կուրսի ուսանողները: Գիտաժողովին ներկա էին նաև Գավառի թիվ հինգ հիմնական դպրոցի իններորդ դասարանի աշակերտները՝ կենսաբանության ուսուցչուհի Իրանուհի Խաչիկյանի ղեկավարությամբ:

**21.04.2017թ. ԳՊՀ ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ**

Ս. թ. ապրիլի 21-ին Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանում կայացավ ամենամյա հանրապետական ուսանողական գիտաժողով, որը կազմակերպվել էր ուսանողական գիտական ընկերության կողմից: Գիտաժողովին մասնակցեցին նաև ԳՊՀ բանասիրական, բնագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների ուսանողներ:

**22.04.2017թ. ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝
ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ**

Ս. թ. ապրիլի 19-21-ը Բելգիայի թագավորության Գենտի համալսարանում կայացավ Եվրոպական միության «TEMPUS. ARMENQA - Ազգային և ոլորտային որակավորումների շրջանակների իրականացում Հայաստանում (ճանաչում ազգային և միջազգային աշխատանքային շուկայում)» ծրագրի աշխատաժողովը՝ «Ուսումնառության վերջնարդյունքներ և կրթական ծրագրեր. գնահատում» թեմայով: ԳՊՀ-ից աշխատաժողովին մասնակցում էին բուհի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և Արտաքին կապերի և լրատվության բաժնի ավագ մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը:

28.04.2017թ. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ

ԳՊՀ բնագիտական ֆակուլտետում տեղի ունեցավ ուսանողական գիտաժողով՝ «Բնական գիտությունները՝ 21-րդ դարում» թեմայով: Գիտաժողովին ներկա էին տարբեր ֆակուլտետների ուսանողներ, բուհի պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև Գավառի թիվ հինգ հիմնական դպրոցի իններորդ դասարանի աշակերտները՝ կենսաբանության ուսուցչուհի Իրանուհի Խաչիկյանի ղեկավարությամբ:

Ձեկույցներով հանդես եկան ուսանողներ «Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա», «Համակարգչային ճարտարագիտություն», «Դեղագործական քիմա», «Սերվիս», «Քարտեզագրություն և կադաստրային գործ», «Կենսաբանություն» բաժիններից:

29.04.2017թ. ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ ԳԱՎԱՌԻ ՄԱՆԿԱՏԱՆԸ

Գավառի պետական համալսարան-Գավառի մանկատուն համագործակցության շրջանակում այսօր բուհի ուսանողները գրադարանի վարիչ Նաիրա Պետրոսյանի հետ միասին այցելեցին Գավառի մանկատուն:

Ըստ պայմանավորվածության՝ երեխաները քննարկման նյութին վերաբերող նկարագրող պատահաներով նախապատրաստվել էին Միքայել Աբրահամյանի «Ժողովրդի վրիժառուն» գրքի քննարկմանը:

30.04.2017թ. Ո՛Չ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆԸ

ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի Հասարակական գիտությունների ամբիոնի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հուշ-ցերեկույթ՝ նվիրված Մեծ Եղեռնի 102-րդ տարելիցին: Մասնակիցները «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի առաջին կուրսի ուսանողներն էին:

04.05.2017թ. «ԻՆՉ, ՈՐՏԵ՛Ղ, Ե՛ՐՔ» ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ՄՐՑՈՒՅԹ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ ուսանողական խորհրդի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Ղարաբաղյանի և Պատմություն բաժնի չորրորդ կուրսի ուսանողուհի Աննա Սաղաթեյանի նախաձեռնությամբ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում կազմակերպվել էր «Ի՛նչ, որտե՛ղ, ե՛րբ» խորագիրը կրող միջֆակուլտետային ինտելեկտուալ մրցույթ: Մրցույթին մասնակցում էին ԳՊՀ Բանասիրական, Տնտեսագիտական, Բնագիտական, Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների տարբեր բաժինների առաջինից երրորդ կուրսերի ուսանողներից կազմված չորս թիմեր:

04.05.2017թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՖՐԱՆԿՈՖՈՆԻԱՅԻՆ

Երկար տարիներ մարտ-ապրիլ ամիսներին Հայաստանի մայրաքաղաքում և բոլոր մարզերում կազմակերպվում են ֆրանկոֆոնիային նվիրված միջոցառումներ, որոնցից անմասն չի մնում նաև ԳՊՀ-ն:

ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի նախաձեռնությամբ «Ֆրանսիական օրերը Հայաստանում» ծրագրի շրջանակում կազմակերպվել էր միջոցառում՝ նվիրված հայ-ֆրանսիական տնտեսական հարաբերություններին: Ուսանողները բովանդակային շնորհանդեսների միջոցով անդրադարձան հայ-ֆրանսիական տնտեսական հարաբերություններին, զբոսաշրջությանը և այն հայտնի ու մեծանուն անձանց, ովքեր ամրապնդել են երկու երկրների եղբայրական կապերը:

05.05.2017թ. ԾՆՈՒՆԴԴ ՇՆՈՐՀԱՎՈՐ, Ի՛Մ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԲՈՒՀ-ի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպվել էր ցերեկույթ՝ «Մեծ անկյուն փոքր քաղաքում» խորագրով՝ նվիրված Գավառի պետական համալսարանի հիմնադրման 24-ամյակին: Միջոցառմանը ներկա էին ԳՊՀ պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ, շրջանավարտներ և դպրոցականներ:

08.05.2017թ. ԳՊՀ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԱՄԱԽՈՍՆԵՐԸ՝ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱՆԳԵԼ ԿԱՆՉԵՎԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Ս. թ ապրիլի 25-ից մայիսի 1-ը Եվրոպական Միության «Erasmus+» ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներ Աննա Բալագոզյանը և Սաթենիկ Տիգրանյանը մեկշաբաթյա դասախոսական աշխատանք կատարեցին Բուլղարիայի Հանրապետության Ռուսե քաղաքի Անգել Կանչևի անվան համալսարանում:

10.05.2017թ. ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱԿԱՆ ԵՌԱՏՈՆԸ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ Ուսանողական խորհուրդը և բանասիրական ֆակուլտետը կազմակերպել էին գեղեցիկ ցերեկույթ՝ նվիրված 1945 թվականի մայիսի 9-ին Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակին, 1992 թվականին Շուշիի ազատագրման 25-րդ տարելիցին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պաշտպանության բանակի կազմավորմանը:

11.05.2017թ. ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՌՈՒՍԵԻ ԱՆԳԵԼ ԿԱՆԶԵՎԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ՝ ԳՊՀ-ՈՒՄ

Եվրոպական միության «Erasmus+» միջազգային ծրագրի շրջանակում ԳՊՀ-ն հյուրընկալեց Բուլղարիայի Հանրապետության Անգել Կանչևի անվան Ռուսեի համալսարանի երկարամյա ռեկտոր, Բուլղարիայի Գիտությունների ազգային ակադեմիայի թղթակից անդամ, Ռուսե քաղաքի խորհրդի նախագահ պարոն Հրիստո Բելոնին և համալսարանի նախկին պրոռեկտոր, տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի տնօրեն, պրոֆեսոր Անգել Սմրիկարովին:

ԳՊՀ գիտական խորհրդի որոշմամբ պարոն Հրիստո Բելոնին շնորհվեց ԳՊՀ պատվավոր դոկտորի կոչում:

12.05.2017թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՏԱՐԱՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ՝ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ն հյուրընկալել էր Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի քննող-մասնագետ Հայկ Հովհաննիսյանին, Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի մասնագետ-իրավաբան Հրայր Բադալյանին, Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի իրավաբան Գայանե Գալստյանին:

14.05.2017թ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԱՌԱՐԿԱ

ԳՊՀ-ում կայացավ Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտի փորձագետների սեմինար հանդիպումը բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի և ուսանողների հետ:

Հայաստանի բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների խումբը, ներգրավված լինելով իրազեկվածության և իմացության բարձրացման բազմաթիվ միջոցառումներում, նախաձեռնել է սեմինար հանդիպումների շարք՝ նվիրված ՀՀ մարզերում գործող պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ռազմավարական ծրագրերի պլանավորման և կառավարման հիմնախնդիրներին:

17.05.2017թ. ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑՈՒՅԹ՝ ԳՊՀ-ՈՒՄ

ԳՊՀ-ում կայացավ բուհի ուսանողական խորհրդի կողմից կազմակերպված շախմատի ներհամալսարանական մրցաշար՝ նվիրված Մայիսյան հերոսամարտերին: Մրցույթին մասնակցում էին բուհի տարբեր ֆակուլտետների ուսանողներ:

**18.05.2017թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ**

Ս. թ. մայիսին «Եվրոպայի օրերը Հայաստանում» ծրագրի շրջանակներում Երևանի «ԼՕՖԹ» ակումբում «Հայաստանի առաջադեմ Երիտասարդություն» ՀԿ-ի նախաձեռնությամբ կազմակերպվել էր հանդիպում հայ երիտասարդների և Եվրամիության պատվիրակության ղեկավար, դեսպան Պյոտր Սվիտալսկու, Ինչպես նաև Գերմանիայի, Լիտվայի, Հունաստանի, Բուլղարիայի, Ֆրանսիայի, Ռումինիայի, Չեխիայի դեսպանների և դեսպանատան ներկայացուցիչների միջև: Հանդիպմանը մասնակցել է նաև ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի Իրավագիտություն բաժնի V կուրսի ուսանող Արտեմ Հակոբյանը:

18.05.2017թ. ԱՄՓՈՓՎԵՑ ԵՄ «TEMPUS. ARMENQA» ԾՐԱԳԻՐԸ

Այսօր Երևանի պետական համալսարանում տեղի ունեցավ «ԵՄ TEMPUS. ARMENQA-Ազգային և ոլորտային որակավորումների շրջանակների իրականացում Հայաստանում (ճանաչում ազգային և միջազգային աշխատանքային շուկայում)» ծրագրի եզրափակիչ համաժողովը: Ծրագրին անդամակցում է ԳՊՀ-ն:

**19.05.2017թ. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ՝
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Ս. թ. մայիսի 16-17-ին «ԵՄ Էրազմուս+» բարձրագույն կրթության բարեփոխումների փորձագետների տեխնիկական աջակցության առաքելության շրջանակներում Երևանում տեղի ունեցավ «Ինստիտուցիոնալ հետազոտություն / պլանավորում և տեղեկատվական համակարգի կառավարում բարձրագույն կրթության ոլորտում՝ ի նպաստ համալսարանի արդյունավետ կառավարման և որակյալ կրթության» թեմայով երկօրյա աշխատաժողով:

Գավառի պետական համալսարանից աշխատաժողովին մասնակցում էր Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը:

**19.05.2017թ. ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿ**

ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի Կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս Նարինե Թադևոսյանն անցկացրեց սեմինար-դասընթաց՝ նվիրված ուսումնական ծրագրերի բարելավմանը:

Դասընթացի նպատակն էր նպաստել ԳՊՀ ուսումնական ծրագրերի բարելավմանը՝ ներկայացնելով եվրոպական առաջավոր փորձը:

**23.05.2017թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ս. թ. մայիսի 22-ին Եվրոպական Միության «TEMPUS. New LeAGUe – Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում շարունակական կրթությունը խթանող ցանցի ներդրում» ծրագրի շրջանակում կայացավ հանդիպում ՀՀ կրթության և գիտության նախարարության Լրացուցիչ և շարունակական կրթության բաժնի պետ Աիդա Տիգրանյանի հետ:

Հանդիպմանը մասնակցեցին վերոնշյալ ծրագրի հայաստանյան գործընկերների ներկայացուցիչները ԳՊՀ-ից, Հայաստանի ազգային ագրարային համալսարանից, Ռուս-

Հայկական (Սլավոնական) համալսարանից, Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարանից և Յկյանս ուսումնառության հայաստանյան լիգայից:

**26.05.2017թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ՝ «ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ»
ԼՈՒԾՈՒՄՆԵՐ**

Մայիսի 20-ից 24-ը կայացավ «Ֆինանսական նորարարություն ազգային զարգացման համար» խորագիրը կրող համահայկական ուսանողական համաժողովը, որն արդեն երկրորդ անգամ իրականացվում է Հայաստանում Եվրոպական պառլամենտի և ՀՀ կենտրոնական բանկի համագործակցությամբ՝ «Իմ ֆինանսների ամիս» ծրագրի շրջանակներում:

ԳՊՀ-ից համաժողովին մասնակցեցին Տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհիներ Անի Յավրյանը, Աննա Աֆրիկյանը, Ռուզաննա Խաչատրյանը, Հաշվապահական հաշվառում բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Էմմա Խանամիրյանը ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 2 րդ կուրսի ուսանող Գագիկ Ղարաբաղյանը:

**26.05.2017թ. ԱՆԳԼԵՐԵՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳԼՈՐԱԼ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ԼԵՁՈՒ**

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում ԱՄՆ-ից ժամանած պարոն Նիկոլաս Հյուզիեֆը հանդես եկավ «Անգլերենը՝ որպես գլոբալ հաղորդակցության լեզու» թեմայով դասախոսությամբ:

27.05.2017թ. ԳՊՀ-Ն ՃԱՆԱԶՎԵԼ Է ՄԱՔՈՒՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Գավառի քաղաքապետարանի, Գավառի «Սքայ» ակումբի և «Վորլդ Վիժն. Հայաստան» միջազգային բարեգործական կազմակերպության Գավառի տարածքային ծրագրի համատեղ կազմակերպած «Մաքուր Գավառ-2017» ծրագրի շրջանակում Գավառի պետական համալսարանն արժանացել է «Մաքուր ուսումնական հաստատություն - 2017» մրցանակին:

27.05.2017թ. ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ս. թ. մայիսի 27-ին Երևանի Հյուսիսային պողոտայում կազմակերպվել էր Եվրոպայի օրվան նվիրված տեղեկատվական ցուցահանդես, որին մասնակցում էին նաև ԳՊՀ ուսանողները՝ բուհի պրոռեկտոր Արսեն Ապրոյանի և Արտաքին կապերի և լրատվության բաժնի ավագ մասնագետ Սիրանուշ Խաչատրյանի ուղեկցությամբ:

**31.05.2017թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐԸ
ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ**

Ս. թ. մայիսի 30-ին ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի Ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանողները՝ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Սամվել Ամիրխանյանի և դասախոս Սոնա Բագոյանի ուղեկցությամբ այցելեցին ՀՀ կենտրոնական բանկ, շրջեցին բանկի թանգարանում, մասնագետների հետ քննարկեցին դրամավարկային քաղաքականության հիմնական ուղղությունները:

31.05.2017թ. ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱՆԳԵԼ ԿԱՆՉԵՎԻ ԱՆՎԱՆ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ ԳՊՀ-ՈՒՄ

Ռուսեի համալսարանի հետ իրականացվող պրոֆեսորադասախոսական անձնակազմի ակադեմիական շարժունության ծրագրի շրջանակում ԳՊՀ-ն հյուրընկալել էր օտար լեզվի դասախոսների: Դասախոսությունները կտևեն երկու օր և կնպաստեն ԳՊՀ ուսանողների մասնագիտական և ընդհանուր աշխարհայացքային գիտելիքների ու կարողությունների զարգացմանը:

05.06.2017թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ «ՅՈՒՔՈՍ»-ՈՒՄ

Ս. թ. մայիսի 24-ից հունիսի 4-ը ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի Ինֆորմատիկա և հաշվողական տեխնիկա բաժնի 3-րդ կուրսի ուսանողներն իրենց պրակտիկական անցկացրին «Յուքոմ» ընկերությունում:

14.06.2017թ. ՀԵՐԹԱԿԱՆ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ-ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ԳՊՀ-ՈՒՄ

Հաշվետվությունը ներկայացրեց Վարադատ Ավետիսյանը, ով անդրադարձավ հյուրընկալ բուհում կազմակերպված դասատավության գործընթացին, իրենց կողմից ներկայացված դասախոսություններին և քննարկած մասնագիտական թեմաներին, ներկայացրեց մանրամասներ Ռուսեի համալսարանում իրականացվող ուսումնական և գիտահետազոտական ծրագրերի, մասնավորապես՝ ճարտարագիտության ոլորտին առնչվող առարկաների, ուսուցման մեթոդների, ուսումնական ռեսուրսների վերաբերյալ:

15.06.2017թ. ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ՝

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԲՈՒՀ

Ս. թ. հունիսի 15-ին կայացավ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովի նիստը: Նիստի օրակարգում ընդգրկված էր ԳՊՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման հարցը: ԳՊՀ-ից նիստին մասնակցեցին բուհի ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, գլխավոր հաշվապահ Գուրգեն Մուրադյանը:

Հանձնաժողովի նախագահ պարոն Սամվել Ավետիսյանը հրապարակեց Հավատարմագրման հանձնաժողովի որոշումը՝ ԳՊՀ-ին 4 տարի ժամկետով ինստիտուցիոնալ հավատարմագրում շնորհելու մասին:

16.06.2017թ. ՀԱՐԱՏԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ՝ ԺԱՄԱՆԱԿԻ ՊԱՀԱՆՋ

2017 թվականի հունիսի 11-15-ը Վրաստանի Հանրապետության Թբիլիսիի Իլիայի պետական և Վրաստանի համալսարաններում կայացավ Եվրոպական Միության «TEMPUS. New LeAGUe-Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում հարատև կրթությունը խթանող ցանցի ներդրում» ծրագրի ամփոփիչ աշխատաժողովը:

ԳՊՀ-ից աշխատաժողովին մասնակցեցին պրոռեկտոր Արսեն Ապրոյանը և ակադեմիական քաղաքականության վարչության մասնագետ Լիլիթ Թոռչյանը:

**18.06.2017թ. ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍԸ՝ ԻՏԱԼԻԱՅԻ ՎԵՆԵՏԻԿԻ
ԵՎ ՊԱՎԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

Ս. թ. հունիսի 18-ին, ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում բուհի բանասիրական ֆակուլտետի Օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Գայանե Սարգսյանը ներկայացրեց հաշվետվություն-շնորհանդես՝ Եվրոպական միության «Erasmus Mundus. Hermes» և «Erasmus+» ծրագրերի շրջանակներում իրականացրած ակադեմիական շարժունության վերաբերյալ:

Գայանե Սարգսյանը Իտալիայի Վենետիկի Կա Ֆոսկարի համալսարանում իրականացրել է հետազոտություն՝ ռուսերենի՝ որպես օտար լեզվի ուսուցման բնագավառում, ինչպես նաև դասավանդել է ռուսերեն իտալախոս լսարանում:

**22.06.2017թ. ԳՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ՝ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ
ՎԱՌՆԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

ԳՊՀ Հրաչյա Աճառյանի անվան լսարանում արտերկրում ուսանելու իրենց փորձը ներկայացրին «Էրազմուս+» ծրագրի շրջանակում Բուլղարիայի Վառնայի կառավարման համալսարանում հինգ ամիս ուսանած ԳՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում բաժնի 3-րդ կուրսի ուսանող Խաչիկ Գափոյանը և Հաշվապահական հաշվառում բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Քրիստինե Միրիմանյանը:

22.06.2017թ. ԻՄ ԱՆԿԵՂԾ «ԵՍ»-Ը...

Այսօր ԳՊՀ Հեռակա ուսուցման ֆակուլտետի Հայոց լեզվի և գրականության բաժնի 4-րդ կուրսի ուսանողները կազմակերպել էին ցերեկույթ՝ նվիրված մարդկային անկեղծ «ես»-ի բացահայտմանը:

Ցերեկույթին ներկա էին Գեղարքունյաց թեմի Գավառ քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու քահանա Տեր Գնել քահանա Մարտիրոսյանը, բուհի պրոֆեսորադասախոսական, վարչական անձնակազմի ներկայացուցիչներ, ուսանողներ:

22.06.2017թ. ԵՍ ԵՄ՝ ԵՎ «ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ»

Ս. թ. հունիսի 22-ին ՀՀ պաշտպանության նախարարությունում «Ազգ-բանակ» հայեցակարգի շրջանակում «Ես եմ» և «Պատիվ ունեմ» ծրագրերի հանրային քննարկման նպատակով կայացավ հանդիպում հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ղեկավարների, պրոռեկտորների և ուսանողական խորհուրդների նախագահների հետ: Հանդիպմանը մասնակցեցին ՀՀ պաշտպանության ու կրթության և գիտության նախարարներ Վիգեն Սարգսյանը և Լևոն Մկրտչյանը:

ԳՊՀ-ից հանդիպմանը մասնակցեցին բուհի ղեկավար Ռուզաննա Հակոբյանը, պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, ուսանողական խորհրդի նախագահ Արեգ Սինանյանը:

**23.06.2017թ. ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ՝ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԵՎ ԻՍՊԱՆԻԱՅԻ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ**

ԳՊՀ-ն Եվրոպական միության «էրազմուս+» ծրագրի շրջանակում դասախոսների և ուսանողների ակադեմիական շարժունություն է իրականացնում Բուլղարիայի Հանրապետության Անգել Կանչևի անվան Ռուսեի և Իսպանիայի Թագավորության Կոռունայի համալսարանների հետ:

Հերթական ակադեմիական շարժունության մասնակցներ, Բանասիրական ֆակուլտետի Օտար լեզվի և գրականության ամբիոնի դասախոսներ Աննա Բալագոզյանը, Սաթենիկ Տիգրանյանը և նույն ամբիոնի դասախոս, Արտաքին կապերի և լրատվության բաժնի ավագ մասնագետ Սիրանուշ Խաչատրյանը հանդես եկան Բուլղարիայի Անգել Կանչևի անվան Ռուսեի և Իսպանիայի Կոռունայի համալսարաններում դասախոսական աշխատանքի վերաբերյալ հաշվետվություններով:

**04.07.2017թ. ԳՊՀ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԸ՝ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՈՖԻԱՅԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ**

Ս. թ. հունիսի 18-ից 30-ը Բուլղարիայի Հանրապետության Սոֆիայի տեխնիկական համալսարանում, Եվրոպական միության «ERASMUS+DOCMEN» ծրագրի շրջանակներում, տեղի ունեցավ վերապատրաստում ծրագրի անդամ համալսարանների պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների համար:

ԳՊՀ-ից վերապատրաստմանը մասնակցեցին Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Հենրիկ Մելիքյանը, նույն ամբիոնի դասախոս Մամիկոն Հակոբյանը և Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ, դասախոս Վարազդատ Ավետիսյանը:

05.07.2017թ. ԲԱՐԻ ԵՐԹ ԳՊՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ 20-ՐԴ ՍԵՐՆԴԻՆ

ԳՊՀ-ում հանդիսավորությամբ նշվեց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 22-ամյակը, և կայացավ շրջանավարտների 20-րդ սերնդին դիպլոմների հանձնման հիշարժան արարողությունը:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ սիյուռքի նախարար, ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ տիկին Հրանուշ Հակոբյանը, Գեղարքունիքի մարզպետ պարոն Կարեն Բոթոյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ տեր Կիրակոս Վարդապետ Դավթյանը, ՀՀ պաշտպանության նախարարության 2-րդ բանակային կորպուսի հրամանատար պարոն Դավիթ Մանուկյանը, Գավառի տարածքային զինվորական կոմիսար պարոն Արմեն Հովսեփյանը, Գավառի երկրապահ կամավորականների միության նախագահ պարոն Աշոտ Գասպարյանը, Գեղամա հեռուստաընկերության տնօրեն պարոն Արմեն Գալստյանը, ծնողներ, հյուրեր:

11.07.2017թ. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԹՈՒՐԻՆՈՒՄ

2017թ. հուլիսի 10-ից իտալիայի Թուրինի պոլիտեխնիկական համալսարանում, Եվրոպական միության «ERASMUS+DOCMEN» ծրագրի շրջանակներում, մեկնարկել է երկշաբաթյա հերթական վերապատրաստումը ծրագրի անդամ համալսարանների պրոֆեսորադասախոսական անձնակազմի ներկայացուցիչների համար:

ԳՊՀ-ից վե.րապատրաստմանը մասնակցում են ուսումնագիտական գծով պրոռեկտոր Նելլի Կուտուզյանը, Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ Վարազդատ Ավետիսյանը և Ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Շուշան Բաղդոյանը:

27.08.2017թ. ՀԱՆԴԻՊՈՒՄ ԳՊՀ ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԵՑԻՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ԳՊՀ հիմնադիր ռեկտոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրանտ Խաչատուրի Հակոբյանը ձևավորել է ավանդույթ՝ յուրաքանչյուր ուսումնական տարվա նախօրեին կազմակերպել հանդիպումներ ԳՊՀ ընդունված առաջին կուրսեցիների և նրանց ծնողների հետ:

28.08.2017թ. ԳՊՀ ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐԸ՝ «ԲԱՁԵ-2017» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՀԱՎԱՔԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Սույն թվականի օգոստոսի 21-ին Հայաստանի Հանրապետության Ծաղկաձոր քաղաքում մեկնարկեց Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից ավանդաբար կազմակերպվող «Բազե-2017» համահայկական երիտասարդական հավաքը: «Բազե-2017» համահայկական հավաքին Գավառի պետական համալսարանը ներկայացնող ջոկատը հանդես եկավ կապույտ ճակատում:

ԳՊՀ-ն ներկայացնող թիմը վաստակեց 2 բրոնզե մեդալ ֆուտբոլ և վոլեյբոլ մարզաձևերում, իսկ միջճակատային մրցույթում պարանի ձգումով գրավեց 2-րդ տեղը՝ արժանանալով պատվոգրերի:

31.08.2017թ. ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ ՄԱՅՐ ԱԹՈՒ ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆՈՒՄ

Ս. թ. օգոստոսի 31-ին՝ 2017-2018 թթ. ուսումնական նոր տարեշրջանի նախօրեին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ հանդիսապետությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության կարգ: Կրթական ոլորտի երախտավորների օրհնության ավանդության սկիզբը դրվել է 2010 թվականին: Մայր Տաճարում արարողությանը ներկա էին ՀՀ Ազգային Ժողովի կրթության, գիտության, սպորտի և երիտասարդության մշտական հանձնաժողովի անդամներ, ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակիցներ, բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորներ, պետական կրթական կառույցների և մարզպետարանների ներկայացուցիչներ, մարզերի հանրակրթական դպրոցների և նախակրթարանների տնօրեններ:

Օրհնության կարգին մասնակցեցին նաև ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը և բուհի Արտաքին կապերի և լրատվության բաժնի վարիչ Պապին Մուրադյանը:

**Ն. Ա. Միրիբյան՝
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության
բաժնի մասնագետ**

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐՆԵՐԻ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՈՒ

Ազգանուն, անուն, հայրանուն	Ծառայողական	Էլեկտրոնային փոստի հասցե
ԳՊՀ-ի Խորհրդի նախագահ Հակոբյան Հրանտիշ Հրանտի	0-60-46-02-01 0264-2-57-75	minister@mindiaspora.am
ԳՊՀ ռեկտոր Հակոբյան Ռուզաննա Խաչիկի	0-60-46-02-01	rector@gsu.am
Ուսումնագիտական գծով պրոռեկտոր Կոտուզյան Նելլի Ալբերտի	0-60-46-04-03	n.kutuzyan@gsu.am
Տնտեսական գծով պրոռեկտոր Ապրոյան Արսեն Հրաչիկի	0-60-46-12-64	a.aproyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկան Ասոյան Թաթուլ Արտիկի	0-60-46-12-44	t.asoyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկան Ավագյան Մարտին Պատվականի	0-60-46-12-55	m.avagyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Ղաջոյան Համլետ Գիրշայի	0-60-46-12-70	h.ghajoyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկան Ամիրխանյան Սամվել Գրիգորի	0-60-46-12-66	s.amirkhanyan@gsu.am
Հեռակա ուսուցման ֆակուլտետի դեկանատ	0-60-46-12-90	faculty-of-correspondence-course@gsu.am
Ակադեմիական քաղաքականության վարչություն Ղարիբյան Ալինա Ամբիկի	0-60-46-12-42	a.gharibyan@gsu.am
Ուսանողական խորհրդի նախագահ Սինանյան Արեգ Սամվելի	0-60-46-12-60	a.sinanyan@gsu.am
Բանասիրական ֆակուլտետի դեկանի տեղակալ Սարգսյան Ռուզաննա Մարատի	0-60-46-12-40	r.sargsyan@gsu.am
Տնտեսագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Հերգնյան Մարիամ Նորիկի	0-60-46-12-60	m.hergnyan@gsu.am
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի տեղակալ Գևորգյան Գոհար Վոլոդյայի	0-60-46-12-70	g.gevorgyan@gsu.am
Բնագիտական ֆակուլտետի դեկանի տեղակալ Գարեյան Մելանյա Վոլոդյայի	0-60-46-12-50	m.gareyan@gsu.am
Որակի ապահովման բաժնի վարիչ Մայիլյան Անուշ Տոիկի	0-60-46-12-43	a.mayilyan@gsu.am
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ Ավետիսյան Վարազդատ Կորյունի	0-60-46-12-56	v.avetisyan@gsu.am
Գլխավոր հաշվապահ Մուրադյան Գուրգեն Գևորգի	0-60-46-12-46	g.muradyan@gsu.am
Կադրերի և հատուկ բաժնի վարիչ Սաֆարյան Խաչատուր Ժորայի	0-60-46-12-41	kh.safaryan@gsu.am
Արհմիության նախագահ Սիրունյան Լյովա Գուրգենի	0-60-46-12-49	l.sirunyan@gsu.am
Ավագ պարեն Զաքոյան Տարիել Հրաչիկի	0-60-46-12-86	t.zaqoyan@gsu.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՊՀ ռազմավարական ծրագրի կատարման ընթացքը, արդյունքները, խնդիրները.....	3
Ընդհանուր տեղեկություններ համալսարանի մասին.....	9
Միջազգային համագործակցություն.....	42
Դասախոսների գործուղումներ.....	94
Ուսումնագիտական աշխատանքներ.....	98
Ֆինանսական վերլուծություն.....	115
Բանասիրական ֆակուլտետ.....	122
Բնագիտական ֆակուլտետ.....	139
Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ.....	158
Տնտեսագիտական ֆակուլտետ.....	173
Հեռակա ուսուցման ֆակուլտետ.....	199
Ակադեմիական քաղաքականության վարչություն.....	204
Որակի ապահովման բաժին.....	212
ԳՊՀ արտաքին կապերի և լրատվության բաժին	216
Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին.....	220
ԳՊՀ գրադարան	224
ԳՊՀ իրավաբանական կլինիկա.....	230
ԳՊՀ արհեստակցական կազմակերպություն.....	233
Ուսանողական խորհուրդ և ուսանողական գիտական ընկերություն.....	234
Տնտեսատեխնիկական գործունեություն.....	237
ԳՊՀ հիշարժան միջոցառումներ.....	240
Տեղեկատու.....	264

CONTENTS

The Objectives, Outcomes and Process of GSU Strategic Program Implementation	3
General Information about the University.....	9
International Cooperation.....	42
Business Trips of the Academic Staff.....	94
Educational and Scientific Activities.....	98
Financial analysis.....	115
Faculty of Philology.....	122
Faculty of Natural Sciences.....	139
Faculty of Humanities.....	158
Faculty of Economics.....	173
Faculty of Part-Time Education.....	199
Academic Policy Department.....	204
Quality Assurance Department.....	212
GSU Foreign Relations and Information Department.....	216
Information Technology Department.....	220
GSU Library.....	224
GSU Legal Clinic.....	230
GSU Trade Union.....	233
Student's Council and Student Scientific Society.....	234
Economic and Technological activity.....	237
Memorable events of GSU.....	240
Information leaflet.....	264

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
GAVAR STATE UNIVERSITY

**2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ,**

ԻՆՔՆԱՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ACTIVITY REPORT
OF THE 2016-2017 ACADEMIC YEAR,
SELF-ASSESSMENT REPORT

ԳՊՀ

Գեղարքունիքի մարզ,
քաղաք Գավառ, Հրանտ Հակոբյան 1,
հեռ. (37460) 46-02-01
կայք. www.gsu.am
էլ. փոստի հասցե - infogsu@mail.ru
info@gsu.am

GSU

Gegharkunik Marz
1 Hrant Hakobyan Str., Gavar
tel. (37460) 46-02-01
website: www.gsu.am
E-mail - infogsu@mail.ru
info@gsu.am